Թողարկման 15-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2008

փետրվար

թիվ 2 (114)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Ալֆա-Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ն գրանցելու, «Բիստրայա Պոչտա», «Ինտերէքսպրես», «Կոնտակտ» և «Լիդեր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու և արժեթղթերի հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիաների գործողությունը դադարեցնելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու, ներկայացուցչությունը հաշվառելու, ինչպես նաև մի շարք ՓԲԸ-ների նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 29Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 422-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 423-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 126-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 426-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

31 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 11-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 13-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

35 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 14-Ն որոշումը «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը հաստատելու մասին»

68 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 15-Ն որոշումը «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին»

96 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 16-Ն որոշումը «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին»

151 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 17-Ն որոշումը «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատելու մասին»

186 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 18-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 713-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

186 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 22-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

188 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 23-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել և լիցենզավորվել է*** «Ալֆա-Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (որոշում թիվ 30Ա):
- ***«Բիստրայա Պոչտա» և «Ինտերէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Դեպի տուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը (որոշումներ թիվ 33Ա, 34Ա):
- ***Դադարեցվել է*** «Ալինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված՝ բրոքերային և «Ամերիա Ինվեստ» փակ բաժնետիրական ընկերությանը տրված արժեթղթերի հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիաների գործողությունը (որոշումներ թիվ 36Ա, 41Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Հարութ-Հակոբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 39Ա):
- ***Հաշվառել է*** «Էկումենիկ Եկեղեցական Փոխատվական Ֆոնդ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Վարդենիսի ներկայացուցչությունը (որոշում թիվ 40Ա):
- ***«Կոնտակտ» և «Լիդեր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Փարվանա վճարահաշվարկային կազմակերպություն» և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 49Ա, 54Ա):
- ՀՀ արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու համար «Գոլդ Բոնդ» և «Կապիտալ Ինվեստ» փակ բաժնետիրական ընկերություններին ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/171Ա, 1/172Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 29Ա որոշմամբ 2008 թվականի փետրվարի 5-ից ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 6%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 9%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝ 3%:***

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ գլուխները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.02.08 թ. (ՀՀԳՏ N5 (279), 15.02.08):

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Կանոնակարգ 2-ի 52-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«52. ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա միջոցների չափի հաշվարկի հաշվետու երկշաբաթյա ժամանակահատվածը 2008 թ. փետրվարի 27-ից ընդգրկում է չորեքշաբթիից երեքշաբթի ընկած 14 օրերը, իսկ փաստացի պահուստավորված միջոցների հաշվարկն ընդգրկում է հաշվետու երկշաբաթյա ժամանակահատվածի ավարտին հաջորդող 14 օրերը: Ընդ որում, փաստացի պահուստավորման վերջնաժամկետ է համարվում 14-րդ օրվա՝ Կենտրոնական բանկի գործառնական օրվա ավարտը:»:

1.2. Կանոնակարգ 2-ը լրացնել նոր 52.1 կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«52.1. Արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա միջոցների չափի հաշվարկի հաշվետու երկշաբաթյա ժամանակահատվածը 2008 թ. փետրվարի 27-ից ընդգրկում է չորեքշաբթիից երեքշաբթի ընկած 14 օրերը, իսկ փաստացի պահուստավորված միջոցների հաշվետու երկշաբաթյա ժամանակահատվածը՝ առաջին չորեքշաբթիին հաջորդող հինգշաբթիից չորեքշաբթի ընկած 14 օրերը: Ընդ որում, փաստացի պահուստավորման վերջնաժամկետ է համարվում 14-րդ օրվա՝ Կենտրոնական բանկի գործառնական օրվա ավարտը:»:

1.3. Կանոնակարգ 2-ի 53.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53.1. Պարտադիր պահուստավորման ենթակա չեն ներգրավված այն նպատակային միջոցները, որոնք Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով համարվել են նպատակային ծրագրերի ֆինանսավորման նպատակով ներգրավված (այսուհետ՝ նպատակային միջոցներ): Որպեսզի նպատակային միջոցների գծով պարտադիր պահուստավորման մասհանումներ չկատարվեն, բանկերը նպատակային միջոցների ներգրավման պայմանագրերը և նպատակային միջոցների հաշվին նպատակային ծրագրերի ֆինանսավորման/տեղաբաշխման պայմանագրերը կամ պայմանագրերի օրինակելի ձևերը (այսուհետ՝ տեղաբաշխման պայմանագրեր) ներկայացնում են Կենտրոնական բանկ: Փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտք լինելու պահից 30 օրացուցային օրվա ընթացքում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում նպատակային միջոցների վերաբերյալ: Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հավանության արժանանալու դեպքում, նշված միջոցները համարվում են նպատակային ծրագրերի ֆինանսավորման նպատակով ներգրավված, և խորհրդի որոշման ընդունման օրվա դրությամբ ամբողջ հաշվետու երկշաբաթյա ժամանակաշրջանից սկսած բանկերը դրանց դիմաց պահուստավորում չեն իրականացնում:

Նպատակային միջոցներ են համարվում բանկերի կողմից ներգրավված այն միջոցները, որոնք բավարարում են հետևյալ պայմաններին միաժամանակ.

1. ներգրավվել են ֆիզիկական անձ չհանդիսացող անձանցից/սուբյեկտներից, և ներգրավվել են ավելի քան մեկ տարի ժամկետով, և

2. ներգրավվել են Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով ՀՀ տարածքում իրականացվող նպատակային երկարաժամկետ ծրագրերի ֆինանսավորման նպատակով, և

3. մեկ ծրագրով/պայմանագրով փաստացի ներգրավված միջոցների հանրագումարը (մայր գումարը) գերազանցում է 300 միլիոն ՀՀ դրամը: Ընդ որում, Կենտրոնական բանկը հիմք է ընդունում միջոցների տրամադրման պայմանագրում նշված գումարը, անկախ դիմելու պահին միջոցների մնացորդի գումարի չափից:

Այն դեպքում, երբ միջոցների ներգրավման պայմանագրերը երկարաձգվել են, ապա հիմք է ընդունվում երկարաձգման պայմանագրով նախատեսված ժամկետը:

Այն դեպքում, երբ միջոցների ներգրավման պայմանագրերը երկարաձգվել են, ապա հիմք է ընդունվում երկարաձգման պայմանագրով նախատեսված գումարը:

Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով նախկինում նպատակային ճանաչված ներգրավված միջոցները կամ դրանց մի մասը չեն ուղղվել Կենտրոնական բանկ ներկայացված նպատակային միջոցների ներգրավման և տեղաբաշխման պայմանագրերով նախատեսված ծրագրերի ֆինանսավորմանը կամ օգտագործվել են ծրագրերով նախատեսված պայմաններից զգալի շեղումներով, բանկը ներգրավված նպատակային միջոցների գծով պարտադիր պահուստավորումն իրականացնում է սույն կանոնակարգով սահմանված չափով: Ընդ որում, այդ միջոցների պահուստավորումը վերսկսվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմանը հաջորդող պարտադիր պահուստավորման հերթական ժամանակահատվածի սկզբից:»:

1.4. Կանոնակարգ 2-ը լրացնել նոր 53.2 և 53.3 կետերով հետևյալ խմբագրությամբ.

«53.2. Եթե բանկի ներկայացված պայմանագրով ծրագիրը դադարում է Կենտրոնական բանկի կողմից միջոցները նպատակային համարելու քննարկման համար սահմանված ժամկետում, բանկի կողմից ներկայացված փաստաթղթերը վերադարձվում են՝ առանց քննարկելու: Փաստաթղթերը առանց քննարկելու վերադարձնելու դեպքում բանկի ներգրավված միջոցները պահուստավորումից չեն ազատվում:»:

«53.3. Այն դեպքերում, երբ բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում լրացուցիչ պարզաբանման ենթակա հարցեր են առաջանում, սույն որոշման 53.1 կետում նշված 30-օրյա ժամկետը կասեցվում է մինչև պարզաբանման ենթակա հարցերը պարզելը: 30-օրյա ժամկետը կասեցնելու կամ կասեցումը հանելու մասին բանկը տեղեկացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի գրությամբ: Կասեցումը հանելու պահից 30-օրյա ժամկետը սկսվում է հաշվարկվել կասեցումից հետո մնացած օրերի համար:»:

1.5. Կանոնակարգ 2-ը լրացնել նոր՝ VII գլխով հետևյալ խմբագրությամբ.

«Գլուխ VII. Անցումային դրույթներ

63. 2008 թվականի փետրվարի 14-ից 27-ը հաշվետու երկշաբաթյա ժամանակահատվածում ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց փաստացի պահուստավորումն իրականացվում է փետրվարի 15-ից 28-ը ընկած երկշաբաթյա ժամանակահատվածում, իսկ 2008 թվականի փետրվարի 27-ից մարտի 11-ը ընկած երկշաբաթյա ժամանակահատվածում փաստացի պահուստավորումն իրականացվում է փետրվարի 13-ից 26-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը՝ բացառությամբ 1.1 և 1.2 կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2008 թվականի փետրվարի 27-ից:

3. 1.3, 1.4 կետերը տարածվում են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելու պահը բանկերի կողմից կնքված և գործող պայմանագրերի վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 դեկտեմբերի 2007 թ., N 422-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 126-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 126-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. Կանոնակարգ 3-ի հավելված 2-ի 2և թիվ 4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի (կցվում է):

1.2. Կանոնակարգ 3-ի 34-րդ կետում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի մարտի 10-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 դեկտեմբերի 2007 թ., N 423-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. դեկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.02.08 թ. (ՀՀԳՏ N5 (279), 15.02.08):

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 423-Ն որոշմամբ

Ձև թիվ 4 (14-օրյա)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը ____ թ-ից մինչև ____ թ.

(հազար դրամ)

Ամսաթիվ	Ռեզիդենտներից ներգրավված միջոցներ				Ոչ ռեզիդենտներից ներգրավված միջոցներ								Ընդամենը ներգրավված միջոցներ				Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում դրամով բացված ընթացիկ (մասնակցային) հաշվի մնացորդը	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՄՆ դոլարով բացված ընթացիկ (մասնակցային) հաշվի մնացորդը	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում այլ արտարժույթով բացված ընթացիկ (մասնակցային) հաշվի մնացորդը	Նպատակային ծրագրերի ֆինանսավորման նպատակով ներգրավված միջոցներ, որոնք ենթակա չեն պարտադիր պահուստավորման			
					Ընդամենը				Այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերից													
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ (2+6)	ԱՄՆ դոլար (3+7)	Եվրո (4+8)	Այլ արտարժույթ (5+9)				ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
???													0	0	0	0		x	x				
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!													0	0	0	0							
#VALUE!	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x			x	x	x	x
Միջինը	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ենթակա է պահուստավորման	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	0	0	0	0	x	x	x	x	x	x	x

ՀՀ դրամով ներգրավված միջոցների միջին մնացորդը նախորդ երկշաբաթյա ժամանակահատվածի համար	

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____

Գլխավոր հաշվապահ _____

Կ. Տ.

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իգ[1]» և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի ««Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, թերտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին», «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության», «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգերը հաստատելու մասին» թիվ 75-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագրից «թերտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխման,» բառերը հանել:

2. Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգը» նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է)»:

3. Որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, թերտեղաբաշխված պարտատոմսերի տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման» կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է)»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը, բացառությամբ սույն որոշման հավելված 1-ով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման» կարգի պարտատոմսերի հետգնման աճուրդի գործառույթների իրականացման վերաբերյալ դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 2008 թվականի սեպտեմբերի 20-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
29 դեկտեմբերի 2007 թ., N 426-Ն

Հավելված 1

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՀԵՏԳՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգը:

2. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են.

բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

թողարկող՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. դեկտեմբերի 28-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.02.08 թ. (ՀՀԳՏ N5 (279), 15.02.08):

պետական պարտատոմս (հետագայում՝ պարտատոմս)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից թողարկվող պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, ինչպես նաև հետագայում թողարկվող և շրջանառվող պետական այլ պարտատոմսեր, եթե տվյալ տեսակի պարտատոմսի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված կլինի, որ սույն կարգը տարածվում է տվյալ պարտատոմսի վրա.

տեղաբաշխման աճուրդ՝ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որի ժամանակ պարտատոմս ձեռք բերելու նպատակով պոտենցիալ գնորդները ներկայացնում են հայտեր.

հետգնման աճուրդ՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի հետգնման նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որի ժամանակ պարտատոմս վաճառելու նպատակով պոտենցիալ վաճառողները ներկայացնում են հայտեր.

պահառու՝ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք. պահառուի գործառույթներն իրականացնում է բանկը.

գործակալ՝ պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր կնքած առևտրային բանկ, վարկային կազմակերպություն, ֆինանսական այլ կազմակերպություն.

դիլեր՝ պարտատոմսերի շուկայում դիլերի գործառույթների կատարման մասին պայմանագիր կնքած առևտրային բանկ, վարկային կազմակերպություն, ֆինանսական այլ կազմակերպություն.

ներդրող՝ յուրաքանչյուր իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սեփականության իրավունքով ձեռք է բերում պարտատոմսեր և չի հանդիսանում գործակալ (դիլեր). սույն կարգի իմաստով ներդրող է հանդիսանում նաև գործակալը (դիլերը) և գործակալ (դիլեր) չհանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկը, որը սույն կարգի համաձայն պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ պարտատոմսեր է ձեռք բերում կամ հետգնման ժամանակ պարտատոմսեր է վաճառում գործակալի (դիլերի) միջոցով.

գանձապետական պահառու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից պարտատոմսերի անմիջական վաճառքի, ներդրողներին պատկանող պարտատոմսերի հաշվառման և սպասարկման համակարգ.

աշխատանքային խումբ՝ տեղաբաշխման, հետգնման և հետգնման աճուրդի անցկացման նպատակով թողարկողի և բանկի մեկական ներկայացուցիչներից կազմված խումբ, որի իրավասությունները և կազմը հաստատում է բանկի նախագահը.

էլեկտրոնային հաղորդագրություն՝ բանկի կողմից հաստատված հատուկ ֆորմատներով կազմված էլեկտրոնային ստանդարտացված հաղորդագրություն, որի միջոցով ներկայացվում են աճուրդի հայտերը, դեպո հանձնարարականները, դրանց ընդունման, կատարման, մերժման և այլ հաղորդագրությունները:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Բանկը, որպես Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործակալ, հիմք ընդունելով պարտատոմսերի թողարկման վերաբերյալ թողարկողի հրամանը, պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի պարագայում՝ նաև տեղաբաշխման աճուրդի կազմակերպման մասին հանձնարարագիրը, կազմակերպում է պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդը:

4. Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի մասնակիցներ են դիլերները, գանձապետական պահառուն: Հայաստանի Հանրապետության պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի մասնակիցներ են գործակալները, դիլերները:

5. Ներդրողները, այդ թվում՝ նաև գործակալ (դիլեր) չհանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը (այսուհետ՝ գործակալ (դիլեր) չհանդիսացող բանկ), տեղաբաշխման աճուրդին կարող են մասնակցել իրենց հետ պայմանագիր կնքած գործակալի (դիլերի) միջոցով՝ ներկայացնելով նրան պարտատոմսերի ձեռքբերման հայտ: Գործակալը (դիլերը), որը գործակալ (դիլեր) չհան-

դիսացող բանկի համար տեղաբաշխման աճուրդի ժամանակ ձեռք է բերել պարտատոմսեր, պարտավոր է աճուրդի ավարտից հետո նույն օրվա ընթացքում դրանք փոխանցել պահառուի մոտ վարվող գործակալ (դիլեր) չհանդիսացող բանկի դեպո հաշվի վրա: Դրամական հաշվարկները կատարվում են գործակալ (դիլեր) չհանդիսացող բանկի և գործակալի (դիլերի) միջև կնքված պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում:

Գործակալը (դիլերը) ներդրողի կարգավիճակով կարող է մասնակցել տեղաբաշխման աճուրդին նաև այլ գործակալի (դիլերի) միջոցով՝ համաձայն սույն կետում գործակալ (դիլեր) չհանդիսացող բանկերի համար սահմանված ընթացակարգերի:

6. Տեղաբաշխման աճուրդի մասնակիցները նախորդ աշխատանքային օրվա ժամը 15.00-ից մինչև աճուրդի օրվա ժամը 10.30-ը ներկայացնում են պարտատոմսերի ձեռքբերման երկու տեսակի հայտ: Առաջին հայտն ընդգրկում է պարտատոմսերի գնման վերաբերյալ աճուրդի մասնակիցների սեփական առաջարկությունները, երկրորդ հայտը՝ ներդրողների ամփոփված առաջարկությունները: Աճուրդի անցկացման օրվա ժամը 10.30-ից հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում:

7. Տեղաբաշխման աճուրդին ներկայացված հայտերն ընդգրկում են մրցակցային և ոչ մրցակցային առաջարկություններ:

1) Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին ներկայացվող մրցակցային առաջարկության մեջ նշվում է պարտատոմսերի այն ծավալը, որը մասնակիցը ցանկանում է ձեռք բերել աճուրդի ժամանակ և այն գումարը, որով մասնակիցը պատրաստ է ձեռք բերել պարտատոմսերի այդ ծավալը:

2) Հայաստանի Հանրապետության պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին ներկայացվող մրցակցային առաջարկության մեջ նշվում է պարտատոմսերի այն ծավալը, որը մասնակիցը ցանկանում է ձեռք բերել աճուրդի ժամանակ և այն եկամտաբերությունը, որով մասնակիցը պատրաստ է ձեռք բերել պարտատոմսերի այդ ծավալը:

3) Պարտատոմսերի գնման ծավալները պետք է բազմապատիկ լինեն տվյալ պարտատոմսի համար սահմանված քայլին: Բոլոր գումարները նշվում են մեկ դրամի ճշտությամբ: Հայտերի ոչ մրցակցային առաջարկության մեջ նշվում է այն ծավալը, որի չափով աճուրդի մասնակիցը ցանկանում է պարտատոմսեր ձեռք բերել աճուրդում ձևավորված միջին կշռված եկամտաբերությամբ:

8. Տեղաբաշխման աճուրդին հայտերը ներկայացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով՝ աճուրդի մասնակցի մոտ տեղակայված ՍիԲիէյնեթ համակարգի աշխատանքային կայանից. ընդ որում, յուրաքանչյուր տեսակի հայտի համար (սեփական, ներդրողի) կազմվում է առանձին հաղորդագրություն: Աճուրդի նույն մասնակցից երկու միատեսակ հայտ ստանալու դեպքում ընդունվում է պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի (այսուհետև՝ համակարգ) կողմից առաջինը ընդունված հայտը: Համակարգ մուտքագրված հայտը չի կարող հետ կանչվել, և դրանում փոփոխություններ չեն կարող կատարվել:

9. Տեղաբաշխման աճուրդի մասնակիցների հայտերը համակարգ մուտքագրվելու պահին անմիջապես ստուգվում են համակարգի կողմից: Տեղաբաշխման աճուրդի պայմանների և (կամ) առանձին հայտին ներկայացվող սահմանափակումների խախտման դեպքում հայտը մերժվում է, ինչի մասին աճուրդի մասնակիցը տեղեկացվում է համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության միջոցով: Հայտը մերժված լինելու դեպքում աճուրդի մասնակիցը կարող է մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը ներկայացնել նոր հայտ:

10. Եթե տեղաբաշխման աճուրդի մասնակիցը իր մոտ տեղակայված ՍիԲիէյնեթ-ի աշխատանքային կայանից տարբեր տեսակի վթարների հետևանքով (կապի խզում, մասնակցի հսկողության ներքո գործող տեխնիկածրագրային ապահովման անսարքություն, այլ) չունի հայտերը ուղարկելու հնարավորություն կամ նա իր մոտ տեղակայված աշխատանքային կայանից հայտը ուղարկելուց հետո 10 րոպեի ընթացքում չի ստանում ընդունման (մերժման) մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունը, ապա նա այդ մասին տեղեկացնում է բանկի կողմից լիազորված աշխատակիցներին և հայտը (հայտերը) մուտքագրում է բանկում տեղադրված հատուկ աշխատանքային կայանից մինչև ժամը 10.30-ը: Տեղաբաշխման աճուրդի մասնակիցը հատուկ աշխատանքային կայանից հայտը մուտքագրելուց հետո այդ մասին անմիջապես տեղեկացնում է բանկի կողմից լիազորված աշխատակիցներին:

11. Տեղաբաշխման աճուրդի օրվա ժամը 10.30-ին համակարգը ավտոմատացված եղանակով դադարեցնում է հայտերի ընդունումը: Մինչև համակարգի կողմից հայտերի ընդունման ավարտը հայտերը չեն կարող դիտարկվել:

12. Եթե աշխատանքային խումբը սույն կարգի 10-րդ կետի համաձայն ստացված տեղեկությունների հիման վրա պարզում է, որ տեղաբաշխման աճուրդի օրվա ժամը 10.20-ի դրությամբ աճուրդի պոտենցիալ մասնակիցների 30%-ը կամ ավելին տեխնիկական պատճառներով չեն կարողացել ներկայացնել հայտեր, ապա աշխատանքային խումբը այդ մասին անմիջապես տեղեկացնում է թողարկողին: Հաշվի առնելով թողարկողի կողմից ընդունված որոշումը (աճուրդը շարունակել, վերսկսել նույն օրը ավելի ուշ ժամի, տեղափոխել հաջորդ աշխատանքային օր կամ չեղյալ հայտարարել)՝ աշխատանքային խումբը կամ շարունակում է աճուրդային գործընթացը, կամ գործարկում է տեղաբաշխման աճուրդի վերսկսման, տեղափոխման կամ չեղյալ համարելու գործընթացը, որի մասին անմիջապես (բայց ոչ ուշ, քան մինչև աճուրդի օրվա ժամը 11:30-ը) ՍիԲիէյնեթ համակարգի և/կամ հեռախոսի միջոցով տեղեկացնում է տեղաբաշխման աճուրդի մասնակիցներին: Աճուրդային գործընթացը շարունակելու դեպքում այն ընթանում է սույն կարգի 13-21-րդ կետերում սահմանված ընթացակարգերի համաձայն: Աճուրդային գործընթացի ընդհատման դեպքում գործում են սույն գլխի 22-րդ կետում սահմանված կանոնները:

13. Հայտերի ընդունման դադարեցման պահից համակարգի կողմից իրականացվում է ընդունված հայտերի ստուգում՝ ըստ թողարկման հրամանով առանձին մասնակցին ներկայացվող պահանջների:

14. Համակարգը ստուգում է աճուրդի մասնակցի դրամական հաշվում բավարար միջոցների առկայությունը՝ հաշվի առնելով նրա համապատասխան հաշվում առկա միջոցների և դեպո հաշվում աճուրդի օրը մարման ենթակա պարտատոմսերի ծավալի հանրագումարը, բացառությամբ գրավադրված և արգելադրված պարտատոմսերի: Համապատասխան միջոցների առկայության դեպքում համակարգն ապահովում է դրանց օգտագործման սահմանափակումը հաշվետիրոջ այլ գործառնությունների համար:

15. Տեղաբաշխման աճուրդի պայմաններից շեղումներով լրացված կամ բավարար միջոցներով չապահովված հայտերն աճուրդից հանվում են (մերժվում են), իսկ աճուրդի համապատասխան մասնակիցներն այդ մասին տեղեկացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով:

16. Ընդունված (չմերժված) հայտերի հիման վրա կազմվում է հավաքական տեղեկագիր՝ համաձայն ձև 3-ի: Աշխատանքային խմբի կողմից վավերացված հավաքական տեղեկագիրը մինչև ժամը 11.00-ը տրամադրվում է թողարկողին ՍիԲիէյնեթ համակարգի միջոցով, իսկ ՍիԲիէյնեթ համակարգի խափանման դեպքում՝ թղթային եղանակով:

17. Ոչ ուշ, քան թողարկման աճուրդի անցկացման օրվա ժամը 12.00-ը, թողարկողը որոշում է պարտատոմսերի տեղաբաշխման սահմանային եկամտաբերությունը և միջին կշռված տարեկան եկամտաբերությունը, որոնց արժեքները կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ, որից հետո թողարկողի հանձնարարագրի հիման վրա, կազմված համաձայն ձև 4-ի, սույն կետով նշված չափանիշները մուտքագրվում են համակարգ: Թողարկողի հանձնարարագիրը բանկին է փոխանցվում ՍիԲիէյնեթ համակարգի միջոցով, իսկ ՍիԲիէյնեթ համակարգի խափանման դեպքում՝ թղթային եղանակով:

18. Սույն կարգի 17-րդ կետում նշված չափանիշները համակարգ մուտքագրվելուց հետո սկսվում է առաջարկությունների բավարարումը: Տեղաբաշխման աճուրդին գանձապետական պահառուի մասնակցելու պարագայում առաջինը բավարարվում է գանձապետական պահառուի կողմից ներկայացված հայտը՝ թողարկման հրամանում նշված սահմաններում, այնուհետև՝ մնացած մասնակիցների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունները՝ թողարկման հրամանում սահմանված սահմաններում (պետական կարճաժամկետ պարտատոմսերի պարագայում դիլերների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների գումարային ծավալը բավարարվում է թողարկման ծավալի 20%-ի սահմաններում, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի պարագայում գործակալների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների գումարային ծավալը բավարարվում է այդ օրը տեղաբաշխման ենթակա ծավալի 20%-ի սահմաններում): Եթե մասնակիցների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների գումարային ծավալն ավելին է, ապա այդ առաջարկությունները բավարարվում են համամասնորեն՝

20%-ի սահմաններում: Ոչ մրցակցային առաջարկությունների բավարարումից հետո սկսվում է մրցակցային առաջարկությունների բավարարումն ամենացածր եկամտաբերությամբ առաջարկություններից սկսած մինչև սահմանային եկամտաբերությամբ որոշված ծավալը: Եթե սահմանային եկամտաբերությամբ բավարարման ենթակա պարտատոմսերի ծավալը զիջում է տվյալ եկամտաբերությամբ առաջարկությունների ծավալին, կատարվում է համամասնական տեղաբաշխում, հակառակ դեպքում բավարարվում է տվյալ սահմանային եկամտաբերությամբ մրցակցային առաջարկությունների ողջ ծավալը: Համամասնական բաշխման արդյունքում գոյացած պարտատոմսերի չբաշխվող ծավալի տեղաբաշխման համար կիրառվում է պատահական ընտրության սկզբունքը՝ ստացված պատահական թվերի գեներատորի միջոցով: Առաջարկությունների համամասնական տեղաբաշխումն իրականացվում է համաձայն ձև 7-ի:

19. Համակարգը հաշվում է տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալն ըստ տեղաբաշխման աճուրդի մասնակցի, ինչպես նաև թողարկողին փոխանցվելիք դրամական միջոցները՝ հաշվի առնելով աճուրդի մասնակցի դեպո հաշիվներում (սեփական և ամփոփ ներդրողների) տեղաբաշխման աճուրդի օրը մարման ենթակա պարտատոմսերի ծավալի առկայությունը և կատարում է դրամական ու դեպո հաշիվներին համապատասխան ծավալով դրամական միջոցների և պարտատոմսերի փոխանցումները: Հաշվարկների հիման վրա ՍիԲիէյնեթ համակարգի միջոցով տեղաբաշխման աճուրդի անցկացման օրվա մինչև ժամը 13.00-ը հայտարարվում են աճուրդի արդյունքները՝ համաձայն ձև 1-ի, իսկ տեղաբաշխման աճուրդի մասնակիցները համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով տեղեկացվում են աճուրդին իրենց կողմից ներկայացված հայտերի վերաբերյալ:

20. Եթե սույն կարգով սահմանված ժամանակահատվածում թողարկողը չի սահմանում տեղաբաշխման աճուրդի գնային պայմանները, ապա բանկն իրավունք ունի աճուրդի անցկացման օրվա ժամը 12.30-ին աճուրդը չեղյալ հայտարարել, որի մասին տեղաբաշխման աճուրդի մասնակիցները տեղեկացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության միջոցով:

21. Տեղաբաշխման աճուրդին ներկայացվող պետական կարճաժամկետ պարտատոմսերի մրցակցային առաջարկության եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն ձև 5-ի, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի գնման գինը՝ համաձայն ձև 6-ի:

22. Տեղաբաշխման աճուրդը նույն օրն ավելի ուշ ժամի վերսկսելու, հաջորդ աշխատանքային օր տեղափոխելու կամ չեղյալ համարելու դեպքում ավտոմատ եղանակով չեղյալ են համարվում տվյալ աճուրդի համար ընդունված հայտերը և հայտեր ներկայացնող մասնակիցները տեղեկացվում են այդ մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով: Աճուրդի մասնակիցների դրամական միջոցների սահմանափակման դեպքում ավտոմատ ձևով հանվում են սահմանափակումները: Տեղաբաշխման աճուրդի վերսկսման կամ տեղափոխման մասին տեղեկանալուց հետո աճուրդի մասնակիցները ներկայացնում են նոր հայտեր՝ սույն գլխում սահմանված ընթացակարգերի համաձայն: Տեղաբաշխման աճուրդը նույն օրն ավելի ուշ ժամի վերսկսելու դեպքում հետաձգման ժամկետով հետաձգվում են նաև սույն գլխում աճուրդի ընթացակարգերին առնչվող այլ ժամկետները:

23. Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի օրը բանկը հաշվետվություններ է ներկայացնում թողարկողին՝ համաձայն ձև 2-ի, ձև 8-ի, ձև 9-ի և ձև 10-ի:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԵՏԳՆՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

24. Բանկը, որպես Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործակալ, հիմք ընդունելով թողարկողի հետգնման աճուրդի կազմակերպման մասին հանձնարարագիրը՝ կազմակերպում է պարտատոմսերի հետգնման աճուրդ:

25. Հետգնման առարկա կարող են լինել միայն շրջանառության մեջ գտնվող ազատ կարգավիճակով պարտատոմսերը: Հետգնման աճուրդին կարող են մասնակցել միայն գործակալները:

26. Ներդրողները, այդ թվում նաև գործակալ չհանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը (այսուհետ՝ գործակալ չհանդիսացող բանկ) հետգնման աճուրդին կարող են մասնակցել իրենց հետ պայմանագիր կնքած գործակալի միջոցով՝ ներկայացնելով նրան պարտատոմսերի հետգնման հայտ: Գործակալը, որը գործակալ չհանդիսացող բանկի համար հետգնման աճուրդի ժամանակ վաճառել է պարտատոմսեր, պարտավոր է աճուրդի ավարտից հետո նույն օրվա

ընթացքում գործակալ չհանդիսացող բանկի վաճառված պարտատոմսերի համար ստացված դրամական միջոցները փոխանցել բանկում վարվող առևտրային բանկի թղթակցային հաշվի վրա և չվաճառված պարտատոմսերը փոխանցել առևտրային բանկի պահառուի մոտ վարվող դեպո հաշվի վրա: Գործակալ չհանդիսացող բանկի հետգնման համար նախատեսված պարտատոմսերը փոխանցվում են գործակալի՝ պահառուի մոտ վարվող ամփոփ ներդրողների դեպո հաշվի վրա՝ գործակալ չհանդիսացող առևտրային բանկի և գործակալի միջև կնքված պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում: Դիլերը ներդրողի կարգավիճակով կարող է մասնակցել հետգնման աճուրդին գործակալի միջոցով՝ համաձայն գործակալ չհանդիսացող բանկերի համար սույն գլխում սահմանված ընթացակարգերի:

27. Հետգնման աճուրդի օրվա մինչև ժամը 10.30-ը թողարկողն իր դրամական հաշվում կուտակում է հետգնման համար նախատեսված պարտատոմսերի ծավալի 140%-ին համարժեք դրամական միջոցներ: Բանկը թողարկողից ստացված կարգադրության հիման վրա սահմանափակում է թողարկողի դրամական հաշվից հետգնմանն ուղղված բյուջետային միջոցների օգտագործման հնարավորությունը:

28. Հետգնման աճուրդի օրվա մինչև ժամը 10.30-ը հետգնման աճուրդին մասնակցող գործակալները պարտավոր են բանկում վարվող ազատ պարտատոմսերին համապատասխան (սեփական, ամփոփ ներդրողների) դեպո հաշվում ունենալ հետգնման համար նախատեսվող անհրաժեշտ ծավալով պարտատոմսեր:

29. Հետգնման աճուրդի մասնակիցները ներկայացնում են պարտատոմսերի վաճառքի սույն կարգով նախատեսված երկու տեսակի հայտ:

30. Հետգնման աճուրդին ներկայացված հայտերն ընդգրկում են միայն մրցակցային առաջարկություններ, որոնցում նշվում է պարտատոմսերի այն ծավալը, որը մասնակիցը ցանկանում է վաճառել աճուրդի ժամանակ և այն եկամտաբերությունը, որով մասնակիցը պատրաստ է վաճառել պարտատոմսերի այդ ծավալը: Յուրաքանչյուր հայտ կարող է ընդգրկել առավելագույնը քսան մրցակցային առաջարկություն: Մասնակցի կողմից յուրաքանչյուր հետգնման աճուրդին ներկայացվող սեփական առաջարկությունների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել այդ օրը հետգնման ենթակա ծավալը: Մասնակցի կողմից յուրաքանչյուր հետգնման աճուրդին ներդրողների հաշվին ներկայացվող առաջարկությունների ծավալը չի սահմանափակվում: Հայտում նշված պարտատոմսերի ծավալները պետք է բազմապատիկ լինեն տվյալ պարտատոմսի համար թողարկման հրամանում սահմանված քայլին, եկամտաբերությունը նշվում է ստորակետից հետո՝ առավելագույնը չորս նիշի ճշտությամբ:

31. Հետգնման աճուրդին հայտերը ներկայացվում են տեղաբաշխման աճուրդի համար սահմանված ժամկետներում՝ սույն կարգի 8-11 կետերում սահմանված ընթացակարգերի համաձայն:

32. Հայտերի ընդունման դադարումից հետո համակարգը ստուգում է հետգնման աճուրդի մասնակցի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում բավարար ծավալով պարտատոմսերի առկայությունը: Համապատասխան պարտատոմսերի առկայության դեպքում համակարգն ապահովում է դրանց օգտագործման սահմանափակումը հաշվետիրոջ այլ գործառնությունների համար:

33. Պարտատոմսերի բավարար ծավալով չապահովված հայտերն աճուրդից հանվում են (մերժվում են), իսկ աճուրդի մասնակիցներն այդ մասին տեղեկացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով:

34. Ընդունված (չմերժված) հայտերի հիման վրա կազմվում է հավաքական տեղեկագիր՝ համաձայն ձև 11-ի, և տրամադրվում է թողարկողին:

35. Թողարկողը որոշում է պարտատոմսերի հետգնման սահմանային եկամտաբերությունը, որից հետո թողարկողի հանձնարարագրի հիման վրա՝ կազմված համաձայն ձև 12-ի, սույն կետով նշված պայմանները մուտքագրվում են համակարգ: Հավաքական տեղեկագրի, ինչպես նաև թողարկողի հանձնարարագրի փոխանցումը կատարվում է տեղաբաշխման աճուրդի համար սահմանված կարգով և ժամկետներում:

36. Պայմանները համակարգ մուտքագրվելուց հետո սկսվում է մրցակցային առաջարկությունների բավարարումը՝ ամենաբարձր եկամտաբերությամբ առաջարկությունից սկսած մինչև սահմանային եկամտաբերությամբ որոշված ծավալը: Սահմանային եկամտաբերությամբ առաջարկությունների բավարարումը կատարվում է կամ ողջ ծավալով կամ համամասնական սկզբունքով՝ տեղաբաշխման աճուրդի համար սահմանված ընթացակարգերին համապատասխան:

37. Համակարգը հաշվում է հետգնվող պարտատոմսերի համար վճարման ենթակա գումարներն ըստ աճուրդի յուրաքանչյուր մասնակցի, ինչպես նաև թողարկողին փո-

խանցվող պարտատոմսերի ծավալները և կատարում է դրամական ու դեպո հաշիվներին համապատասխան ծավալով դրամական միջոցների և պարտատոմսերի փոխանցումները: Հաշվարկների հիման վրա աճուրդի անցկացման օրվա մինչև ժամը 13.00-ն հայտարարվում են աճուրդի արդյունքները՝ համաձայն ձև 13-ի, իսկ աճուրդի մասնակիցները համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով տեղեկացվում են հետգնման աճուրդին իրենց կողմից ներկայացված հայտերի վերաբերյալ:

38. Եթե սույն կարգով սահմանված ժամանակահատվածում թողարկողը չի սահմանում աճուրդի գնային պայմանները, ապա բանկն իրավունք ունի աճուրդի անցկացման օրվա ժամը 12.30-ին աճուրդը չեղյալ հայտարարել, որի մասին աճուրդի մասնակիցները տեղեկացվում են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով:

39. Հետգնման աճուրդին ներկայացվող պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի վաճառքի գինը հաշվարկվում է համաձայն ձև 6-ի: Բոլոր գումարները հաշվարկվում են մեկ դրամի ճշտությամբ:

40. Պարտատոմսերի հետգնման աճուրդի օրը բանկը հաշվետվություններ է ներկայացնում թողարկողին՝ համաձայն ձև 14-ի, ձև 15-ի, ձև 16-ի:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԵՏԳՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

41. Բանկը, հիմք ընդունելով թողարկողի կողմից ներկայացված հետգնման կազմակերպման մասին հանձնարարագիրը, կազմակերպում է պարտատոմսերի հետգնում: Հետգնման առարկա կարող են լինել միայն շրջանառության մեջ եղած ազատ կարգավիճակով պարտատոմսերը:

42. Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերի հետգնմանը կարող են մասնակցել միայն պետական կարճաժամկետ պարտատոմսերի դիլերները: Հայաստանի Հանրապետության պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի հետգնմանը կարող են մասնակցել միայն գործակալները: Հետգնման մասնակիցները ներկայացնում են սույն կարգով նախատեսված երկու տեսակի հայտ: Հետգնման համար կարող են ներկայացվել առաջարկություններ՝ նշելով վաճառքի ենթակա պարտատոմսերի ծավալը՝ թողարկողի կողմից նախապես հայտարարված տարեկան եկամտաբերությամբ բավարարվելու պայմանով: Ներդրողների համար գործում են սույն կարգի 26-րդ կետում սահմանված կանոնները:

43. Հետգնման օրվա մինչև ժամը 10.30-ը թողարկողն իր դրամական հաշվում կուտակում է պարտատոմսերի հետգնման համար անհրաժեշտ ծավալով դրամական միջոցներ: Բանկը թողարկողից ստացված կարգադրության հիման վրա սահմանափակում է թողարկողի դրամական հաշվից հետգնմանն ուղղված բյուջետային միջոցների օգտագործման հնարավորությունը:

44. Հետգնման օրվա մինչև ժամը 10.30-ը հետգնման մասնակիցները պարտավոր են բանկում վարվող ազատ պարտատոմսերի համապատասխան (սեփական, ամփոփ ներդրողների) դեպո հաշվում ունենալ հետգնման համար նախատեսվող անհրաժեշտ ծավալով պարտատոմսեր:

45. Հետգնման հայտերի ներկայացման, արդյունքների ամփոփման, թողարկողին հավաքական տեղեկագրի փոխանցման, հաշվարկների իրականացման և բանկի կողմից տեղեկատվության տրամադրման գործընթացը կատարվում է սույն կարգի գլուխ 3-ում սահմանված ընթացակարգերի համապատասխան՝ բացառությամբ 46-րդ կետում սահմանված առանձնահատկությունների:

46. Հավաքական տեղեկագիրը կազմվում է համաձայն ձև 17-ի: Թողարկողը բավարարում է հավաքական տեղեկագրում ներառված առաջարկությունների ողջ ծավալը: Հետգնմանը ներկայացվող պետական կարճաժամկետ պարտատոմսերի հետգնման (վաճառքի) գինը հաշվարկվում է համաձայն ձև 5-ի, իսկ պետական միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի վաճառքի գինը հաշվարկվում է համաձայն ձև 6-ի: Բոլոր գումարները հաշվարկվում են մեկ դրամի ճշտությամբ: Աճուրդի արդյունքները հայտարարվում են համաձայն ձև 18-ի: Պարտատոմսերի հետգնման օրը բանկը հաշվետվություններ է ներկայացնում թողարկողին՝ համաձայն ձև 19-ի:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

47. Պարտատոմսերի մարմանը նախորդող աշխատանքային օրը թողարկողի կողմից տրված վճարման հանձնարարականի հիման վրա բանկն իրականացնում է շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի մարում (ազատ, գրավադրված և արգելադրված):

48. Բանկը սահմանափակում է թողարկողից ստացված հանձնարարականի հիման վրա թողարկողի դրամական հաշվից մարմանն ուղղված բյուջետային միջոցների օգտագործման հնարավորությունը:

49. Եթե պարտատոմսերի մարման օրը չկա այլ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդ, ապա պահառուի կարգադրությամբ համակարգում ավտոմատ ձևով իրականացվում է մարում՝ կատարվում են դրամական և դեպո հաշիվներին համապատասխան ծավալով դրամական միջոցների և պարտատոմսերի փոխանցումները, որոնց արդյունքում շրջանառության մեջ գտնվող մարվող պարտատոմսերի ամբողջ ծավալը դեպո հաշիվներից փոխանցվում է թողարկողի մարված պարտատոմսերի դեպո հաշվին, և միաժամանակ իրականացվում են մարվող ծավալի չափով դրամական միջոցներին համապատասխան փոխանցումները:

50. Միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի պարագայում արժեկտրոնի գումարները ևս փոխանցվում են դեպո հաշվետերերի՝ բանկում վարվող համապատասխան դրամական հաշիվներին:

51. Եթե պարտատոմսերի մարման օրը կա այլ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդ, ապա մարման և աճուրդի գործառնությունները կարող են կատարվել միաժամանակ՝ հաշվանցման սկզբունքով: Համակարգը հաշվում է ըստ յուրաքանչյուր մասնակցի՝ տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը, ինչպես նաև թողարկողին փոխանցվելիք դրամական միջոցները՝ հաշվի առնելով աճուրդի մասնակիցների դեպո հաշիվներում (գործակալի (դիլերի) դեպքում՝ տարանջատված որպես սեփական և ամփոփ ներդրողների) այդ օրը աճուրդի հետ միաժամանակ մարման ենթակա պարտատոմսերի ծավալի առկայությունը և կատարում է դեպո և դրամական հաշիվներին անհրաժեշտ փոխանցումներ:

52. Պարտատոմսերի մարման ժամանակ թողարկողի դեպո հաշիվներում առկա տեղաբաշխման ենթակա և հետ գնված պարտատոմսերը նույնպես փոխանցվում են թողարկողի մարված պարտատոմսերի դեպո հաշվին:

53. Եթե պարտատոմսերի մարման օրը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումն իրականացվում է առաջիկա աշխատանքային օրը:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

54. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմաններն ու Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը հաստատելու մասին» թիվ 1103-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման պայմաններ»-ի համաձայն թողարկված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի հետգնումն իրականաց-

վում է սույն կարգի 4-րդ գլխի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի գործակալների մասնակցությամբ, պարտատոմսերի վաճառքի գինը հաշվարկելով՝ համաձայն սույն կարգի ձև 20-ի: Այդ պարտատոմսերի մարումը և արժեկտրոնների վճարումն իրականացվում է սույն կարգի 5-րդ գլխի համաձայն:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Ձև 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ թողարկման պարտատոմսերի աճուրդի արդյունքների վերաբերյալ

թողարկման համարը

- Աճուրդի անցկացման հասցեն և ամսաթիվը,
- աճուրդին մասնակցած գործակալների քանակը,
- աճուրդին մասնակցած դիլերների քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- գործակալների կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների ծավալը,
- գանձապետական պահառուի կողմից ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների ծավալը,
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- տեղաբաշխված պարտատոմսերի սահմանային եկամտաբերությունը,
- տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Ձև 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

_____ թողարկման պարտատոմսերի աճուրդի արդյունքների վերաբերյալ

թողարկման համարը

- Աճուրդի անցկացման հասցեն և ամսաթիվը,
- աճուրդին մասնակցած գործակալների քանակը,
- աճուրդին մասնակցած դիլերների քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- ներկայացված ոչ մրցակցային առաջարկությունների ծավալը,
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- տեղաբաշխված պարտատոմսերի սահմանային եկամտաբերությունը,
- տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

---------- **թողարկման**

թողարկման համարը

պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին
թույլատրված հայտերի հավաքական տեղեկագիր

Պարտատոմսերի ձեռքբերման մրցակցային առաջարկությունների ծավալը (դրամ)	**Նշված ծավալի դիմաց առաջարկվող գումարը (դրամ)**	**Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (%)**

Պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալը

Պարտատոմսերի թողարկման ամսաթիվը

Պարտատոմսերի մարման ամսաթիվը

Պարտատոմսերի ձեռքբերման (պահանջվող) ընդհանուր ծավալը

Պարտատոմսերի տեղաբաշխվող (բավարարվող) ընդհանուր ծավալը

Պարտատոմսերի սահմանային տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը

Մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը

Գործակալների սեփական մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը

Դիլերների սեփական մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը

Գործակալների և դիլերների ներդրողների մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը

Ոչ մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը

Գանձապետական պահառուի ծավալը

Գործակալների սեփական ոչ մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը

Ներդրողների ոչ մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը:

Աշխատանքային խմբի անդամներ՝ 1. _____
2. _____

«___» _____ ____ թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

«__» _____ 200 _ թ. աճուրդի ընթացքում

_____ թողարկման պարտատոմսերի
թողարկման համարը

գնման հայտերի բավարարման համար

Սույնով թողարկողը բանկին հանձնարարում է.

- վաճառել _____ պարտատոմսերն այն անձանց, որոնք ներկայացրել են այդ
  թողարկման համարը
  պարտատոմսերի գնման մրցակցային առաջարկություններ, և հայտերում նշված եկամտաբերությունը _____%-ից բարձր չէ,

- մերժել մյուս բոլոր մրցունակ առաջարկությունները,

- վաճառել _____ պարտատոմսերն այն անձանց, որոնք ներկայացրել են այդ
  թողարկման համարը
  պարտատոմսերի գնման ոչ մրցակցային առաջարկությունները, աճուրդի միջին կշռված եկամտաբերությամբ՝ ____ %:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից (Ա.Ա.Հ.)

_____

Հանձնարարագիրն ստացվել է «__»_____200_ թ. ժամը _____

ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Ա.Ա.Հ.)

ԲԱՆԱՁԵՎ

Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի տարեկան եկամտաբերության հաշվարկման

$$\text{ԵԿ} = \frac{(\text{ԱԱ} - \text{ԳԳ}) * 360}{\text{ԳԳ}*\text{Օ}} * 100\%$$

ԲԱՆԱՁԵՎ

Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի գնի (ձեռքբերման գնի/վաճառքի գնի) հաշվարկման

$$\text{ԳԳ} = \frac{\text{ԱԱ} * 360 * 100}{\text{ԵԿ} * \text{Օ} + 360 * 100} * 100\%$$

որտեղ՝

ԵԿ - տարեկան եկամտաբերություն,

ԱԱ - պարտատոմսի անվանական արժեք,

ԳԳ - պարտատոմսի գնման (վաճառքի) գին,

Օ - մինչև մարում օրերի քանակը,

360 - տարվա օրերի թիվը՝ ընդունված պայմանականորեն:

ԳԳ ≤ ԱԱ

ԲԱՆԱՁԵՎ

Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի գնի (ձեռքբերման գնի/վաճառքի գնի) հաշվարկման

$$ԳԳ = \frac{Ա * b}{100 * b + a*եկ} * \left[տ * \sum_{j=1}^{m} \frac{1}{\left(1 + \frac{եկ}{100}\right)^{j-1}} + \frac{100}{\left(1 + \frac{եկ}{100}\right)^{m-1}} \right]$$

որտեղ՝

ԳԳ - պարտատոմսի գնման (վաճառքի) գին,
տ - արժեկտրոնի փուլային եկամտաբերություն,
Ա - պարտատոմսի անվանական արժեքը,
a - մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվը,
b - փուլի տևողությունը օրերով,
m - այդ պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
եկ - փուլային եկամտաբերություն,

$$տ = \left[\left(1 + \frac{S}{100}\right)^{\frac{1}{k}} - 1 \right] * 100$$

$$եկ = \left[\left(1 + \frac{ԵԿ}{100}\right)^{\frac{1}{k}} - 1 \right] * 100$$

S - արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն,
k - արժեկտրոնների վճարումների թիվը,
ԵԿ - տարեկան եկամտաբերություն:

Բանաձևում արժեկտրոնի փուլային եկամտաբերությունները կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ:

Համամասնության բաշխման սկզբունքը

Հաշվարկվում են A մեծության հետևյալ արժեքները՝

$A = Cs-\sum R$

$A = Vnc^s-\sum R$

Cs – հավաքական տեղեկագրի n-րդ սահմանային տողի բավարարվող ծավալն է,

Vnc^s – Աճուրդի մասնակիցների համար ոչ մրցակցային առաջարկություններով ձեռքբերման բավարարվող առավելագույն ծավալն է,

Եթե A=0, ապա կլորացված R ծավալները բաշխվում են առանց մնացորդի:

Եթե A<0, ապա պատահական թվերի գեներատորի (ՊԹԳ-ի) միջոցով ընտրվում են աճուրդի մասնակիցների այն առաջարկությունները, որոնց R ծավալները կնվազեն քայլի չափով:

Եթե A>0, ապա ՊԹԳ-ի միջոցով ընտրվում են մասնակիցների այն առաջարկությունները, որոնց R ծավալները կավելանան քայլի չափով:

Օրինակ՝

A1, A2, A3 և A4 աճուրդի մասնակիցները ներկայացրել են պարտատոմսերի ձեռքբերման համապատասխանաբար V1, V2, V3 և V4 պահանջվող ծավալների ոչ մրցակցային առաջարկություններ, V-ն ոչ մրցակցային առաջարկություններով տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի առավելագույն ծավալն է, որը պետք է համամասնորեն բաշխվի A1, A2, A3, A4 աճուրդի մասնակիցների միջև՝ V<(V1+V2+V3+V4):

ա) Ենթադրենք՝ շրջանառության ժամկետը 28 օր է, V=500՝000AMD, միջին կշռված եկամտաբերությունը 46.6321%, քայլը՝ 1000AMD

N	Պահանջվող ծավալ	Եկամտաբերություն	Բավարարվող ծավալ	Բավարարված ծավալը՝ քայլի ճշտությամբ	Վճարվող գումարը (հաշվարկվում է համաձայն 3-րդ կետում բերված բանաձևի) մեկ դրամի ճշտությամբ
A1	70՝000	46.6321	42՝682.93	43000	41՝495
A2	150՝000	46.6321	91՝463.41	91000	87՝815
A3	200՝000	46.6321	121՝951.20	122000	117՝730
A4	400՝000	46.6321	243՝902.40	244000	235՝460
Ընդ.	820՝000			500՝000	

բ) Ենթադրենք՝ V=98000AMD

N	Պահանջվող ծավալ	Եկամտաբերություն	Բավարարվող ծավալ	Բավարարվող ծավալը՝ քայլի ճշտությամբ	Բավարարված ծավալը՝ պատահական թվերի գեներատորի կիրառմամբ
A1	200՝000	46.6321	24500	25000	24000*
A2	200՝000	46.6321	24500	25000	25000
A3	200՝000	46.6321	24500	25000	24000*
A4	200՝000	46.6321	24500	25000	25000
Ընդ.	800՝000		98000	100՝000	98000

** ՊԹԳ միջոցով ընտրվել են 1-ին և 3-րդ աճուրդի մասնակիցների առաջարկությունները, որոնց մասնակիորեն բավարարված ծավալները պակասեցվել են 1000 դրամով՝ բավարարված ընդհանուր ծավալը V-ին համապատասխանեցնելու համար*

գ) Ենթադրենք՝ V=385000AMD

N	Պահանջվող ծավալ	Եկամտաբե-րություն	Բավարարվող ծավալ	Բավարարվող ծավալը՝ քայլի ճշտությամբ	Բավարարված ծավալը՝ պատահական թվերի գեներատորի կիրառմամբ
A1	100՝000	46.6321	96250	96000	96000
A2	100՝000	46.6321	96250	96000	97000*
A3	100՝000	46.6321	96250	96000	96000
A4	100՝000	46.6321	96250	96000	96000
Ընդ.	400՝000		385000	384000	385000

** ՊԹԳ-ի միջոցով ընտրվել է 2-րդ աճուրդի մասնակցի առաջարկությունը, որի մասնակիորեն բավարարված ծավալը ավելացվել է 1000 դրամով՝ բավարարված ընդհանուր ծավալը V-ին համապատասխանեցնելու համար:*

Եթե պարտատոմսերի ծավալների դիմաց յուրաքանչյուր մասնակցի գծով վճարվող գումարների հաշվարկները տեխնիկական և/կամ համակարգչային այլ միջոցներով իրականացնելիս ստացված արդյունքները տարբերվում են համակարգի միջոցով հաշվարկված տվյալներից մինչև 1000 դրամով, ապա համակարգի կողմից հաշվարկները համարվում են ճիշտ:

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ R001

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պարտատոմսերի (ո-րդ) աճուրդի արդյունքների վերաբերյալ

Սույն բանկը տեղեկացվում է պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին

1. Թողարկման տեղաբաշխման աճուրդը կայացել է

Պարտատոմսերը կմարվեն

	Աճուրդի մասնակիցների քանակը	**Ներկայացված ծավալները (դրամ)**
Դիլեր		
Գործակալ		
Գանձապետական պահառու		
Ընդամենը		

2. Աճուրդի ընթացքում պարտատոմսերի ձեռքբերման բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը կազմել է `

3. Թողարկողի կողմից սահմանվել է մրցակցային առաջարկությունների բավարարման առավելագույն եկամտաբերությունը`

4. Պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված հասույթը կազմել է`

5. Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի ընթացքում մասնակիցների կողմից ձեռք բերված պարտատոմսերը կազմել են`

Աճուրդի մասնակցի անվանումը	**Ձեռք է բերվել մրցակցային առաջարկություններով**		**Ձեռք է բերվել ոչ մրցակցային առաջարկություններով**	
	Ծավալը (ՀՀ դրամ)	Վճարված գումարը (ՀՀ դրամ)	Ծավալը (ՀՀ դրամ)	Վճարված գումարը (ՀՀ դրամ)

6. Հասույթը հաշվեգրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հաշվին «__» _____ 200_ թ.

ՀՀ կենտրոնական բանկի կողմից

_____ _____

(ստորագրություն) *(Ա.Հ.Ա)*

Հաշվետվությունն ընդունվել է «__» _____ 200_ թ.

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

_____ _____

(ստորագրություն) *(Ա.Հ.Ա)*

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ R003

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____արժեթղթերի առաջնային տեղաբաշխման (ո-րդ)_____

օր/ամիս/տարի

աճուրդի արդյունքների վերաբերյալ

Աճուրդի մասնակցի անվանումը	**Արժեթղթերի ներկայացված ծավալը**	**Արժեթղթերի բավարարված ծավալը**	**Տարեկան եկամտաբերությունը**	**Կարգավիճակը**
Մրցակցային առաջարկություններ				
Ընդամենը՝				
Ոչ Մրցակցային առաջարկություններ				
Ընդամենը՝				

NCM չբավարարված մրցակցային առաջարկություն

SCM բավարարված մրցակցային առաջարկություն

SCP մասնակիորեն բավարարված մրցակցային առաջարկություն

SNC բավարարված ոչ մրցակցային առաջարկություն

SNP մասնակիորեն բավարարված ոչ մրցակցային առաջարկություն

Կազմվել է օր/ամիս/տարի ժամ:րոպե:վայրկյան

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ R004

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____միևչև _____ ժամանակահատվածում

(օրը, ամիսը, ամսաթիվը) *(օրը, ամիսը, ամսաթիվը)*

արժեթղթերի առաջնային տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ

Արժեթղթերի պետական գրանցման համարը			
Արժեթղթերի թողարկման ամսաթիվը			
Արժեթղթերի աճուրդի հերթական համարը և ամսաթիվը			
Արժեթղթերի տեղաբաշխման ենթակա ծավալը			
Արժեթղթերի պահանջարկի ծավալը	ՀՀ դրամ		
	%-ով՝ տեղաբաշխված ծավալի նկատմամբ		
Արժեթղթերի ձեռքբերման մրցակցային առաջարկությունների տարեկան եկամտաբերությունը (%)	min		
	max		
	սահմանային		
Արժեթղթերի տեղաբաշխումից ստացված գումարը (ՀՀ դրամ)			
Տեղաբաշխված արժեթղթերի ծավալը (ՀՀ դրամ)	Գործակալների սեփական	Մրցակցային	
		Ոչ մրցակցային	
	Դիլերների սեփական	Մրցակցային	
		Ոչ մրցակցային	
	Գործակալների ներդրողներ	Մրցակցային	
		Ոչ մրցակցային	
	Դիլերների ներդրողներ	Մրցակցային	
		Ոչ մրցակցային	
	Գանձապետական պահառու		
	Ընդամենը		
Արժեթղթերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը (%)			

Կազմվել է օր/ամիս/տարի ժամ:րոպե:վայրկյան

_____ թողարկման

թողարկման համարը

պարտատոմսերի _____հետգնման աճուրդին

օր/ամիս/տարի

թույլատրված հայտերի հավաքական տեղեկագիր

Պարտատոմսերի վաճառքի մրցակցային առաջարկությունների ծավալը (դրամ)	Նշված ծավալի դիմաց վճարման ենթակա գումարը (դրամ)	Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (%)

Պարտատոմսերի հետգնման ենթակա ծավալը

Պարտատոմսերի հետգնման աճուրդի ամսաթիվը

Պարտատոմսերի մարման ամսաթիվը

Վաճառքի ենթակա պարտատոմսերի առաջարկի ընդհանուր ծավալը

Հետգնված պարտատոմսերի ընդհանուր ծավալը

Պարտատոմսերի սահմանային տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը

Գործակալների սեփական մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը

Գործակալների ներդրողների մրցակցային առաջարկությունների ընդհանուր ծավալը

Աշխատանքային խմբի անդամներ՝ 1. _____

2. _____

«__» _____ _____ թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

«___»_____ 200 թ. հետգնման աճուրդի ընթացքում

_____ թողարկման պարտատոմսերի

թողարկման համարը

հետգնման հայտերի բավարարման համար

Սույնով թողարկողը բանկին հանձնարարում է.

- գնել _____ պարտատոմսերն այն անձանցից, որոնք _____ ներկայացրել են այդ
  թողարկման համարը
  պարտատոմսերի գնման մրցակցային առաջարկություններ, և հայտերում նշված եկամտաբերությունը ___%-ից ցածր չէ,
- մերժել մյուս բոլոր մրցունակ առաջարկությունները:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից (Ա.Ա.Հ.)

_____

Հանձնարարագիրն ստացվել է «__»_____200_ թ. ժամը _____

ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Ա.Ա.Հ.)

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Ձև 13

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ թողարկման պարտատոմսերի հետգնման աճուրդի արդյունքների վերաբերյալ

թողարկման համարը

- Հետգնման աճուրդի անցկացման հասցեն և ամսաթիվը,
- հետգնման աճուրդին մասնակցած գործակալների քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- հետգնված պարտատոմսերի սահմանային տարեկան եկամտաբերությունը:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Ձև 14

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

_____ թողարկման պարտատոմսերի հետգնման աճուրդի արդյունքների վերաբերյալ

թողարկման համարը

- Հետգնման աճուրդի անցկացման հասցեն և ամսաթիվը,
- հետգնման աճուրդին մասնակցած գործակալների քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- հետգնված պարտատոմսերի սահմանային տարեկան եկամտաբերությունը,
- հետգնված պարտատոմսերի միջին կշռված տարեկան եկամտաբերությունը:

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ պարտատոմսերի հետգնման աճուրդի արդյունքների վերաբերյալ

Սույնով բանկը տեղեկացնում է պարտատոմսերի հետգնման աճուրդի արդյունքների մասին

1. Հետգնման աճուրդը կայացել է

Աճուրդի մասնակիցների քանակը

Թողարկողի կողմից հայտարարված պարտատոմսերի հետգնման ծավալը

Մասնակիցների կողմից ներկայացված ծավալները (դրամ)

2. Աճուրդի ընթացքում պարտատոմսերի վաճառքի բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը կազմել է `

3. Թողարկողի կողմից սահմանվել է մրցակցային առաջարկությունների բավարարման սահմանային եկամտաբերությունը`

4. Պարտատոմսերի հետգնման արդյունքում մասնակիցներին վճարված գումարը կազմել է`

5. Պարտատոմսերի հետգնման աճուրդի ընթացքում մասնակիցների կողմից վաճառված պարտատոմսերը կազմել են`

Աճուրդի մասնակցի անվանումը	**Վաճառվել է մրցակցային առաջարկություններով**		
	Ծավալը (դրամ)		Վճարված գումարը

6. Վճարված գումարը ելքագրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հաշվից «__» _____ 200_ թ.

ՀՀ կենտրոնական բանկի կողմից

_____ _____

(ստորագրություն) *(Ա.Հ.Ա)*

Հաշվետվությունն ընդունվել է «__» _____ 200_ թ.

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

_____ _____

(ստորագրություն) *(Ա.Հ.Ա)*

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Հվ 16

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ թողարկման պարտատոմսերի

_____հետգնման աճուրդի արդյունքների վերաբերյալ

օր/ամիս/տարի

Աճուրդի մասնակցի անվանումը	Արժեթղթերի ներկայացված ծավալը	Արժեթղթերի բավարարված ծավալը	Տարեկան եկամտաբ.	Կարգավիճակ
Ընդամենը՝				

NCM չբավարարված մրցակցային առաջարկություն

SCM բավարարված մրցակցային առաջարկություն

SCP մասնակիորեն բավարարված մրցակցային առաջարկություն

Կազմվել է օր/ամիս/տարի ժամ:րոպե:վայրկյան

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Հվ 17
R503

_____ թողարկման

թողարկման համարը

պետական պարտատոմսերի _____հետգնմանը

օր/ամիս/տարի

ներկայացված հայտերի հավաքական տեղեկագիր

Ներկայացված հայտեր

Պարտատոմսերի ծավալը (դրամ)	Պարտատոմսերի հետգնման գինը (դրամ)	Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (%)
Ընդամենը՝		

Աշխատանքային խմբի անդամներ՝ 1. _____

2. _____

«__» _____ _____ թ.

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Ձև 18

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____Պարտատոմսերի հետգնման արդյունքների վերաբերյալ

պարտատոմսերի թողարկման համարը

- Հետգնման անցկացման հասցեն և ամսաթիվը,
- հետգնման մասնակիցների (գործակալների/դիլերների) քանակը,
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ),
- հետգնված պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը:

ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման կարգի

Ձև 19
R502

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ թողարկման պետական պարտատոմսերի հետգնման վերաբերյալ

Սույնով բանկը տեղեկացնում է _____ թողարկման պարտատոմսերի հետգնման արդյունքների մասին

1. Թողարկման հետգնումը կայացել է
2. Թողարկողի կողմից սահմանվել է հայտերի բավարարման _____% եկամտաբերություն
3. Հետգնմանը մասնակցել են _____ գործակալ/դիլեր
4. Ընդունվել են պարտատոմսերի հետգնման հայտեր՝ _____ դրամ անվանական արժեքով
5. Պարտատոմսերի հետգնման արդյունքում հանրապետության բյուջեից ուղղվել է _____ դրամ գումար
6. _____ թողարկման պարտատոմսերի հետգնման արդյունքում գործակալների/դիլերների կողմից վերադարձված պարտատոմսերը կազմել են՝

Մասնակցի անվանումը	Անվանական արժեքը (դրամ)	Մասնակցին վճարված գումարը (դրամ)

7. Վճարված գումարը ելքագրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հաշվից «__» _____ 200_ թ.

ՀՀ կենտրոնական բանկի կողմից _____ _____
(ստորագրություն) *(Ա.Հ.Ա)*

Հաշվետվությունն ընդունվել է «__» _____ 200_ թ.

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

_____ _____
(ստորագրություն) *(Ա.Հ.Ա)*

Բ Ա Ն Ա Հ Ե Վ

Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի գնի (ձեռքբերման գնի/վաճառքի գնի) հաշվարկման

$$ԳԳ = Ա/m * \sum_{j=1}^{m} \frac{(տ*(m-j+1)/100) + 1}{(1+եկ*a/(100*b) * (1+եկ/100)^{j-1}}$$

որտեղ՝

ԳԳ - պարտատոմսի գնման/վաճառքի գին,

տ - արժեկտրոնի փուլային եկամտաբերություն,

Ա - գործարքի պահին պարտատոմսի անվանական արժեքը,

b - տվյալ փուլի փաստացի տևողությունն օրերով,

a - մինչև առաջիկա մարում օրերի թիվը,

m - այդ պահին մնացած մասնակի մարումների (արժեկտրոնների վճարումների) թիվը,

եկ - փուլի եկամտաբերություն,

որտեղ՝ տ = $((1+S/100)^{1/k} - 1) * 100$,

եկ = $((1 + ԵԿ/100)^{1/k} - 1) * 100$

S - արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն,

ԵԿ - տարեկան եկամտաբերություն,

k - մեկ տարում մասնակի մարումների և արժեկտրոնների վճարումների թիվը:

Բանաձևում արժեկտրոնի և պարտատոմսերի փուլային եկամտաբերությունները կլորացվում են չորս նիշի ճշտությամբ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե», «ժզ» կետերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին» թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 10) կատարել հետևյալ լրացումը՝

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 15-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.02.08 թ. (ՀՀԳՏ N7 (281), 5.03.08):

1) կանոնակարգ 10-ի գլուխ 8-ը լրացնել նոր 48.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«48.1. Այն դեպքում, եթե փոխանակման կետն ունի առնվազն 5 մլն դրամ ապահովագրական գումարի չափով դրամարկղում առկա դրամական միջոցների ապահովագրություն՝ գողության, կողոպուտի և հարձակումների ռիսկերից, ինչպես նաև փոխանակման կետի աշխատակիցների կյանքին ու առողջությանը հասցված վնասներից ապահովագրություն՝ յուրաքանչյուր աշխատակցի համար առնվազն 10 մլն դրամ ապահովագրական գումարի չափով, ապա անվտանգության ազդարարման համակարգ (այդ թվում՝ նաև «ոտնակ») չի պահանջվում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
18 հունվարի 2008 թ., N 11-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 58-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, 114-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, 179-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը՝ որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման (այսուհետև՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորվող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու ուղեցույցը հաստատելու մասին»:

1.2. Որոշման նախաբանը «90-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը,» բառերից հետո լրացնել ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 58-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, 114-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, 179-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը,» բառերով:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.02.08 թ. (ՀՀԳՏ N7 (281), 5.03.08):

1.3. Որոշման նախաբանի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հաստատել «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորվող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու ուղեցույցը»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):»:

1.4. Ուղեցույցի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորվող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու ուղեցույց»:

1.5. Ուղեցույցի 1-ին կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ ներդրումային ընկերությունում, կարգավորվող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու դիմումը մերժվում է, եթե նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը կամ նրա հետ փոխկապակցված անձն անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես ներդրումային ընկերության, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի գործողությունները կարող են հանգեցնել ներդրումային ընկերության, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:»:

1.6. Ուղեցույցի 2-րդ կետը լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի՝ ներդրումային ընկերության ղեկավար չի կարող է լինել այն անձը, որն անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես ներդրումային ընկերության ղեկավար չի կարող պատշաճ կերպով կառավարել ներդրումային ընկերության գործունեության համապատասխան ոլորտը կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել ներդրումային ընկերության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի՝ օպերատորի ղեկավար չի կարող լինել այն անձը, որն անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը, որպես օպերատորի ղեկավար չի կարող պատշաճ կերպով կառավարել օպերատորի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել օպերատորի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 179-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար չի կարող լինել այն անձը, որն անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը, որպես Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար չի կարող պատշաճ կերպով կառավարել Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել Կենտրոնական դեպոզիտարիայի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:»:

1.7. Ուղեցույցի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն ուղեցույցի իմաստով՝ ղեկավար են համարվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով և 90-րդ հոդվածի 1-ին մասով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով, 114-րդ հոդվածի 3-րդ մասով և 179-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձինք:»:

1.8. Ուղեցույցի 4-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն ուղեցույցի 1-ին և 2-րդ կետերի կիրառման նպատակով սահմանվում է, որ սույն ուղեցույցի 5-րդ կետում նշված հիմքերի առկայության դեպքում բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ բանկի ղեկավար գրանցվելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ գրանցվելու կամ ներդրումային ընկերությունում, օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար գրանցվելու վերաբերյալ հարցերը քննարկվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստում և կարող են հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ որպես բանկի ղեկավար գրանցելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ գրանցելու, ներդրումային ընկերությունում, օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար գրանցելու դիմումները մերժելու համար:»:

1.9. Ուղեցույցի 5-րդ կետը «ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու» բառերից հետո լրացնել «, ներդրումային ընկերությունում, օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու» բառերով:

1.10. Ուղեցույցի 5.3 կետը «ապահովագրական բրոքերային ընկերություններում» բառերից հետո լրացնել «, ներդրումային ընկերությունում, օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում» բառերով, «ապահովագրական ընկերությունը կամ ապահովագրական բրոքերային ընկերությունը» բառերից հետո լրացնել «, ներդրումային ընկերությունը, օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան» բառերով և «ապահովագրական ընկերության կամ ապահովագրական բրոքերային ընկերության» բառերից հետո լրացնել «, ներդրումային ընկերության, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի» բառերով:

1.11. Ուղեցույցի 5.8 կետը «148-րդ հոդվածի 1-ին մասով» բառերից հետո լրացնել ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածով» բառերով:

1.12. Ուղեցույցի 5.10 կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հանդիսացել են բանկի, ապահովագրական ընկերության ղեկավար, ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ, ներդրումային ընկերության, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար և իրենց պաշտոնավարման ընթացքում՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 148-րդ հոդվածի 1-ին մասի, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի՝»:

1.13. Ուղեցույցի 5.11 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բանկում այլ մասնակցության ձեռքբերման արդյունքում բանկի նշանակալից մասնակցի մասնակցության նվազումը կամ ամբողջությամբ օտարումը կարող է հանգեցնել բանկի հեղինակազրկման կամ հեղինակության կամ գործարար համբավի անկման.»:

1.14. Ուղեցույցի 5.12 կետում «բանկում» բառից հետո հանել «կամ ապահովագրական ընկերությունում» բառերը:

1.15. Ուղեցույցի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենտրոնական բանկը բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ որպես ղեկավար գրանցվելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ գրանցվելու, ներդրումային ընկերությունում, օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար գրանցվելու համար Կենտրոնական բանկ դիմած անձանցից պահանջում է հայտարարություն այն մասին, որ սույն ուղեցույցի 5-րդ կետում նշված հիմքերը նրանց մոտ բացակայում են:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
18 հունվարի 2008 թ., N 13-Ն

*«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 184-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասը, 185-րդ հոդվածի 2-րդ կետը, 193-րդ հոդվածի 5-րդ մասը, 221-րդ հոդվածի 1-ին մասը, 222-րդ հոդվածի 14-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը՝ համաձայն Հավելվածի (այսուհետ՝ Կանոնակարգ 5/02):

2. 2008 թվականի հունիսի 30-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ««Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 28-րդ բաժինը, 104.2-2/ԻԿԿ, 104.2-3/ԻԿԿ ձևերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
23 հունվարի 2008 թ., N 14-Ն

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/02

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման (ներառյալ՝ փոփոխությունների գրանցման) և լիցենզավորման, գործող Կենտրոնական դեպոզիտարիայի վերագրանցման և վերալիցենզավորման, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, Կենտրոնական դեպոզիտարիայի երեք տարվա գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխու-

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.02.08 թ. (ՀՀԳՏ N8 (282), 17.03.08):

թյունների ներկայացման կարգը և ժամկետները, Կենտրոնական դեպոզիտարիայի (պահառուի) տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները, ինչպես նաև կարգավորում է այդ հարցերի հետ կապված և Հայաստանի Հանրապետության օրենքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված այլ հարաբերություններ:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող Կենտրոնական դեպոզիտարիայի վրա:

3. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով, կամ մուտքագրվում են Կենտրոնական բանկ: Ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն Կենտրոնական դեպոզիտարիայի իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման, վերագրանցման և վերալիցենզավորման գործընթացներն իրականացվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) **«Կենտրոնական բանկ»**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

2) **«հանձնաժողով»**՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,

3) **«ծրագիր»**՝ Կենտրոնական բանկ ներկայացվող երեք տարվա գործարար ծրագիր,

4) «**ֆինանսական խումբ (միություն)**»՝ որևէ երկրի օրենսդրության իմաստով ֆինանսական խումբ կամ ֆինանսական միություն,

5) «**ֆինանսական կազմակերպություն**»՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, կենսաթոշակային ֆոնդ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների և (կամ) այլ իրավական ակտերի համաձայն ֆինանսական կազմակերպություն համարվող այլ անձինք,

6) **«Կենտրոնական դեպոզիտարիա»՝** բաժնետիրական ընկերություն, որը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և իր կանոններով սահմանված կարգով իրականացնում է կենտրոնացված պահառուի, կենտրոնացված ռեեստրավարի և արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատորի գործառույթները:

6. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7. Կենտրոնական դեպոզիտարիայի (բացառությամբ՝ Հայաստանի ֆոնդային բորսա ինքնակարգավորվող կազմակերպության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 222-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն որպես բաց բաժնետիրական ընկերության վերագրանցվող Կենտրոնական դեպոզիտարիայի) պետական գրանցման և լիցենզավորման, ինչպես նաև վերագրանցման և վերալիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 184-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է հիմնադիր ժողովի կողմից լիազորված անձի կողմից վավերացված, իսկ վերագրանցման և վերալիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է դիմումատուի կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի,

բ. գործարար ծրագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի գլուխ 12-ի,

գ. Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների մասին տեղեկությունները (տեղեկանքը) ներկայացվում են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի,

դ. Կենտրոնական դեպոզիտարիայի բաժնետերերի (մասնակիցների) վերաբերյալ տեղեկությունները (տեղեկանքը) ներկայացվում են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը,

3) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա նաև նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

4) վերագրանցվող և վերալիցենզավորվող ընկերությունների համար՝ այն իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկություններ, որոնց որևէ դասի բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է Կենտրոնական դեպոզիտարիային (տվյալ անձի անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, դիմորդին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող՝ տվյալ անձի բաժնային արժեթղթերի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ)),

5) տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական պայմանագրի պատճենը:

8. Լիցենզիա ստանալու դիմումի մեջ կամ կից փաստաթղթերում ոչ էական թերություններ (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության դեպքում Կենտրոնական բանկի կողմից գրանցման և լիցենզիայի տրամադրման մասին որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկի կողմից ստանալու պահից: Նշված թերությունները պետք է վերացվեն Կենտրոնական բանկի կողմից դրանց մասին տեղեկացման օրվանից առավելագույնը 10 օրվա ընթացքում: Ընդ որում՝ նշված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում գրանցման և լիցենզավորման դիմումը համարվում է մերժված:

ԳԼՈՒԽ 4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

9. Կենտրոնական բանկը բավարարում է Կենտրոնական դեպոզիտարիայի պետական գրանցման և լիցենզավորման դիմումը՝ օրենքով և սույն կանոնակարգով սահմանված կարգով:

10. Կենտրոնական դեպոզիտարայի գրանցումը կատարվում է, ինչպես նաև լիցենզիան Կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրվում է Կենտրոնական բանկի կողմից ստեղծված լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

11. Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ուժի մեջ մտնելուց հետո 5 օրվա ընթացքում հիմնադիրներին տրվում է Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման վկայականը՝ համաձայն հավելված 5-ի, և լիցենզիան՝ համաձայն հավելված 1-ի:

12. Գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների գրանցման համար պահանջվող փաստաթղթերը: Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարները գրանցվում են համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» Կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման:

13. Կենտրոնական բանկը կարող է մերժել Կենտրոնական դեպոզիտարիայի լիցենզիայի տրամադրումը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 185-րդ հոդվածում նշված հիմքերով:

14. Լիցենզիա ստանալու դիմումի մերժման դեպքում դիմումատուն կարող է կրկին դիմել լիցենզիա ստանալու համար:

ԲԱԺԻՆ III. ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 5. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

15. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ծայնի իրավունք տվող մասնակցության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ավելացման մտադրություն ունեցող իրավաբանական անձը, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար տվյալ իրավաբանական անձի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6ա-ի,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությունը իրավաբանական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված Կենտրոնական դեպոզիտարիայի կնիքով (միայն գործող Կենտրոնական դեպոզիտարիայի համար),

3) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը,

4) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի հիմնադիր պայմանագիրը և կանոնադրությունը՝ մինչև միջնորդագրի ներկայացման պահը կատարված փոփոխություններով,

5) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի մասնակիցների ցուցակը՝ նշելով նրանց մասնակցության չափը (տոկոսով) կանոնադրական կապիտալի մեջ,

6) տեղեկանք՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7ա-ի,

7) իրավաբանական անձի վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները: Եթե սույն ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, կամ հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին: Գործունեության մինչև երեք տարի ժամկետ ունեցող անձանց համար ներկայացվում է տեղեկատվություն իրականացված գործունեության ողջ ժամկետի համար:

8) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին (օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին) համապատասխան,

9) տեղեկանք՝ տրված պետական լիազորված մարմնի կողմից՝ դատարանի որոշմամբ սնանկ կամ անվճարունակ ճանաչված չլինելու վերաբերյալ: Օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից ներկայացվում է տեղեկանք՝ տրված նրա գրանցման երկրում սնանկ կամ անվճարունակ ճանաչված չլինելու վերաբերյալ տեղեկանք տալու լիազորություններ ունեցող մարմնի կողմից, եթե այդպիսի մարմին կա:

10) տեղեկանք՝ տրված իրավասու մարմնի կողմից բյուջեի և կենսաթոշակային հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքերի կամ դրանց բացակայության վերաբերյալ (ռեզիդենտների համար),

11) ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն),

12) նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձի դիրքորոշումը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 187-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ,

13) հայտարարություն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին,

14) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն հավելված 8-ի, հակառակ դեպքում պետք է ներկայացնի իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի գլուխ 6-ով սահմանված փաստաթղթերը: Սույն կետում նշված հայտարարությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ այն Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ, որում անձը նախատեսել է ձեռք բերել կամ ձեռք է բերել նշանակալից մասնակցություն:

16. Եթե իրավաբանական անձ հանդիսացող ուղղակի մասնակիցն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն գլխի 15-րդ կետով ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև՝

1) խմբի (միության) կառուցվածքը,

2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա

ա. հաշվապահական հաշվեկշիռը,

բ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,

գ. դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,

դ. սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,

ե. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները,

3) խմբի (միության) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին (օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին) համապատասխան (առկայության դեպքում):

17. Եթե 16-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև՝

1) տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, կամ

2) հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին:

18. Եթե 16-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

19. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 15-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ և 13-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և Ստանդարտ և Փուրզ կամ Մուդիզ վարկանշային գործակալությունների կողմից սահմանված «Ա-» կամ «Ա3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

20. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցությունը ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ է ներկայացնում 15-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

21. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող ֆիզիկական անձը մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությունը՝ ֆիզիկական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված Կենտրոնական դեպոզիտարիայի կնիքով (միայն գործող Կենտրոնական դեպոզիտարիայի համար),

3) տեղեկանք Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7բ-ի,

4) հայտարարագիր չմարված պարտավորությունների բացակայության մասին,

5) նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի դիրքորոշումը՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 187-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ,

6) հայտարարություն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին,

7) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 8-ի, հակառակ դեպքում՝ պետք է ներկայացնի իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի գլուխ 18-ով սահմանված փաստաթղթերը: Սույն կետում նշված հայտարարությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ այն Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ, որում անձը նախատեսել է ձեռք բերել կամ ձեռք է բերել նշանակալից մասնակցություն:

8) ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

22. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերել ցանկացող պետությունը պարտավոր է մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ պետության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնից,

2) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող պետության իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,

3) Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությունը պետության կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված Կենտրոնական դեպոզիտարիայի կնիքով (միայն գործող Կենտրոնական դեպոզիտարիայի համար),

4) Կենտրոնական դեպոզիտարիայի մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը մասնակիցների ներգրավմանը կամ առկա մասնակցության ավելացմանը համաձայնություն տալու մասին,

5) նշանակալից մասնակցություն ակնկալող պետության դիրքորոշումը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 187-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք կամ Կենտրոնական դեպոզիտարիայի մասնակցի հետ փոխկապակցված անձինք, ապա սույն գլխով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

24. Կենտրոնական դեպոզիտարիայում անուղղակի նշանակալից մասնակցություն ակնկալող անձի վերաբերյալ Կենտրոնական բանկ են ներկայացվում իրավաբանական անձի համար՝ սույն կանոնակարգի 15-րդ կետի 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, իսկ ֆիզիկական անձի համար՝ սույն կանոնակարգի 21-րդ կետի «4», «5», «7» ենթակետերով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկանք նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց (այդ թվում՝ այն իրավաբանական անձանց, որոնցում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը նշանակալից մասնակից է) մասին՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 9-ի:

25. Եթե անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով, ապա վերոնշյալ փաստաթղթերը Կենտրոնական բանկ է ներկայացնում ուղղակի նշանակալից մասնակիցը, այլ դեպքերում՝ Կենտրոնական դեպոզիտարիան:

26. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 15-րդ կետի «11», «14» ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

27. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 15-րդ կետի «7», «11», «14» ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

28. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակիցը և Կենտրոնական դեպոզիտարիայում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձը ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա անուղղակի մասնակիցը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 15-րդ կետի 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 7. ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

29. Նշանակալից մասնակցության ձեռքբերման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար պահանջվող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է ընդունում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալու կամ տրամադրումը մերժելու մասին:

30. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում սույն կանոնակարգի 29-րդ կետում նախատեսված որոշումներից որևէ մեկը ընդունելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված՝ նշված 30-օրյա ժամկետը լրանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:

31. Նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունը Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության միջնորդագիրը:

32. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գոր-

ծարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

ԳԼՈՒԽ 8. ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԲ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Անձը, որը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն Կենտրոնական դեպոզիտարիայում կամ ավելացնում է իր մասնակցությունը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասում նշված սահմանաչափերից ավելի ցանկացած իրադարձության կամ գործարքի արդյունքում, որի մասին անձը տեղյալ չէր և չէր կարող տեղյակ լինել, այդ մասին տեղեկանալու պահից 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 10ա-ի:

34. Նշանակալից մասնակիցը ձեռքբերված բաժնետոմսերի (բաժնեմասերի)՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 7-րդ մասի, օտարման մասին Կենտրոնական բանկ է տեղեկացնում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 10բ-ի:

ԲԱԺԻՆ IV. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 9. ԼԻՑԵՆԶԻԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

35. Կենտրոնական դեպոզիտարիային լիցենզիան տրվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ սահմանված լիցենզիայի ձևերին համապատասխան՝ սույն կանոնակարգի հավելված 1-ի համաձայն:

36. Լիցենզիան տրվում է մեկ օրինակ:

37. Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության ոլորտը կարգավորող՝ օրենքով և (կամ) նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պարտադիր պահանջներ կամ պայմաններ սահմանող իրավական ակտերի ցանկը Կենտրոնական բանկի կողմից հանձնվում է Կենտրոնական դեպոզիտարիային՝ լիցենզիայի հետ միասին: Ցանկում նշվում են համապատասխան իրավական ակտերի լրիվ անվանումները և դրանց պաշտոնական հրապարակման տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնական տեղեկագրի անվանումն ու համարը: Ցանկում կատարված փոփոխությունների մասին Կենտրոնական բանկը հայտնում է բոլոր Կենտրոնական դեպոզիտարիաներին ոչ ուշ, քան այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 15-րդ օրը:

38. Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան այդ մասին հայտարարություն է տալիս զանգվածային լրատվության միջոցներով (հեռուստատեսությամբ կամ առնվազն 1000 տպաքանակ ունեցող թերթում կամ ամսագրում) և Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը և զանգվածային լրատվության միջոցով հայտարարություն տալու փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթը:

39. Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը տալիս է Կենտրոնական դեպոզիտարիային՝ վերջինիս կողմից համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

40. Կորած լիցենզիան գտնելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան գտնված լիցենզիայի օրինակը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

41. Լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, տառերը ջնջվելու և այլնի) դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ (լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար)՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը և լիցենզիայի ոչ պիտանի օրինակը:

42. Կենտրոնական բանկը ոչ պիտանի դարձած լիցենզիայի կրկնօրինակը Կենտրոնական դեպոզիտարիային տալիս է նրա կողմից դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում: Լիցենզիայի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը՝ անկախ լիցենզիայի կրկնօրինակը տրամադրելու հիմքից:

43. Լիցենզիայի կրկնօրինակի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 10. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

44. Լիցենզիայի վերածևակերպման համար Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ է ներկայացնում լիցենզիայի վերածևակերպման մասին դիմում՝ կցելով համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը և լիցենզիայի վերածևակերպման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը: Լիցենզիայի վերածևակերպումն իրականացվում է համապատասխան փոփոխությունները ներառող լիցենզիայի նոր օրինակը Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրելու միջոցով՝ վերածևակերպման ենթակա լիցենզիան Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում:

45. Լիցենզիայի վերածևակերպումն իրականացվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

46. Լիցենզիայի վերածևակերպման մասին դիմումը մերժվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 185-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով:

ԳԼՈՒԽ 11. ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

47. Օրենքով սահմանված հիմքերով Կենտրոնական դեպոզիտարիայի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ստանալուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան 3 օրվա ընթացքում՝ կից գրությամբ լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

48. Կենտրոնական դեպոզիտարիայի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման բողոքարկումը հիմք չէ 3 օրվա ընթացքում լիցենզիան չվերադարձնելու համար:

ԲԱԺԻՆ V. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 12. ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ, ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՋԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

49. Սույն գլուխը սահմանում է նոր ստեղծվող և գործող Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական բանկ՝ երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը:

50. Գործարար ծրագիրը ամբողջական փաստաթուղթ է, որի խնդիրներն են.

1) ծառայել շահագրգիռ անձանց (մասնակիցներ, անդամներ, ներդրողներ, ղեկավարներ և այլ շահագրգիռ անձինք)՝ որպես մի ամփոփ փաստաթուղթ, որով կարող են գնահատվել Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության բնույթը և առանձնահատկությունները,

2) օգնել Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարներին՝ պարզաբանել, հստակեցնել և հետազոտել Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության զարգացման հնարավոր հեռանկարները, ծառայել Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարներին որպես հիմք, որով կարող են գնահատվել Կենտրոնական դեպոզիտարիայի փաստացի գործունեության արդյունքները և արդյունավետությունը,

3) օգնել Կենտրոնական դեպոզիտարիային՝ հետևողականորեն իրականացնել նախանշված նպատակները և խնդիրները պլանավորվող երեք տարիների ընթացքում,

4) Կենտրոնական բանկին ներկայացնել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պլանավորված գործունեությունները, որը Կենտրոնական բանկին հնարավորություն կտա գնահատել Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեությունը և նրա ընտրած ռազմավարությունը:

51. Գործարար ծրագրի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները.

1) իրատեսություն (առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն),

2) գնահատելիություն (կատարման արդյունքների գնահատման հնարավորություն),

3) համահունչություն (ծրագրի առանձին բաժինների և բաժինների գլուխների միջև պատճառահետևանքային կապի, ծրագրի ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն),

4) կոնկրետություն (վերնագրի ըստ էության ներկայացում, վերնագրից դուրս ավելորդ տեղեկատվության բացակայություն, խնդիրների ըստ էության դիտարկում),

5) ծրագրի հիմքում կարող են դրվել նաև այլ, սակայն նշված սկզբունքներին չհակասող սկզբունքներ:

52. Կենտրոնական դեպոզիտարիան լիցենզավորման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելիս, ինչպես նաև մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա փետրվարի 15-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում առաջիկա երեք տարիների իր գործարար ծրագիրը՝ համաձայն սույն գլխի: Ընդ որում, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 187-րդ հոդվածի 2-րդ մասերով սահմանված գործարար ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներառվում է գործարար ծրագրի կազմում:

53. Կենտրոնական դեպոզիտարիան մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև վերանայված ծրագիրը (գործարար ծրագրի փոփոխությունները), եթե տեղի է ունեցել Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը:

54. Ծրագիրը հաստատվում է Կենտրոնական դեպոզիտարիայի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի կողմից:

55. Ծրագիրը և ծրագրով նախատեսված տվյալները Կենտրոնական բանկ են ներկայացվում ինչպես փաստաթղթային, այնպես էլ էլեկտրոնային կրիչով:

56. Կենտրոնական դեպոզիտարիայի գործարար ծրագիրը առնվազն ներառում է քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համակարգերի, Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին կազմակերպական կառուցվածքի, գործունեության վայրերի, կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ տեխնիկական միջոցների, ինչպես նաև իր տնտեսական ցուցանիշների մանրամասն նկարագրությունը: Ծրագիրը պետք է ներառի նաև Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության նպատակները, խնդիրները, միջոցառումները, կատարվելիք գործարքների վերաբերյալ կանխատեսումները, ցուցակումների կանխատեսվող մակարդակը, կանխատեսվող հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի կանխատեսումը, կառավարման արդյունավետության ցուցանիշների կանխատեսումը (նշված կանխատեսումները իրականցվում են առնվազն 3 տարվա կտրվածքով), ինչպես նաև ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը (նախորդ տարվա խնդիրների կատարողականի վերլուծությունը, խնդիրների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնական պատճառները):

57. Ծրագիրը կարող է Կենտրոնական բանկի կողմից օգտագործվել Կենտրոնական դեպոզիտարիայի ռազմավարական կառավարման մակարդակը գնահատելու նպատակով:

ԳԼՈՒԽ 13. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

58. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Կենտրոնական դեպոզիտարիան՝ փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 օրվա ընթացքում Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում.

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 221-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փոփոխությունները,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության վայրի փոփոխությունը:

59. Ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի՝ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման համաձայն:

60. Կենտրոնական դեպոզիտարիան կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացված Կենտրոնական դեպոզիտարիայի կնիքով,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) Կենտրոնական դեպոզիտարիայի փոփոխված կանոնադրությունը (6 օրինակ), ընդ որում՝ կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված, կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետևամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի:

61. Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության վայրի փոփոխությունը գրանցելու համար սույն կանոնակարգի 60-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև՝

1) տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

2) տեխնիկական հագեցվածության պահանջների՝ սույն կանոնակարգի գլուխ 14-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը,

62. Կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրության գրանցման համար Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 60-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման ազդագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը:

63. Կենտրոնական բանկը պարտավոր է վերոհիշյալ փոփոխությունների գրանցման համար սույն գլխով սահմանված փաստաթղթերն ստանալու պահից 30-օրյա ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Փոփոխությունները գրանցվում են կամ դրանց գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ:

64. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել, բայց ոչ ավելի, քան մինչև կասեցումն ընկած օրերի և 30-օրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

ԳԼՈՒԽ 14. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

65. Կենտրոնական դեպոզիտարիան պետք է

1) ունենա սեփականության իրավունքով, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք,

2) ունենա կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց,

3) ունենա ծառայությունների մատուցման պայմանագրերի պահպանման համար առանձին պահոց,

4) ունենա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ),

5) ունենա էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,

6) ապահովի հաճախորդների ազատ մուտքը տարածք՝ հանձնարարագրերի, հարցումների և այլ փաստաթղթերի լրացման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հաշիվներից քաղվածքների և տեղեկանքների ստացման համար,

7) փաստաթղթային արժեթղթերի պահառություն իրականացնելու դեպքում ունենա պահոց և չհրկիզվող պահարան արժեթղթերի հավաստագրերի պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,

8) ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ՝ վարվող արժեթղթերի հաշիվների տվյալների բազայի էլեկտրոնային կրկնօրինակների և գործառնություններին վերաբերող փաստաթղթերի բնօրինակների պահպանման համար,

9) արժեթղթերի հաշվառման համակարգը էլեկտրոնային եղանակով վարելու դեպքում կիրառի այնպիսի համակարգ, որը կպաշտպանի արժեթղթերի հաշվառման ժամանակ օգտագործվող ողջ տեղեկատվությունը ոչ լիազորված օգտագործումից,

10) հնարավորություն ունենա օգտվելու արժեթղթերի էլեկտրոնային հաշվառման պահուստային համակարգից կամ իրականացնելու արժեթղթերի հաշվառումը թղթային եղանակով, այն դեպքում, երբ հիմնական ավտոմատացման համակարգը շարքից դուրս է եկել կամ այլ պատճառներով հնարավորություն չկա այն օգտագործել,

11) կիրառի արժեթղթերի հաշվառման միայն այնպիսի համակարգչային ծրագիր, որն ապահովում է օրենքով և սույն կետով սահմանված պահանջները,

12) տվյալների և տեղեկատվության կանոնավոր և անխափան փոխանակման հնարավորություն ունենա պահառուի և ռեեստրավարի, պահառուի և օտարերկրյա պահառուի միջև՝ համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով,

13) պահպանի արժեթղթերի հաշվառմանն առնչվող փաստաթղթերը (գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը), ինչպես նաև տվյալների բազան առնվազն 70 տարի,

14) այն դեպքում, երբ արժեթղթերի հաշվառումը իրականացվում է թղթային եղանակով, Կենտրոնական դեպոզիտարիան շաբաթվա վերջում պետք է իրականացնի արժեթղթերի հաշվառման մատյաններում և արժեթղթերի հաշիվներում տվյալ օրվա մուտքագրած տվյալների կրկնօրինակումը և ի պահ հանձնի դրանք Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքի չհրկիզվող պահարանում,

15) սույն կանոնակարգի սույն կետի 9-րդ ենթակետում նշված տվյալների բազայի կրկնօրինակները պետք է պատրաստվեն այնպիսի եղանակով, որ ցանկացած պահի հնարավոր լինի վերականգնել դրանց սկզբնական տեսքը: Տվյալների բազայի և արժեթղթերի հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակներ կարելի է չպատրաստել, եթե համապատասխան ժամանակահատվածի ընթացքում տվյալների բազայում և արժեթղթերի հաշվառման հաշիվներում և հաշվառման գրքերում մուտքեր կամ գրառումներ չեն եղել,

16) Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքում Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակցի՝ աշխատանքի վայրից բացակայության դեպքում արժեթղթերի հաշվառմանն առնչվող բոլոր թղթային կրիչով փաստաթղթերը (ներառյալ՝ գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը) պետք է պահվեն չհրկիզվող պահարանում կամ պահոցում:

Հավելված 1

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԿԴ

ԹԻՎ XXXX

ԼԻՑԵՆԶԻԱ

Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության

Իրավաբանական անձի անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____

Կ.Տ.

Տրված է՝ __ _____ 200_ թ.

Պետական տուրքը վճարված է՝ __ _____ 200_ թ.

Հավելված 2

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

_____

(կազմակերպության անվանումը (ֆիրմային անվանումը))

որոշում է կայացրել _____

(Կենտրոնական դեպոզիտարիայի)

գործունեության լիցենզիա ստանալու համար դիմելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ ____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության լիցենզիա:

_____

(Կենտրոնական դեպոզիտարիայի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները)

____ _____ 200___ թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անձնական տվյալներ

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
(օր/ամիս/տարի)

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի համարը և սերիան, ում կողմից և երբ է տրված _____
Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)

1.7. Հասցեն (մշտական և բնակության տվյալ պահին)

1.8. Հեռախոսահամար _____ 1.9. Էլեկտրոնային փոստի հասցե _____

1.9. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը, ինչպես նաև նախկինում Ձեր ունեցած մյուս անձնագրերի սերիան և համարը

Անունը, ազգանունը, հայրանունը _____

Կրելու ժամանակաշրջանը _____ Անձնագրի սերիան և համարը _____
(օր/ամիս/տարի)

2. Կենտրոնական դեպոզիտարիայի մասին տվյալներ

2.1. Կենտրոնական
դեպոզիտարիայի անվանումը _____

2.2. Գտնվելու վայրը

2.3. Հեռախոսահամար _____ 2.4. Ֆաքսի համար _____

3. Ղեկավար պաշտոնը

3.1. Առաջադրվող պաշտոնը _____

3.2. Արդյո՞ք նշանակված եք այդ պաշտոնում որպես ժամանակավոր պաշտոնակատար:

Եթե «այո»՝ նշել նշանակման ամսաթիվը: _____ *(օր/ամիս/տարի)*

3.3. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր դերը, իրավասությունները և պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար:
Դուք կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր մանրամասն նկարագիրը ներկայացնելու համար և կցել դրանք սույն հավելվածին:

4. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 179-րդ հոդվածի 1-ի մասի, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նշված հիմքերի մասին:
Մեկնաբանությունների համար կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր:

1) Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

2) Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո ☐	Ոչ ☐
3) Արդյո՞ք Դուք ունեք օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան մասնագիտական որակավորում	Այո ☐	Ոչ ☐
4) Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ և ունեք չմարված (չներված) պարտավորություններ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո ☐	Ոչ ☐
5) Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո ☐	Ոչ ☐
6) Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո ☐	Ոչ ☐
Նախկինում կամ ներկայումս ղեկավար հանդիսացող անձինք պետք է պատասխանեն նաև 7-ից 16-րդ հարցերին Նախկինում կամ ներկայումս նշանակալից մասնակցություն ունեցող անձինք պետք է պատասխանեն նաև 4.7-ից 9-րդ հարցերին		
7) Արդյո՞ք ՀՀ տարածքում գործող Կենտրոնական դեպոզիտարիայում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով Կենտրոնական դեպոզիտարիայի ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո ☐	Ոչ ☐
4.7. Արդյո՞ք այլ պետությունների Կենտրոնական դեպոզիտարիայի կամ այլ ֆինանսական հաստատություններում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով Կենտրոնական դեպոզիտարիան կամ ֆինանսական այլ հաստատությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո ☐	Ոչ ☐
4.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո ☐	Ոչ ☐

4.9. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված հիմքերով: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո		Ոչ	
4.10. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում միտումնավոր կերպով խախտել եք օրենքները և այլ իրավական ակտերը: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո		Ոչ	
4.11. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում վարել եք անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել եք վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո		Ոչ	
4.12. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում կատարել եք այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով Կենտրոնական դեպոզիտարիան կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո		Ոչ	
4.13. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում կատարել եք անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են Կենտրոնական դեպոզիտարիայի հաճախորդների շահերին: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո		Ոչ	
4.14. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում դրսևորել եք անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք Ձեր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ ստանձնած պարտականությունների նկատմամբ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո		Ոչ	
4.15. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում չեք կատարել Կենտրոնական բանկի հանձնարարականը կամ անտեսել եք Կենտրոնական բանկի նախազգուշացումը: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:*	Այո		Ոչ	

5. Կրթություն, որակավորում

Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել իր ռեզյումեն, որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

5.1. Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Հիմնական առարկաները	Հաճախումների ժամանակաշրջանը (___ թ-ից մինչև ___ թ.)	Գիտական աստիճան

5.2. Ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում: _____

6. Աշխատանքային գործունեություն

Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել իր ռեզյումեն, որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

6.1. Աշխատանքային գործունեությունը

Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, երաշխավորողի անունը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտականությունները

6.2. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ Կենտրոնական դեպոզիտարիայում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Հասցե	Հեռախոս
1.			
2.			

7. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

ԿԲ կողմից կարող են պահանջվել նաև 7.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները:

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:

Անհրաժեշտության դեպքում օգտագործեք լրացուցիչ թերթեր:

7.1. Նշեք՝ արդյո՞ք Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում ունեք կամ ունեցել եք նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից:

Կազմակերպության անվանումը	%	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումար (դրամով)
1.			
2.			

7.2. Նշեք՝ արդյո՞ք Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից:

Կազմակերպության անվանումը	%	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումար (դրամով)
1.			
2.			

7.3. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված՝ Կենտրոնական դեպոզիտարիայում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները (եթե այդպիսիք կան).

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), փոխկապակցվածության տեսակը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Բնակության վայրը	Հեռախոսը
1.			
2.			

8. Դրամային (կամ այլ) պարտավորությունները

8.1. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ):

8.2. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք կամ նախկինում ունեցել եք ՀՀ տարածքում գործող Կենտրոնական դեպոզիտարիայի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ պարտավորություններ (ներառյալ՝ ժամկետանց պարտավորություններ): Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ):

9. Այլ տեղեկատվություն

9.1 Արդյո՞ք Դուք անցյալում դիմել եք Կենտրոնական բանկ ղեկավարի որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը մասնակցելու նպատակով: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել, թե որ ղեկավար պաշտոնների համար:

9.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (բացառությամբ՝ 7.3 կետում նշված անձանց).

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), փոխկապակցվածության տեսակը		Աշխատանքի վայրը, պաշտոնը		Բնակության վայրը		Հեռախոսը
1.						
2.						

9.3. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)		Գործունեության վայրը		Գտնվելու վայրը/հեռախոսը
1.				
2.				

9.4. Ձեր կարծիքով այլ կարևոր տեղեկատվություն

10. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Հավելված 4

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունում ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ (ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաբանական անձ հանդիսացող բաժնետերեր (մասնակիցներ)						
Ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը		Պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, կապի միջոցները	Բաժնետոմսերի (բաժնեմասերի)		Բաժնետոմսերով (բաժնեմասով) հավաստվող ձայների	
			քանակը	տոկոսային մեծությունը	քանակը	տոկոսային մեծությունը
1						
2						
..						
Ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերեր (մասնակիցներ)						
Անունը, ազգանուն, բնակության վայրը		Անձնագրի սերիան և համարը	Բաժնետոմսերի (բաժնեմասերի)		Բաժնետոմսերով (բաժնեմասով) հավաստվող ձայների	
			քանակը	տոկոսային մեծությունը	քանակը	տոկոսային մեծությունը
1						
2						
...						

Հավելված 5

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունում ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ _____

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____
(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրի հասցեն)

_____
_____ կենտրոնական դեպոզիտարիային առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____ _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

__ _____ 200_ թ.

Կ.Տ.

Հավելված 6ա

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____
_____
(իրավաբանական անձի անվանումը)

որոշում է կայացրել _____
(Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)

կանոնադրական կապիտալում ձեռք բերել նշանակալից մասնակցություն (ավելացնել մասնակցությունն այնպես, որ ձայնի իրավունք տվող մասնակցությունը կազմի 20 (50, 75) տոկոս (տոկոսից ավելի)):

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք նշանակալից մասնակցության նախնական համաձայնության ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝_____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ նշանակալից մասնակցության ձեռքբերման համար Ձեր նախնական համաձայնությունը:

_____
(իրավաբանական անձի տնօրենի անունը , ազգանունը)

_____
(ստորագրությունը)

__ _____ 200_ թ.

Հավելված 6բ

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունում ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____
_____

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

որոշում է կայացրել _____

(Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)

կանոնադրական կապիտալում ձեռք բերել նշանակալից մասնակցություն (ավելացնել մասնակցությունն այնպես, որ ձայնի իրավունք տվող մասնակցությունը կկազմի 20 (50, 75) տոկոս (տոկոսից ավելի)):

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք նշանակալից մասնակցության նախնական համաձայնության ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ նշանակալից մասնակցության ձեռքբերման համար Ձեր նախնական համաձայնությունը:

_____
(ստորագրությունը)

__ _____ 200_ թ.

Հավելված 7ա

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունում ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐՈՂ (ՈՒՆԵՑՈՂ) ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավաբանական անձ- մասնակցի (կազմակերպության) տվյալներ

1.1. Անվանումը _____

1.2. Գտնվելու վայրը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)

1.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____
(օր/ամիս/տարի)

1.4. Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը, որտեղ մասնակիցն ակնկալում է ձեռք բերել նշանակալից մասնակցություն. _____

2. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

2.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ գումար _____ %

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ գումար _____ %

2.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) ձեռքբերման գինը _____

2.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ շուկայական արժեքը _____

3. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները

3.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները

3.2. Նշել ներդրման աղբյուրները՝
1.
2.
3.

3.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե բորսայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/ մասնակցության չափը (%)
1.		
2.		

4. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ.
ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև 4.2 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

4.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Բաժնետոմսերի քանակը	Անվանական արժեքը (դրամով)
1.			
2.			

5. Տեղեկություններ կազմակերպության մասնակիցների վերաբերյալ
ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև 5.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

5.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

5.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք.

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

5.3. Այլ մասնակցություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձինք.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար), անձի անունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Գտնվելու/ բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

6. Տեղեկություններ կազմակերպության ղեկավարների (դիտորդ խորհրդի անդամ, գործադիր մարմնի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ
ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել, որ կազմակերպության ղեկավարների համար լրացվի նաև հավելված 3-ը

Անունը, ազգանունը, անձնագրի համարը սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)	Բնակության վայրը
1.			
2.			

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:

Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար), անձի անունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Գտնվելու/ բնակության վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

8. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր ակնկալիքները տվյալ ներդրումից:

Եթե մեկնաբանությունների համար տեղը չի բավարարում, օգտագործեք լրացուցիչ թերթեր

9. Այլ տեղեկատվություն

9.1. Արդյո՞ք կազմակերպությունը նախկինում լրացրել է այս հարցաշարը: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել հարցաշարի լրացման ամսաթիվը

9.2. Արդյո՞ք կազմակերպությունն ունի 30 օր ժամկետանց/չմարված պարտականություններ: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

9.3. Արդյո՞ք կազմակերպության մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐

«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

9.4. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

10. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Տնօրենի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Կ. Տ.

Հավելված 7բ

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում բաշխակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ (ՈՒՆԵՑՈՂ) ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ֆիզիկական անձ-մասնակցի տվյալներ

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի սերիան և համարը _____
Սոցիալական քարտի համարը _____
(առկայության դեպքում)

1.7. Բնակության վայրը (մշտական և բնակության տվյալ պահին)

1.8. Հեռախոսահամար _____ 1.9. Էլեկտրոնային փոստի հասցե _____

1.10. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը.

Անունը, ազգանունը, հայրանունը _____

Կրելու ժամանակաշրջանը _____ Անձնագրի սերիան և համարը _____
օր/ամիս/տարի

1.11. Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը, որում մասնակիցն ակնկալում է ձեռք բերել նշանակալից մասնակցություն. _____

2. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

2.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ _____
հատ *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ _____
հատ *%*

2.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) վաճառքի գինը _____

2.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ հաշվեկշռային արժեքը

3. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները

3.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

4. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ
ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև 4.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

4.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Բաժնետոմսերի քանակը	Անվանական արժեքը (դրամով)
1.			
2.			

5. Կրթություն, որակավորում

5.1. Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Հաճախումների ժամանակաշրջանը (____ թ-ից մինչև ____ թ.)	Գիտական աստիճանը

5.2. Ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում _____

6. Աշխատանքային գործունեություն
Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել ինքնակենսագրությունը (տպագիր և հայերեն), որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

6.1. Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա դրությամբ.

Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, երաշխավորողի անունը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտականությունները

6.2. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ ֆինանսաբանկային համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անունը, ազգանունը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Բնակության վայրը	Հեռախոսը
1.			
2.			

7. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր դերը և պատասխանատվության ոլորտը որպես Կենտրոնական դեպոզիտարիայի մասնակից
Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

8. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր ակնկալիքները տվյալ ներդրումից
Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

9. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն
Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

9.1. Փոխկապակցված անձինք, որոնք ունեն նշանակալից մասնակցություն այլ կազմակերպություններում՝

Անձնագրի համարը
Սոցիալական քարտի համարը
Անուն, ազգանուն, փոխկապակցվածության տեսակ (առկայության դեպքում)

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

9.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված՝ Կենտրոնական դեպոզիտարիայում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները.

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Փոխկապակցվածության տեսակը	Բնակության վայրը, հեռախոսը
1.			
2.			

9.3. Այլ փոխկապակցված անձինք՝

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար), անձի անունը, անձնագրի համարը սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Գտնվելու/ բնակության վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

9.4. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ, որի կանոնադրական հիմնադրամում մտադիր եք ձեռք բերել նշանակալից մասնակցություն: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ)

9.5. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձը) ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ժամկետանց պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ)

10. Այլ տեղեկատվություն

10.1. Արդյո՞ք Դուք նախկինում լրացրել եք այս հարցաշարը Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել հարցաշարի լրացման ամսաթիվը:

10.2. Արդյո՞ք Ձեզ մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐
«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

10.3. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

11. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 8

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՅԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ՉԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ _____

(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը,
իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

հայտարարում եմ, որ _____-ում իմ

(Կենտրոնական դեպոզիտարիայի)

մասնակցության միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չեմ բերում:

Հավաստիացնում եմ, որ սույն տեղեկատվությունն արժանահավատ է: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևէ փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ փոփոխության օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

(օր/ամիս/տարի)

ՏԵՂԵԿԱՆՔ
ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Նշանակալից մասնակիցը

1. Անվանումը

2. Իրավաբանական անձի (կազմակերպության) տվյալներ

2.1. Անվանումը

2.2. Գտնվելու վայրը/ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)

2.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____
օր/ամիս/տարի

2.4. Կազմակերպության անվանումը, որում մասնակիցն ակնկալում է ձեռք բերել նշանակալից մասնակցություն.

3. Տեղեկություններ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության վերաբերյալ.

Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը	*գումար*	*%*
այդ թվում՝ ձայնի իրավունք տվող	*գումար*	*%*

4. Տեղեկություններ իրավաբանական անձի նշանակալից մասնակիցների վերաբերյալ

ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել 4.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

4.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք.

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

5. Տեղեկություններ կազմակերպության ղեկավարների (խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ.

Անունը, ազգանունը, անձնագրի համարը սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)	Բնակության վայրը
1.			
2.			

6. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն

Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար), անձի անունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Գտնվելու/ բնակության վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

7. Այլ տեղեկատվություն

7.1. Արդյո՞ք կազմակերպությունը նախկինում լրացրել է այս հարցաշարը: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել հարցաշարի լրացման ամսաթիվը:

7.2. Արդյո՞ք կազմակերպությունն ունի 30 օր ժամկետանց/չմարված պարտականություններ: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

7.3. Արդյո՞ք կազմակերպության մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ի մասով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐

«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

8. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Կ. Տ.

Հավելված 10ա

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ես՝ _____
(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

տեղեկացնում եմ, որ
_____-ի
(Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)

կանոնադրական կապիտալում ձեռք եմ բերել նշանակալից մասնակցություն (ավելացրել եմ իմ մասնակցությունը այնպես, որ ձայնի իրավունք տվող մասնակցությունս 20 (50, 75) տոկոս է (տոկոսից ավելի է)՝ կազմելով _____ տոկոս):

_____
(ֆիզիկական անձի համար՝ բնակության վայրը, կապի միջոցները, իրավաբանական անձի համար՝ գրանցման վայրը, կապի միջոցները)

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 10բ

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ես՝ _____
(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

տեղեկացնում եմ, որ իմ կողմից ձեռքբերված բաժնետոմսերի (բաժնետոմսերի) օտարման արդյունքում
_____-ում
(Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)

իմ՝ ձայնի իրավունք տվող մասնակցությունը նվազում է 10 (20, 50, 75) տոկոսից (10 և ավելի տոկոսով կամ դադարում եմ հսկել _____ -ը)՝
(Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)
կազմելով _____ տոկոս:

_____
(ֆիզիկական անձի համար՝ բնակության վայրը, կապի միջոցները, իրավաբանական անձի համար՝ գրանցման վայրը, կապի միջոցները)

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 11

«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02 Հավելվածի

Համարակալված, կնքված և կարված է

---------- (----------) թերթ:
Նշել թվերով, նշել տառերով

ԻՎ Լիցենզավորման ու գրանցման բաժնի պետ՝

---------- ----------
անուն, ազգանուն *ստորագրություն*

վերահսկող՝

---------- ----------
անուն, ազգանուն *ստորագրություն*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, 114-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը և 179-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հաստատել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը՝ համաձայն Հավելվածի (այսուհետ՝ Կանոնակարգ 4/05):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշման 15-րդ բաժինը և 58.1-3 (ա) ձևը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
23 հունվարի 2008 թ., N 15-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.02.08 թ. (ՀՀԳՏ N8 (282), 17.03.08):

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/05

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի (այսուհետ՝ օպերատոր), Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարներին ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշների ստուգման կարգը, ղեկավարների գրանցման, ղեկավարների թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը, ինչպես նաև կարգավորում է այդ հարցերի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված այլ հարաբերություններ:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի վրա:

3. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով, կամ մուտքագրվում են Կենտրոնական բանկ: Ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն ներդրումային ծառայություններ մատուցող անձի իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

4. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, 58-րդ հոդվածի 1-ին, 114-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ, 179-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված հետևյալ անձինք (այսուհետ՝ որակավորվող անձ) պետք է ունենան սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացված որակավորում.

1) ներդրումային ընկերության տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահը և անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, մասնաճյուղի տնօրենը,

2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահը և անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,

3) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող կամ նման ծառայություններ մատուցելու առաջարկությամբ հանդես եկող ֆիզիկական անձը,

4) բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը,

5) օպերատորի դիտորդ խորհրդի նախագահը և անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, վերահսկող ծառայության ղեկավարը և անդամը, կարգապահական հանձնաժողովի նախագահը կամ նման այլ մարմինների ղեկավարը,

6) Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի նախագահը և անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը և վերստուգող հանձնաժողովի ղեկավարը և անդամները կամ նման այլ մարմինների ղեկավարը և անդամները:

5. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, 58-րդ հոդվածի 1-ին, 114-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ, 179-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված հետևյալ անձինք չեն հանձնում սույն կանոնակարգով սահմանված որակավորման քննություն.

1) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կառուցվածքային ստորաբաժանումների (դեպարտամենտի, վարչության, բաժնի, խմբի կամ այլ միավորի) ղեկավարները,

2) ներդրումային ընկերության ներկայացուցչության ղեկավարը, մասնաճյուղի գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը,

3) բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, բանկի տնօրենության անդամները, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով որևէ կերպ բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցները: Սույն ենթակետով նշված անձինք որակավորվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշման:

4) վարկային կազմակերպության խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալը, վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը և վերստուգիչ հանձնաժողովի անդամները: Սույն ենթակետով նշված անձինք որակավորվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալը, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» Կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 578-Ն որոշման:

6. Սույն կանոնակարգի 4-րդ կետում սահմանված որակավորվող անձինք ղեկավար կամ ներդրումային ծառայություններ մատուցողի կամ նման ծառայություններ մատուցելու առաջարկությամբ հանդես եկողի պաշտոնում աշխատելու համար ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ գրանցվում են Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգի գլուխ 12-ով սահմանված կարգով:

7. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասում նշված մասնագիտական համապատասխանության չափանիշները սահմանվում են սույն կանոնակարգի գլուխ 13-ով:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) **«Կենտրոնական բանկ»**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

2) **«որակավորվող անձ»**՝ սույն կանոնակարգի 4-րդ կետում նշված անձինք,

3) **«հանձնաժողով»**՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,

4) «**թեկնածու**»՝ Կենտրոնական բանկում որակավորում ստանալու համար ներկայացված անձ,

5) **«ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանում»**՝ ներդրումային ընկերության մասնաճյուղ կամ ներկայացուցչություն:

9. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՉԵՎԸ

10. Որակավորվող անձի թեկնածուի որակավորման ստուգումն անցկացվում է Կենտրոնական բանկում գրավոր (թեստային) քննության կամ Կենտրոնական բանկի խորհրդի նիստում բանավոր հարցազրույցի միջոցով:

11. Որակավորման ստուգումը Կենտրոնական բանկի գրավոր (թեստային) քննության միջոցով անցնում են՝

1) ներդրումային ընկերության գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, մասնաճյուղի տնօրենը,

2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,

3) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը,

4) բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը,

5) օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, վերահսկող ծառայության ղեկավարը և անդամը, կարգապահական հանձնաժողովի նախագահը կամ նման այլ մարմինների ղեկավարը,

6) Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, վերստուգող հանձնաժողովի ղեկավարը և անդամները կամ նման այլ մարմինների ղեկավարը և անդամը:

12. Կենտրոնական բանկի խորհրդի նիստում բանավոր հարցազրույցի միջոցով որակավորման ստուգումն անցնում են՝

1) ներդրումային ընկերության տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահը և անդամները,

2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահը և անդամները,

3) օպերատորի դիտորդ խորհրդի նախագահը և անդամները,

4) Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի նախագահը և անդամը,

5) օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի անդամը, եթե նա ունի վերջին 5 տարում միջազգային հեղինակություն ունեցող օպերատորում կամ Կենտրոնական դեպոզիտարիայում ղեկավար պաշտոնում աշխատելու առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

13. Թեկնածուների որակավորման գրավոր ստուգումն անցկացվում է Կենտրոնական բանկի պատասխանատու ստորաբաժանման կողմից:

14. Կենտրոնական բանկի պատասխանատու ստորաբաժանումը վարում է որակավորման քննության մասնակցելու համար դիմած անձանց հաշվառման գրանցամատյան, որտեղ նշվում են դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, նրա կողմից ներկայացված փաստաթղթերի ցանկը:

ԳԼՈՒԽ 4. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

15. Գրավոր քննության կամ հարցազրույցի միջոցով մասնագիտական որակավորման ստուգմանը մասնակցելու համար թեկնածուն ներկայացնում է՝

1) դիմում՝ սույն կանոնակարգի հավելված 1-ի համաձայն,

2) անձնագրի պատճենը,

3) գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ սույն կանոնակարգի հավելված 2-ի համաձայն,

4) պետական տուրքի անդորրագիրը:

16. Գրավոր քննությունը կամ հարցրազրույցը անցկացվում են թեկնածուի կողմից 15-րդ կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտքագրվելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 5. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

17. Հանձնաժողովը քննության է առնում ներկայացված դիմումները և կայացնում որոշում որակավորման գրավոր քննությանը կամ հարցազրույցին մասնակցելու թույլտվության մասին: Հանձնաժողովը դիմող անձին չի թույլատրում մասնակցել որակավորման գրավոր քննությանը կամ հարցազրույցին, եթե

1) սույն կանոնակարգի 15-րդ կետում ներկայացված փաստաթղթերը թերի են կամ չեն համապատասխանում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ օրենքի հիման վրա սույն կանոնակարգով սահմանված պահանջներին,

2) անձը չի համապատասխանում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով, 114-րդ հոդվածի 3-րդ մասով, 179-րդ հոդվածի 1-ին մասով կամ սույն կանոնակարգով ղեկավարներին, ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ նրա անունից ներդրումային ծառայություններ մատուցող կամ նման ծառայություններ մատուցելու առաջարկությամբ հանդես եկող ֆիզիկական անձանց ներկայացվող պահանջներին,

3) որակավորման համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով որակավորված անձը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 213-րդ հոդվածի համաձայն զրկվել է որակավորումից:

18. Հանձնաժողովն իր որոշմամբ հաստատում է որակավորման գրավոր քննությանը կամ հարցազրույցին մասնակցող թեկնածուների ցուցակը: Հանձնաժողովն այդ որոշմամբ սահմանում է նաև գրավոր քննության կամ հարցազրույցի անցկացման տեղը, օրը և ժամը:

19. Հանձնաժողովը որոշում ընդունվելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմողին՝պահպանելով 16-րդ կետի պահանջը:

ԳԼՈՒԽ 6. ԳՐԱՎՈՐ (ԹԵՍՏԱՅԻՆ) ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

20. Գրավոր (թեստային) քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով: Քննության ընթացքին կարող են հետևել հանձնաժողովի անդամները, ինչպես նաև հանձնաժողովի համաձայնությամբ՝ Կենտրոնական բանկի այլ աշխատակիցներ:

21. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է սույն կանոնակարգի 16-րդ գլխում սահմանված թեմաների ցանկի հիման վրա:

22. Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի որոշմամբ և ենթակա չեն հրապարակման: Թեստերը վերանայվում են առնվազն տարին մեկ անգամ:

23. Թեստերը և դրանցում պարունակվող հարցերի քանակը տարբերակվում են ըստ որակավորվող անձանց (ելնելով նրանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության չափանիշներից) հետևյալ խմբերի՝

Որակավորվող անձ	Հարցերի քանակ
1. Ներդրումային ընկերության ղեկավար, այդ թվում՝	
1.1. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, 1.2. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, 1.3. ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ,	100 հարց
1.4. մասնաճյուղի տնօրեն,	80 հարց
2. Օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ղեկավար, այդ թվում՝	
2.1. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, 2.2. ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ, 2.3. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ,	100 հարց
3. Օպերատորի ղեկավար, այդ թվում՝	
3.1. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ կամ նման այլ մարմնի ղեկավար, 3.2. վերահսկող ծառայության կամ նման այլ մարմի ղեկավար և անդամ, 3.3. կարգապահական հանձնաժողովի նախագահ կամ նման այլ մարմնի ղեկավար,	100 հարց

4. Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, այդ թվում՝	
4.1. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ կամ նման այլ մարմնի ղեկավար, 4.2. վերստուգող հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ,	100 հարց
5. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը	40 հարց
6. Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը	80 հարց

24. Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե:

25. Թեստերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է 3-ից 4 պատասխան, որոնցից մեկն է միանշանակ ճիշտ և լիարժեք:

26. Թեստի հարցի միանշանակ ճիշտ և լիարժեք պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը, ինչպես նաև հարցին չպատասխանելը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ և լիարժեք պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:

27. Թեկնածուին թույլատրվում է մասնակցել թեստային քննությանը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում:

28. Հայերեն լեզվին չտիրապետող թեկնածուների գրավոր քննության անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում՝ հանձնաժողովի անդամներից մեկի, կամ հանձնաժողովի համաձայնությամբ՝ Կենտրոնական բանկի այլ աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար հայերեն լեզվին չտիրապետող թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 2 րոպե:

29. Թեստավորումն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում, որն ապահովված է համապատասխան պայմաններով:

30.Հանձնաժողովի անդամներից մեկը, կամ հանձնաժողովի համաձայնությամբ՝ Կենտրոնական բանկի այլ աշխատակիցը ստուգում է թեկնածուի ինքնությունը և թույլատրում է նրան մուտք գործել թեստավորման անցկացման սենյակ, որտեղ թեկնածուն կարող է զբաղեցնել ցանկացած ազատ սեղան: Թեկնածուների մուտքը սենյակ դադարեցվում է թեստավորումն սկսելուց տասը րոպե առաջ:

31. Հանձնաժողովի անդամներից մեկը կամ հանձնաժողովի համաձայնությամբ՝ Կենտրոնական բանկի այլ աշխատակիցը, թեկնածուներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը:

32. Թեստավորման սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ միանշանակ ճիշտ և լիարժեք) պատասխանը:

33. Գրավոր քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից, ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված:

34. 33-րդ կետում նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից, և նրա վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

35. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև թեստավորման առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակն սպառվելուց հետո թեկնածուին հանձնվում է իր կատարած աշխատանքի՝ համակարգչի կողմից կատարված վերլուծությունը՝ արտահայտված տոկոսով:

ԳԼՈՒԽ 7. ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

36. Թեստերի հարցերի գնահատումը կատարվում է հետևյալ կերպ. թեկնածուի կողմից միավորների 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում հանձնաժողովն արձանագրում է դրական եզրակացություն, և թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

37. 36-րդ կետով սահմանված պայմանները չբավարարելու դեպքում հանձնաժողովն արձանագրում է բացասական եզրակացություն:

38. Թեկնածուի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է հանձնաժողովը:

ԳԼՈՒԽ 8. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

39. Կենտրոնական բանկի խորհուրդը հարցազրույցի արդյունքներով որոշում է սույն կանոնակարգի 12-րդ կետում նշված որակավորվող անձանց համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը սույն կանոնակարգի 12-րդ գլխով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

ԳԼՈՒԽ 9. ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

40. Թեկնածուն կարող է բողոքարկել անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքները՝ քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ: Դիմումը պետք է ուսումնասիրվի պատասխանատու ստորաբաժանման կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ներկայացվի հանձնաժողովի քննարկմանը:

ԳԼՈՒԽ 10. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

41. Անցկացված գրավոր քննության կամ բանավոր հարցազրույցի արդյունքներով՝ հանձնաժողովի դրական կարծիքի հիման վրա՝ Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ թեկնածուին տրվում է որակավորման վկայական քննության անցկացման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման (որակավորման վկայականի ձևը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի)՝

1) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահի և անդամների պաշտոնների համար,

2) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների, գործադիր տնօրենի տեղակալի համար, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի պաշտոնների համար,

3) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի և ներդրումային ընկերության գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի, ներքին աուդիտի ղեկավարի և ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար,

4) ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար,

5) օպերատորի դիտորդ (տնօրենների) խորհրդի նախագահի և անդամների պաշտոնների համար,

6) օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի և անդամի, գործադիր տնօրենի տեղակալի, կարգապահական հանձնաժողովի նախագահի պաշտոնների համար,

7) օպերատորի վերահսկող ծառայության ղեկավարի և անդամի պաշտոնների համար,

8) Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի նախագահի և անդամների պաշտոնների համար,

9) Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի և անդամի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,

10) Կենտրոնական դեպոզիտարիայի վերստուգող հանձնաժողովի ղեկավարի և անդամի պաշտոնների համար,

11) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձի համար, այդ թվում `

ա. Բրոքեր՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից.

բ. Խորհրդատու՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից.

գ. Դիլեր՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից.

դ. Կառավարիչ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից.

ե. Տեղաբաշխող՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից.

զ. Պահառուի աշխատակից՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից:

42. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավարի որակավորման վկայականի համար օգտագործվում են՝ «ՆԸ XXXX», Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարի համար՝ «ԿԴ XXXX», օպերատորի ղեկավարի որակավորման վկայականի համար՝ «ՕՊ XXXX» ծածկագրերը:

43. Որակավորման վկայականները տրվում են երեք տարի ժամկետով:

44. Կենտրոնական բանկի նախագահը կարող է ներդրումային ընկերության, Կենտրոնական դեպոզիտարիայի և օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի (գործադիր տնօրեն, վարչության նախագահ) որակավորման վկայականի գործողության ժամկետը երկարաձգել ևս 3 (երեք) տարով՝ առանց սույն կանոնակարգով նախատեսված՝ որակավորման ստուգման, եթե սույն կետով նշված ղեկավարների պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ներդրումային ընկերությունը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան չեն խախտել հիմնական տնտեսական նորմատիվ, նշված ղեկավարների նկատմամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա պատասխանատվության միջոց չի կիրառվել, և նշված ղեկավարները նախորդ 3 տարիների ընթացքում վերապատրաստվել են առնվազն 150 ժամ:

45. Տրված որակավորման վկայականները հաշվառվում են համապատասխան մատյանում, որտեղ գրառվում են վկայական ստացած անձանց անունը, ազգանունը, գրանցման վայրը, բնակության վայրը (գրառվում է գրանցման վայրից տարբեր լինելու դեպքում), Կենտրոնական բանկի որոշման համարը և ամսաթիվը, հանձնաժողովի արձանագրության համարը և ամսաթիվը, որակավորման վկայականի համարը և տրման ամսաթիվը:

46. Որակավորումից զրկված անձը պարտավոր է զրկման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ վերադարձնել որակավորման վկայականը:

47. Որակավորման վկայական ունեցող որակավորվող անձինք որակավորման վկայականը կորցնելու դեպքում կարող են այդ մասին գրավոր հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում Կենտրոնական բանկի նախագահի անունով: Կորցրած վկայականը հանձնաժողովի կողմից համարվում է անվավեր, իսկ դրա փոխարեն դիմումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում տրվում է որակավորման նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրումով:

ԳԼՈՒԽ 11. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎՈՂ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

48. Սույն կանոնակարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել նաև ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրեն, ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձ:

49. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահը ի պաշտոնե կարող է լինել տվյալ ներդրումային ընկերության կամ օտարերկրյան ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի (տնօրենության, վարչության) անդամ՝ առանց գործադիր մարմնի (տնօրենության, վարչության) անդամի որակավորման վկայական ստանալու:

ԳԼՈՒԽ 12. ՂԵԿԱՎԱՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

50. Որակավորվող անձին գրանցելու կամ որակավորվող անձանց կազմում փոփոխությունները գրանցելու համար ներդրումային ծառայություններ մատուցող անձը, Կենտրոնական դեպոզիտարիան կամ օպերատորը Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) որակավորվող անձին գրանցելու կամ որակավորվող անձանց կազմում փոփոխություն կատարելու մասին ներդրումային ծառայություններ մատուցող անձի, Կենտրոնական դեպոզիտարիայի կամ օպերատորի միջնորդագիրը՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի, Կենտրոնական դեպոզիտարիայի կամ օպերատորի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ներդրու-

մային ծառայություններ մատուցող անձի, Կենտրոնական դեպոզիտարիայի կամ օպերատորի կնիքով,

2) որակավորվող անձի նշանակման կամ որակավորվող անձանց կազմում փոփոխություն կատարելու մասին իրավասու մարմնի որոշումը,

3) որակավորվող անձանց ընդհանուր ցուցակը՝ կատարված փոփոխություններով,

4) որակավորվող անձի գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի,

5) այլ կազմակերպությունում աշխատելու դեպքում՝ տվյալ կազմակերպության գրավոր համաձայնությունը,

6) բարձրագույն կրթության դիպլոմի (վկայականի) պատճենը, իսկ դրա բացակայության դեպքում՝ այլ կրթության դիպլոմի (վկայականի) պատճենը,

7) աշխատանքային գրքույկի պատճենը՝ բացառությամբ օտարերկրյա քաղաքացիների:

51. Սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված գրավոր քննություն անցած որակավորվող անձի թեկնածուի գրանցման համար հանձնաժողովն անցկացնում է հարցազրույց հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովի նիստում հարցազրույցի ընթացքում ստուգվում է գրանցման պահին որակավորվող անձի թեկնածուի համապատասխանությունը սույն կանոնակարգի գլուխ 13-ով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

52. Սույն կանոնակարգի 12-րդ կետում նշված բանավոր հարցազրույց անցնող որակավորվող անձի գրանցման կամ գրանցման մերժման վերաբերյալ Կենտրոնական բանկի նախագահի որոշումն ընդունվում է սույն կանոնակարգի 39-րդ կետում նշված Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման պահից հինգ օրվա ընթացքում:

53. Որակավորվող անձի գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ, եթե

1) առկա են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 2-րդ մասով, 114-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանները,

2) որակավորվող անձի թեկնածուն չի համապատասխանում սույն կանոնակարգի գլուխ 13-ով սահմանված չափանիշներից առնվազն մեկին,

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 13. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

54. Որակավորվող անձի թեկնածուն պետք է բավարարի նաև հետևյալ չափանիշները՝

Որակավորվող անձի թեկնածու	Չափանիշ
1. Ներդրումային ընկերության ղեկավարներ, այդ թվում՝	
1.1. տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահ, խորհրդի անդամ	ա) բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ և բ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
1.2. գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
1.3. մասնաճյուղի տնօրեն	ա) բարձրագույն կրթության դեպքում՝ առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ արժեթղթերի ոլորտում և բ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական

1.4. ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ներդրումային ընկերության ներքին աուդիտի ղեկավարը, ներքին աուդիտի անդամը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամը	ա) բարձրագույն կրթություն և բ) 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
1.5. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահը և գլխավոր հաշվապահի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
2. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը	ա) բարձրագույն կրթություն և բ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
3. Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
4. Օպերատորի ղեկավար, այդ թվում՝	
4.1. դիտորդ խորհրդի նախագահ և անդամ	ա) բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ և բ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
4.2. գործադիր մարմնի ղեկավար և անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
4.3. կարգապահական հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
4.4. վերահսկող ծառայության կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	ա) բարձրագույն կրթություն և բ) 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
5. Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, այդ թվում՝	
5.1. դիտորդ խորհրդի նախագահ և անդամ	ա) բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, իսկ բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ և բ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
5.2. գործադիր մարմնի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա) բարձրագույն կրթություն և բ) առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
5.3. վերստուգող հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավար և անդամ	ա) բարձրագույն կրթություն և բ) 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և գ) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական

55. 54-րդ կետում նշված աշխատանքային փորձը վերաբերում է գրանցման պահին նախորդող 10 տարիներին՝ բացառությամբ տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահի, խորհրդի անդամի համար նախատեսված աշխատանքային փորձի:

56. Սույն կանոնակարգի իմաստով՝ անձը համարվում է բարձրագույն կրթություն ունեցող, եթե նա ավարտել է Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն և (կամ) ստացել է Հայաստանի Հանրապետության և (կամ) միջազգային ճանաչում ունեցող ֆինանսական ոլորտի մասնագիտական որակավորման վկայական:

ԳԼՈՒԽ 14. ՂԵԿԱՎԱՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

57. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ որակավորվող անձը հանվում է գրանցումից, եթե՝

1) որակավորման վկայականի գործողության ժամկետը լրացել է, և որակավորվող անձը չի ստացել որակավորման նոր վկայական,

2) որակավորվող անձը զրկվել է որակավորման վկայականից,

3) ներդրումային ծառայություններ մատուցող անձը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան դիմել են համապատասխան միջնորդությամբ:

58. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ որակավորվող անձին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար ներդրումային ծառայություններ մատուցող անձը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան՝ փոփոխություններ կատարելու վերաբերյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի իրավասու մարմնի կողմից որոշում ընդունելու պահից եռօրյա ժամկետում Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) որակավորվող անձին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կնիքով,

2) ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 15. ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ

59. Սույն կանոնակարգի իմաստով՝ որակավորվող անձի ժամանակավոր պաշտոնակատար են համարվում այն անձինք, որոնք առանց համապատասխան պաշտոնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման սույն կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում են ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի որակավորվող անձի պարտականություններ:

60. Ներդրումային ընկերության, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար կարող են նշանակվել (նշված պարտականությունները կարող են կատարել) միայն տվյալ ներդրումային ընկերության, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր տնօրենի տեղակալը կամ գործադիր մարմնի անդամը, կամ գործադիր տնօրենի որակավորման վկայական ունեցող տվյալ ներդրումային ընկերության, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի այլ աշխատակիցը:

61. Բանկի կամ վարկային կազմակերպության կազմում ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար կարող են նշանակվել միայն տվյալ բանկի կամ վարկային կազմակերպության այլ աշխատակիցը, որն ունի սույն կանոնակարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման վկայական:

62. Ներդրումային ընկերության գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող է կատարել) տվյալ ներդրումային ընկերության գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող ներդրումային ընկերության այլ աշխատակիցը:

63. Որակավորվող անձի պաշտոններում առանց որակավորման վկայականի (բացառությամբ՝ գործադիր մարմնի և գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատարների, որոնց համար որակավորման վկայականը պարտադիր է), որպես ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, պաշտոնավարման ժամկետ կարող է սահմանվել ոչ ավելի, քան 3 ամիս: Որակավորման վկայական ունեցող, սակայն Կենտրոնական բանկի կողմից չգրանցված անձինք (բացառությամբ՝ գործադիր մարմնի, որի համար Կենտրոնական բանկում գրանցումը պարտադիր է) կարող են աշխատել որպես ղեկավարի պաշտոնակատար ոչ ավելի, քան 3 ամիս: Նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ որակավորվող անձի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետը:

64. Ներդրումային ընկերության, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահի և անդամների թեկնածուներն իրավունք ունեն իրականացնել համապատասխանաբար խորհրդի նախագահի և խորհրդի անդամի պարտականությունները միայն Կենտրոնական բանկում համապատասխան պաշտոնում գրանցման պահից: Ներդրումային ընկերության, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

ԲԱԺԻՆ III. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԼՈՒԽ 16. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

65. Կենտրոնական բանկում որակավորվող անձինք որակավորման ստուգումը անցնում են ստորև աղյուսակում նշված թեմաներով, ընդ որում՝ «V» նշանը նշանակում է տվյալ թեման վերաբերում է, «-» նշանը նշանակում է չի վերաբերում:

Թեմա	Ներդրումային ընկերություն			Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք					Օպերատոր			Կենտրոնական պահառուական գործունեություն		
	Ներդրումային ընկերության տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահ, խորհրդի անդամ	Ներդրումային ընկերության ներդրումային ծառայությունների մրցակցության գործընթացի վերահսկողության ներքին կանոնակարգի մշակում, վերանայում և ներդրում	Ներդրումային ընկերության ներդրումային ծառայությունների մրցակցության գործընթացի վերահսկողության ներքին կանոնակարգի մշակում, վերանայում և ներդրում	Բրոքեր	Խորհրդատու	Դիլեր, տեղաբաշխող	Արժեթղթերի փաթեթ կառավարողներ	Գործակալ	Դիտորդ (տնօրենների) խորհրդի փոխնախագահ	Դիտորդ (տնօրենների) խորհրդի անդամ	Վերադիտորդ	Դիտորդ (տնօրենների) խորհրդի փոխնախագահ	Դիտորդ (տնօրենների) խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	Վերադիտորդ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1. Արժեթղթերի շուկայի օրենսդրություն														
1.1. «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի հիմնական հասկացությունները	-	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
1.2. «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի հիմնական նպատակը և կարգավորման առարկան	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
1.3. Արժեթղթերի տեսակները	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-		V
1.4. Արժեթղթերի հրապարակային առաջարկը	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	V	V
1.5. Ազդագիրը, ծրագրային ազդագիրը, դրանց նկատմամբ պահանջները	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.6. Թողարկողի կամ տեղաբաշխողի կողմից ազդագրում տեղեկատվության բացթողնման կամ խեղաթյուրման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցումը	-	V	-	V	V	V	V	-	-	-	-	-	-	-
1.7. Գովազդի նկատմամբ պահանջները	-	V	-	-	V	-		-	-	V	-	-	-	-
1.8. Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի հետգնման պարտավորությունը	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	
1.9. Արժեթղթերի տեղաբաշխումը, տեղաբաշխման կասեցումը, տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին հաշվետվությունները	-	V	V	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.10. Արժեթղթերի հրապարակային առաջարկն օտարերկրյա թողարկողների կողմից	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.11. Օտարերկրյա պետությունում առաջարկի վերաբերյալ տեղեկացման պարտականությունը	-	V	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-
1.12. Ներդրումային ծառայությունները, դրանց տեսակները	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	-	V

1.13. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք և նրանց գործունեության շրջանակները	-	V	-	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
1.14. Ներդրումային ընկերությունները և նրանց գործունեության շրջանակները	-	V	-	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
1.15. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միությունները	-	V	-	-	-	-	-		-	V	-	-	-	-
1.16. Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան, լիցենզիայի գործողության շրջանակը	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	-	-
1.17. Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցումը	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
1.18. Ներդրումային ընկերության գրանցումը և լիցենզավորումը, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.19. Օտարերկրյա ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղը և ներկայացուցչությունը, դրանց գրանցումը	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.20. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության մասնաճյուղը և ներկայացուցչությունը, դրանց գրանցումը	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.21. Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծառայությունների մատուցումն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից	-	V	-	V	V	V	V	V	-	V	V	-	-V	V
1.22. Ներդրումային ընկերության կառավարման մարմինները և ղեկավարները, դրանց կազմավորումը, իրավասությունները և պարտականությունները, ներդրումային ընկերության փոխհարաբերությունները ներդրումային ընկերության խորհրդի հետ	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.23. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավարների մասնագիտական համապատասխանությունն ու որակավորումը	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.24. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավարների նկատմամբ պահանջները	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.25. Ներդրումային ծառայությունների մատուցման սահմանափակումները	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.26. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.27. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.28. Ներդրումային ծառայություն մատուցող անձի կողմից հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.29. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի հաճախորդների միջոցների հաշվառումը և պաշտպանությունը	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	V
1.30. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից գրանցումներ վարելը	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.31. Ներդրումային ընկերությունների համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները, հատուկ տնտեսական նորմատիվները	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.32. Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման կազմակերպումը	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.33. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	-	-
1.34. Ներդրումային ընկերությունների կողմից հրապարակվող տեղեկատվությունը և հաշվետվությունները	-	V	V	V	V	V	V	V	-	V	-	-	-	-
1.35. Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության տարեկան աուդիտը	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.36. Ներդրումային ընկերության վերակազմակերպումը, միացումը	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.37. Ներդրումային ընկերության լուծարումը, ինքնալուծարումը, պահանջների բավարարման հերթականությունը	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

1.38. Ներդրումային ընկերության լուծարային հանձնաժողովը, նրա գործունեությունը, նրա նկատմամբ պահանջները, վերահսկողությունը և հաշվետվությունները	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.39. Օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելը	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.40. Օպերատորի գործառնական ռիսկերի կառավարումը	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.41. Օպերատորի կանոնադրական կապիտալը և ընդհանուր կապիտալը	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.42. Օպերատորի կառավարումը, կառավարման մարմինները, դրանց կազմավորումը, իրավասությունները և պարտականությունները, կառավարման մարմինների փոխհարաբերությունները դիտորդ խորհրդի հետ	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	-	-	-
1.43. Օպերատորի կողմից սահմանվող շուկայի կանոնները, դրանց նկատմամբ պահանջները, գրանցումը Կենտրոնական բանկում	-	V	-	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.44. Արժեթղթերի կարգավորված շուկայի կազմակերպումը	-	V	-	V	V	V	-	-	V	V	V	-	-	-
1.45. Օպերատորի պարտականությունները	-	V	-	-	V	-	-	-	V	V	V		-	-
1.46. Շուկայի մասնակիցների հավասարությունը	-	V	-	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.47. Առևտրի ազդագիրը, առևտրի ազդագրի հրապարակման պահանջն արժեթղթերի՝ շուկայում առևտրին թույլտվության դեպքում, առևտրի ազդագրի հրապարակումը և արժեթղթերի թույլտվությունը շուկայում առևտրին, այլ պահանջներ	-	V	-	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.48. Անձի և օպերատորի միջև վեճերի լուծումը	-	V	-	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.49. Շուկայի մասնակցի պարտավորությունները	-	V	-	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.50. Հաշվետու թողարկողի պարտականությունները	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.51. Հաշվետու թողարկողների կողմից տեղեկատվության պարբերական բացահայտումը	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.52. Հաշվետու թողարկողի կողմից էական փաստերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտումը	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.53. Հաշվետու թողարկողի աուդիտն իրականացնող անձը և հաշվետվությունների աուդիտը	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.54. Գործարքները շուկայում, դրանց նկատմամբ Կենտրոնական բանկի սահմանած պահանջները	-	V	-	V	V	V	-	-	-	V	V	-	-	-
1.55. Արժեթղթերի առևտրի կասեցումը և դադարեցումը	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.56. Օպերատորի կողմից գործարքների գրանցումը	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.57. Հաշվետու թողարկողի կամ ներդրումային ծառայություններ մատուցող անձի սնանկության հատուկ պայմանները	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.58. Օպերատորի կողմից հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը պահպանելու պարտականությունը	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.59. Օպերատորին տրամադրվող տեղեկատվությունը, դրա նկատմամբ պահանջները	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.60. Օպերատորի կողմից տեղեկատվության հրապարակումը, հրապարակման կարգը	-	V	-	V	V	V	-	-	V	V	V	-	-	-
1.61. Շուկան վերահսկելու օպերատորի պարտականությունը	-	V	-	-	-	-	-	-	V	V	V	-	-	-
1.62. Օպերատորի հաշվետվությունները Կենտրոնական բանկին	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	-	-	-
1.63. Օպերատորի կողմից կիրառվող տույժերը	-	V	-	V	V	V	V	-	V	V	V	-	-	-
1.64. Ֆոնդային բորսան, նրա անդամները	-	V	-	V	V	V	-	-	V	V	V	-	-	-
1.65. Բորսայի կանոնները	-	V	V	V	V	V	-	-	V	V	V	-	-	-
1.66. Բորսայում արժեթղթերի ցուցակումը, ցուցակման պայմանները	-	V	-	V	V	V	-	-	V	V	V	-	-	-

1.67. Բաժնետիրական ընկերությունների կողմից արժեթղթերը հանձնելու առաջարկը, առաջարկի պայմանները և դրանց փոփոխումը, արժեթղթերը հանձնելու առաջարկով նախատեսվածից ավելի ներկայացված արժեթղթերի ընդունումը և այլն	V	V	-	V	V	V	V	-	V	V	V	V	V	V
1.68. Բաժնետիարկան ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելը, դրա նկատմամբ պահանջները, տեղեկատվության հրապարակումը, մասնակցության ձեռքբերման կամ օտարման հաստատումը	V	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
1.69. Շուկայի չարաշահումը	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.70. Ներքին տեղեկությունները, դրանց անբարեխիղճ օգտագործման արգելումը, բացահայտումը, բացահայտման հետածգումը, բացահայտումը դրանց արտահոսքի դեպքում	-	V	V	V	V	V	V		-	V	V	-	-	-
1.71. Ինսայդերը, ինսայդերների ցուցակը	-	-	-	V	V	V			-	V	V	-	-	-
1.72. Թողարկողի կողմից ներքին տեղեկությունների չբացահայտման կամ ոչ ճշգրիտ բացահայտման արդյունքում կրած վնասների փոխհատուցումը	-	V	-	-	V	-	-	-	-	-	-	-	-	-
1.73. Ներքին տեղեկությունների կապակցությամբ թողարկողի ընդհանուր պարտականությունները	-	V	-	V	V	V	V	-	-	V	V	-	-	-
1.74. Հաշվետու թողարկողի կողմից գործարքների վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը և բացահայտումը	-	-	-		V	-	-	-	-	V	V	-	-	-
1.75. Հաշվետու թողարկողի կողմից ներքին կանոններ սահմանելու պարտականությունը	-		-	-	V	-	-	-	-	V	V	-	-	-
1.76. Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումները, դրանց վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը	-	V	-	V	V	V	V		-	V	V	-	-	-
1.77. Ներդրումային առաջարկությունները	-	V	-	V	V	V	V		-	-	-	-	-	-
1.78. Կենտրոնական դեպոզիտարիան, նրա գործառույթները	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	V	V	V
1.79. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալը և ընդհանուր կապիտալը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	V
1.80. Կենտրոնական դեպոզիտարիայի բաժնետոմսերը և բաժնետերերը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	V
1.81. Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարումը, կառավարման մարմինները, դրանց կազմավորումը, իրավասությունները և պարտականությունները, կառավարման մարմինների փոխհարաբերությունները դիտող խորհրդի հետ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	V
1.82. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնները և դրանց գրանցումը	-	V	-	V	V	V	V	V	-	-	-	V	V	V
1.83. Կենտրոնական դեպոզիտարիայում առկա տեղեկատվության պահպանումը և պաշտպանությունը	-	-	-	-	-	-	-	V	-	-	-	V	V	V
1.84. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկությունները և հաշվետվությունները	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V	V
1.85. Կենտրոնական դեպոզիտարիայի վերահսկողական իրավասությունը	-	V	-	-	-	-	-	V	-	-	-	V	V	V
1.86. Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումը և լիցենզավորումը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V
1.87. Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների գների կարգավորումը	-	V	-	V	-	V	-	V	-	-	-	V	V	V
1.88. Արժեթղթերի պահառությունը, արժեթղթերի պահառության համակարգը	-	V	V	-	-	-	-	V	-	-	-	-	V	V
1.89. Պահառուներին ներկայացվող պահանջները	-	V	V	-	-	-	-	V	-	-	-	-	V	V
1.90.Արժեթղթերի հաշիվները	-	V	V	V	V	V	V	V	-	-	-	-	V	V
1.91. Պարտադիր կենտրոնացված ռեեստրավարման ենթակա արժեթղթերը	-	V	-	-	V	-	-	V	-	-	-	-	V	V
1.92. Սեփականության իրավունքի փոխանցման պահը	-	V	V	V	V	-	-	V	-	-	-	-	V	V
1.93. Սեփականատերերի ցուցակի տրամադրումը	-	V	-	-	-	-	-	V	-	-	-	-	V	V

1.94. Արժեթղթերի հաշվարկային համակարգը, նրա անդամները	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.95. Արժեթղթերի հաշվարկային համակարգի գործառնական ռիսկերի կառավարումը	-	V	-	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.96. Կենտրոնական դեպոզիտարիային տրված փոխանցման հանձնարարականների անվերադարձելիությունը	-	V	-	V	-	V	-	V	-	V	-	-	V	V
1.97. Վերջնահաշվարկը, վերջնահաշվարկի կատարման ապահովումը	-	V	-	V	-	V	-	V	-	V	-	-	V	V
1.98. Հաշվարկային համակարգի անդամի սնանկության հատուկ կանոնները	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V
1.99. Կենտրոնական դեպոզիտարիայի սնանկությունը	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	V	V
1.100. Կենտրոնական բանկի կողմից պատասխանատվության միջոցներ կիրառելը	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
1.101. Պատասխանատվությունը գնային չարաշահումների համար	-	V	V	V	V	V	-	-	-	-	-	-	-	-
1.102. Հսկող անձանց պատասխանատվությունը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.103. Գործարար ծրագիրը	V	V	V	-	V	-	-	-	V	V	V	V	V	V
1.104. Մասնագիտական որակավորման պահանջը, մասնագիտական որակավորումից զրկելը	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
1.105. Որակավորված մասնագետներ ունենալու, նրանց կողմից պաշտոններ վարելու նկատմամբ պահանջը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
1.106. Ղեկավարների նկատմամբ պահանջները	V	V	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V
1.108. Նշանակալից մասնակցությունը	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
1.109. Փոխկապակցված անձինք	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
2. Ընդհանուր տնտեսական օրենսդրություն և քաղաքացիաիրավական հարաբերություններ														
2.1. Արժեթուղթը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ		V	-	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
2.2. Քաղաքացիական իրավունքների սուբյեկտներ	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
2.3. Պայմանագրից ծագող պարտավորություններ	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
2.4. Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին	-	V	V	V	V	V	V	V	-	-	V	-	-	V
2.5. Գործարքներ: Ներկայացուցչություն: Ժամկետներ: Հայցային վաղեմություն	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
2.6. ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և այլ խնդիրները	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V	V
2.7. ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումները և վերահսկողությունը	-	V	V	V	V	V	V	V	-	V	V	-	V	V
2.8. Բաժնետիրական ընկերության իրավական վիճակը	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
2.9. Բաժնետիրական ընկերության և այլ անձանց պատասխանատվությունը	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
2.10. Բաժնետիրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-
2.11. Բաժնետիրական ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-
2.12. Բաժնետիրական ընկերությունների տեսակները	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-
2.13. Բաժնետիրական ընկերության ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-
2.14. Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, ընկերության զուտ ակտիվները	V	V	V	-	-	-	-	-	V	-	V	V	V	V
2.15. Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրը	V	V	V	-	-	-	-	V	V	-	V	V	V	V
2.16. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը	V	V	-	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
2.17. Բաժնետիրական ընկերության խորհուրդը և գործադիր մարմինը	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
2.18. Բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V

2.19. Հաշվառումը և հաշվետվությունները, բաժնետիրական ընկերության մասին տեղեկությունները	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
2.20. Հիմնական դրույթներ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2.21. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2.22. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և նրա մասնակիցների պատասխանատվությունը	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2.23. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2.24. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ստեղծումը	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2.25. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2.26. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2.27. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարումը	V	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2.28. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերակազմակերպումը և լուծարումը	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3. Հաշվապահական հաշվառման օրենսդրություն և ՀՀՀՀՍ և հարկային օրենսդրություն														
3.1. Ֆինանսական հաշվետվությունները և դրանց տարրերը	-	V	V	-	V	-	-	-	-	V	V	-	V	V
3.2. Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.3. Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները	-	V	V	-	_	-	-	-	-	V	V	-	V	V
3.4. Կազմակերպության ղեկավարի իրավունքները և պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.5. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, դրա նշանակությունը	-	V	V	-	-	-	-	-	-	V	-	-	V	-
3.6. Ներդրումային ընկերության ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը, այդ հաշվետվությունների պոտենցիալ սպառողները/օգտագործողները	-	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3.7. Համախմբված հաշվետությունների կազմման դեպքերը	-	V	V	-	-	-	-	-	-	_	-	-	_	-
3.8. Հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները	-	V	v	-	-	-	-	-	-	V	-	-	V	-
3.9. Ներդրումային ընկերությունների պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտման համար	-	V	V	-	-	-	-	-	-	_	-	-	_	-
3.10. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.11.Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.12. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.13. Հաշվապահական հաշվառման գրանցամատյանները	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.14. Ստորագրության իրավունքը հաշվապահական հաշվառման փաստաթղթերում	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.15. Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.16. Հաշվապահական տեղեկատվության գաղտնիությունը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.17. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.18. Ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V

3.19. ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, դրա կիրառման մասին հրահանգը	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.20. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՀՀՍ1	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.21. «Պաշարներ» ՀՀՀՀՍ 2	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.22. «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՀՀՍ 7	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.23. «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ՀՀՀՀՍ 8	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.24. «Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՀՀՍ 10	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.25. «Շահութահարկ» ՀՀՀՀՍ 12	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.26. «Հիմնական միջոցներ» ՀՀՀՀՍ 16	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.27. «Վարձակալություն» ՀՀՀՀՍ 17	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.28. «Հասույթ» ՀՀՀՀՍ 18	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.29. «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՀՀՍ 20	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.30. «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՀՀՍ 21	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.31. «Ֆինանսական գործիքներ. բացահայտումը և ներկայացումը» ՀՀՀՀՍ 32	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.32. «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՀՀՍ 34	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.33. «Ակտիվների արժեզրկում» ՀՀՀՀՍ 36	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.34. «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՀՀՍ 37	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.35. «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՀՀՍ 38	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.36. «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՀՀՍ 39	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.37. «Ներդրումային գույք» ՀՀՀՀՍ 40	-	-	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V
3.38. Հարկերի և հարկային արտոնությունների տեսակները	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.39. Հարկ վճարողների իրավունքները, պարտականությունները և հսկողությունը հարկերի վճարման նկատմամբ	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.40. Հարկային պարտավորություններից ավելի բյուջե վճարված գումարները հարկ վճարողին վերադարձնելու կարգը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.41. Հարկվող սուբյեկտները և հարկվող օբյեկտը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.42. Համախառն եկամուտը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.43. Համախառն եկամտի նվազեցումները	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
3.44. Ոչ ռեզիդենտի հարկումը	-	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V
4. Այլ														
4.1. Ներքին հսկողության համակարգը, խորհրդի (դիտորդ խորհրդի) իրավունքները և պարտականությունները պատշաճ ներքին հսկողության համակարգ ապահովելու գործում	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.2. Ներդրումային ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման դերը	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4.3. Խորհրդի փոխհարաբերությունները ներքին աուդիտի ստորաբաժանման հետ (ներդրումային ընկերության դեպքում)	V	-	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4.4. Խորհրդի (դիտորդ խորհրդի) նիստերը, խորհրդին (դիտորդ խորհրդին) կից հանձնաժողովները	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.5. Խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.6. Խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամների նկատմամբ հնարավոր կիրառվող պատասխանատվության միջոցները	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-

4.7. Շահութաբաժինների բաշխում, կանոնադրական հիմնադրամի ավազեցում	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.8. Գույքի ձեքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքում	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V	-
4.9. Ներքին տեղեկատվական համակարգը, խորհրդին ներկայացվող հաշվետվությունները	V	V	V	-	-	-	-	-	V	V	V	V	V	V
4.10. Անվճարունակության հիմքերը	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.11. Ռազմավարության մշակման հիմնական սկզբունքները	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.12. Գործադիր մարմնի աշխատանքի գնահատման և վերահսկման սկզբունքները	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.13. Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրությունը	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V	-
4.14. Անձնակազմի կառավարման քաղաքականությունը, դրա նշանակությունը, խորհրդի իրավունքները և պարտականություններն անձնակազմի կառավարման գործում	V	V	-	-	-	-	-	-	V	V	-	V	V	-
4.15. Գործունեության պլանավորման, գնահատման և որոշումների կայացման հիմնական սկզբունքները	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.16. Ներդրումային ընկերության (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) գործունեությանը բնորոշ ռիսկերի տեսակները	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.17. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առանձնահատկությունները	V	-	-	-	-	-	-	-	V	-	-	V	-	-
4.18. Կասկածելի գործառնությունների դադարեցումը և կասեցումը	V	-	-	-	-	-	-	-	V	V	V		-	-
4.19. Ներդրումային ընկերության միջոցների տեղաբաշխման հնարավոր ուղիները, գործառնությունների տեսակները, ներդրումային ընկերության մրցունակությունը միջոցների տեղաբաշխման տեսանկյունից	V	V	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4.20. Օգտագործվող վճարահաշվարկային համակարգերը, դրանց առանձնահատկությունները, դրանց անվտանգության ապահովման նախապայմանները	V	-	-	-	-	-	-	-	V	-	V	V	-	V
4.21. Մարքետինգային ռազմավարություն/քաղաքականություն	V	V	-	-	V	-	-	-	V	-	-	V	-	-

ԳԼՈՒԽ 17. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

66. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից արժեթղթերի շուկայի ընդհանուր մասնագիտական որակավորում ունեցող մասնագիտացված անձի վերահսկող ծառայության ղեկավարը, վերահսկող ծառայության անդամը կարող են ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից ներկայացվել Կենտրոնական բանկ՝ որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձի ներքին աուդիտի ղեկավար կամ անդամ գրանցվելու համար, ինչպես նաև Հայաստանի ֆոնդային բորսայի և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի ընդհանուր որակավորում ունեցող վերահսկիչ ծառայության ղեկավարը և անդամը կարող են Հայաստանի ֆոնդային բորսայի կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներկայացվել Կենտրոնական բանկ՝ որպես համապատասխանաբար օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխանաբար վերահսկող ծառայության և վերստուգող հանձնաժողովի ղեկավար կամ անդամ գրանցվելու համար:

67. 2000 թվականի հուլիսի 6-ի «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնելու որակավորումը գործում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հանայստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարի ժամկետով: Ընդ որում՝

1) «ընդհանուր մասնագիտական որակավորում» մասնագիտական որակավորումը համապատասխանում է սույն կանոնակարգի 41-րդ կետի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ենթակետերով սահմանված որակավորմանը.

2) «բրոքերի (դիլերի) որակավորում» մասնագիտական որակավորումը համապատասխանում է սույն կանոնակարգի 41-րդ կետի 11-րդ ենթակետի «ա», «բ», «գ» և «ե» պարբերությամբ սահմանված որակավորմանը.

3) «հավատարմագրային կառավարիչի որակավորում» մասնագիտական որակավորումը համապատասխանում է սույն կանոնակարգի 41-րդ կետի 11-րդ ենթակետի «դ» պարբերությամբ սահմանված որակավորմանը.

4)«պահառուի մասնագետի որակավորում» մասնագիտական որակավորումը համապատասխանում է սույն կանոնակարգի 41-րդ կետի 11-րդ ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված որակավորմանը:

Հավելված 1

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05 Հավելվածի

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Դ Ի Մ ՈՒ Մ

Հարգելի պարոն _____

Խնդրում եմ թույլատրել ինձ մասնակցելու _____
(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)
պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար որակավորման ստուգմանը:

Դիմող՝ _____ _____
(անունը, ազգանունը) *(ստորագրությունը)*

_____
(հեռախոսահամարը, հասցեն)

__ _____ 200_ թ.

Հավելված 2

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05 Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անձնական տվյալներ

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
(օր/ամիս/տարի)

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի համարը և սերիան, ում կողմից և երբ է տրված _____
Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում) _____

1.7. Հասցեն (մշտական և բնակության տվյալ պահին)

1.8. Հեռախոսահամար _____ 1.9. էլեկտրոնային փոստի հասցե _____

1.9. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը ինչպես նաև նախկինում Ձեր ունեցած մյուս անձնագրերի սերիան և համարը .

Անունը, ազգանունը, հայրանունը _____

Կրելու
ժամանակաշրջանը _____ Անձնագրի սերիան և համարը _____
(օր/ամիս/տարի)

2. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի), որի ղեկավար պետք է հանդիսանաք, մասին տվյալներ

2.1. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) անվանումը _____

2.2. Գտնվելու վայրը _____

2.3. Հեռախոսահամար _____ 2.4. Ֆաքսի համար _____

ՀՀ ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) ղեկավարի համար նշել նաև մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը:

3. Ղեկավար պաշտոնը

3.1. Առաջադրվող պաշտոնը _____

3.2. Արդյո՞ք նշանակված եք այդ պաշտոնում որպես ժամանակավոր պաշտոնակատար: Եթե «այո»՝ նշել նշանակման ամսաթիվը: _____
(օր/ամիս/տարի)

3.3. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր դերը, իրավասությունները և պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար:
Դուք կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր մանրամասն նկարագիրը ներկայացնելու համար և կցել դրանք սույն հավելվածին:

4. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով կամ 114-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով կամ 179-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նշված հիմքերի մասին:
Մեկնաբանությունների համար կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր

1) Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

2) Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

3) Արդյո՞ք Դուք ունեք օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան մասնագիտական որակավորում: Այո ☐ Ոչ ☐

4) Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ և ունեք չմարված (չներված) պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

5) Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

6) Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

Նախկինում կամ ներկայումս ղեկավար հանդիսացող անձինք պետք է պատասխանեն նաև 7-ից 16-րդ հարցերին
Նախկինում կամ ներկայումս նշանակալից մասնակցություն ունեցող անձինք պետք է պատասխանեն նաև 4.7-ից 9-րդ հարցերին

7) Արդյո՞ք ՀՀ տարածքում գործող ներդրումային ծառայությունների մատուցման համակարգում (օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան) հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

4.7. Արդյո՞ք այլ պետությունների ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի) կամ այլ ֆինանսական հաստատություններում Ձեր պաշտոնավարման ընթացքում, Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան) կամ ֆինանսական այլ հաստատությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.9. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված հիմքերով: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.10. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում միտումնավոր կերպով խախտել եք օրենքները և այլ իրավական ակտերը: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.11. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում վարել եք անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել եք վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.12. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում կատարել եք այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան) կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.13. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում կատարել եք անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) հաճախորդների շահերին: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐

4.14. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում դրսևորել եք անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք Ձեր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) նկատմամբ ստանձնած պարտականությունների նկատմամբ:
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

Այո ☐ Ոչ ☐

4.15. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում չեք կատարել Կենտրոնական բանկի հանձնարարականը կամ անտեսել եք Կենտրոնական բանկի նախազգուշացումը:
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

Այո ☐ Ոչ ☐

5. Կրթություն, որակավորում

Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել իր ռեզյումեն, որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

5.1. Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Հիմնական առարկաները	Հաճախումների ժամանակաշրջանը (----թ-ից մինչև ----թ.)	Գիտական աստիճան

5.2. Ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում: _____

6. Աշխատանքային գործունեություն

Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել իր ռեզյումեն, որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

6.1. Աշխատանքային գործունեությունը

Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, երաշխավորողի անունը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտականությունները

6.2. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող ներդրումային ծառայությունների մատուցման (օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում) աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Հասցե	Հեռախոս
1.			
2.			

7. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

ԿԲ կողմից կարող են պահանջվել նաև 7.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները:

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:

Անհրաժեշտության դեպքում օգտագործեք լրացուցիչ թերթեր

7.1. Նշեք այն ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) անվանումը, որի կանոնադրական կապիտալում ունեք կամ ունեցել եք նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել՝ սկսած ներկայումս առկա ամենախոշորներից.

Կազմակերպության անվանումը	%	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումար (դրամով)
1.			
2.			

7.2. Նշեք այն ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) անվանումը, որի կանոնադրական կապիտալում Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել՝ սկսած ներկայումս առկա ամենախոշորներից.

Կազմակերպության անվանումը	%	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումար (դրամով)
1.			
2.			

7.3. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված՝ ներդրումային ծառայությունների մատուցման համակարգում, օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները (եթե այդպիսիք կան).

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), փոխկապակցվածության տեսակը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Բնակության վայրը	Հեռախոսը
1.			
2.			

8. Դրամային (կամ այլ) պարտավորությունները

8.1. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ)

8.2. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք կամ նախկինում ունեցել եք ՀՀ տարածքում գործող ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) կամ այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ պարտավորություններ (ներառյալ՝ ժամկետանց պարտավորություններ): Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ)

9. Այլ տեղեկատվություն

9.1. Արդյո՞ք Դուք անցյալում դիմել եք Կենտրոնական բանկ ղեկավարի որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը մասնակցելու նպատակով: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել Կենտրոնական բանկ դիմելու ամսաթիվը (օր/ամիս/տարի)

9.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (բացառությամբ՝ կետ 7.3. կետում նշված անձանց).

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպում), փոխկապակցվածության տեսակը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Բնակության վայրը	Հեռախոսը
1.			
2.			

9.3. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)	Գործունեության վայրը	Գտնվելու վայրը/հեռախոսը
1.		
2.		

9.4. Այլ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

10. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Հավելված 3

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05 Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

Ո Ր Ա Կ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N____

Հիմք ընդունելով որակավորման և մասնագիտական համապատասխանության մասին ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի դրական եզրակացությունը («__» _____ 200_ թ. թիվ _____ արձանագրություն), համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի «__» _____ 200_ թ. թիվ _____ որոշման՝ սույն վկայականը տրվում է

_____ -ին _____
(անուն, ազգանուն) *(անձնագրի տվյալները, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում))*

_____
(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև _____ 200_ թ.

Կ.Տ. Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ _____

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասերը, 35-րդ հոդվածի 2-րդ մասը, 36-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ մասը, 38-րդ հոդվածի 10-րդ կետը, 40-րդ հոդվածը, 43-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, 44-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերը, 45-րդ հոդվածի 4-րդ , 5-րդ և 8-րդ մասերը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, 54-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ մասերը, 221-րդ հոդվածի 1-ին մասը, 222-րդ հոդվածի 17-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը՝ համաձայն Հավելվածի (այսուհետ՝ Կանոնակարգ 4/01):

2. 2008 հունիսի 30-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ««Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 15-րդ, 16-րդ, 17-րդ բաժինները, 58.1-3(ա), 62.1-2(գ), 62.1ա-1, 62.1բ-1, 62.1բ-2, 62.1գ-1, 62.1ե-1, 62.1զ-1, 66.4-2ՄԱ, 66.4-3ՄԱ, 66.4-4ՄԱ, 66.4-5ՄԱ ձևերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
23 հունվարի 2008 թ., N 16-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.02.08 թ. (ՀՀԳՏ N8 (282), 17.03.08):

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՋԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԲԱՆԿԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ»*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/01

ԲԱԺԻՆ Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումային ընկերությունների գրանցման և լիցենզավորման, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցման, ներդրումային ընկերությունների տարածքային ստորաբաժանումների՝ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման ու գրանցման, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունների Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու համաձայնություն տալու, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին Կենտրոնական բանկին տեղեկացման, ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների երեք տարվա գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, ներդրումային ընկերության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները, ինչպես նաև կարգավորում է այդ հարցերի հետ կապված և Հայաստանի Հանրապետության օրենքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված այլ հարաբերություններ:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող ներդրումային ընկերությունների, նրանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների վրա, իսկ սույն կանոնակարգի 21-րդ գլուխը տարածվում է ներդրումային ծառայություններ մատուցող բանկերի և վարկային կազմակերպությունների վրա:

3. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով, կամ մուտքագրվում են Կենտրոնական բանկ: Ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն ներդրումային ծառայություններ մատուցող անձի իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումային ընկերությունների գրանցման և լիցենզավորման, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցման, ներդրումային ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցման, ինչպես նաև վերագրանցման և վերալիցենզավորման գործընթացներն իրականացվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) **«Կենտրոնական բանկ»**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

* *Պաշտոնական հրապարակման մեջ Հավելվածի վերնագրում սպրդել է տեխնիկական վրիպակ:*

2) **«հանձնաժողով»**՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,

3) **«ծրագիր»**՝ Կենտրոնական բանկ ներկայացվող երեք տարվա գործարար ծրագիր,

4) «**ֆինանսական խումբ (միություն)**»՝ որևէ երկրի օրենսդրության իմաստով ֆինանսական խումբ կամ ֆինանսական միություն,

5) «ֆինանսական կազմակերպություն»՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, կենսաթոշակային ֆոնդ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների և (կամ) այլ իրավական ակտերի համաձայն ֆինանսական կազմակերպություն համարվող այլ անձինք,

6) «ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանում»՝ ներդրումային ընկերության մասնաճյուղ կամ ներկայացուցչություն,

7) «ներդրումային ընկերություն»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ,

8) «ներդրումային ծառայություններ մատուցող անձ»՝ ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը, բանկը ու վարկային կազմակերպությունը:

6. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7. Ներդրումային ընկերության պետական գրանցման և լիցենզավորման, ինչպես նաև վերագրանցման և վերալիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է հիմնադիր ժողովի կողմից լիազորված անձի կողմից վավերացված, իսկ վերագրանցման և վերալիցենզավորման դեպքում դիմումը ներկայացվում է դիմումատուի կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2ա-ի,

բ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի գլուխ 17-ի,

գ. ներդրումային ընկերության ղեկավարների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի,

դ. ընկերության բաժնետերերի (մասնակիցների) վերաբերյալ տեղեկությունները (տեղեկանքը) ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

ե. կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված, կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի,

2) ներդրումային ընկերության ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը,

3) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա՝ նաև նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

4) տեղեկություններ դիմորդին խորհրդատվություն տրամադրող անձանց վերաբերյալ (իրավաբանական անձի համար՝ ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, կապի միջոցները, իսկ ֆիզիկական անձանց համար՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը, կապի միջոցները, ինչպես նաև խորհրդատուի իրավասություններն ու պարտականությունները),

5) ընկերության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

6) վերագրանցվող և վերալիցենզավորվող ընկերությունների համար՝ այն իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկություններ, որոնց որևէ դասի բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է ներդրումային ընկերությանը (տվյալ անձի անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, դիմորդին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող՝ տվյալ անձի բաժնային արժեթղթերի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ)):

8. Ներդրումային ընկերությունները՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 222-րդ հոդվածի 17-րդ մասով նախատեսված վերագրանցման և վերալիցենզավորման ժամանակ չեն ներկայացնում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով պահանջվող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալը Կենտրոնական բանկում կամ ներդրումային ընկերության հետ չփոխկապակցված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում բացված կուտակային հաշվին մուծումը հավաստող փաստաթուղթը:

9. Լիցենզիա ստանալու դիմումի մեջ կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության դեպքում Կենտրոնական բանկի կողմից գրանցման և լիցենզիայի տրամադրման մասին որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկի կողմից ստանալու պահից: Նշված թերությունները պետք է վերացվեն Կենտրոնական բանկի կողմից դրանց մասին տեղեկացման օրվանից առավելագույնը 10 օրվա ընթացքում: Ընդ որում՝ նշված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում գրանցման և լիցենզավորման դիմումը համարվում է մերժված:

ԳԼՈՒԽ 4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

10. Գործող ներդրումային ընկերությունը լրացուցիչ ներդրումային ծառայության մատուցման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերը: Ընդ որում՝ լրացուցիչ ներդրումային ծառայություն մատուցելու լիցենզիայի դիմումը ներկայացվում է դիմումատուի կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2ա-ի, իսկ գործարար ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի գլուխ 17-ի:

ԳԼՈՒԽ 5. ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

11. Կենտրոնական բանկը բավարարում է ներդրումային ընկերության պետական գրանցման և լիցենզավորման, վերագրանցման և վերալիցենզավորման, ինչպես նաև լրացուցիչ ներդրումային ծառայության մատուցման լիցենզիա ստանալու դիմումը՝ օրենքով և սույն կանոնակարգով սահմանված կարգով:

12. Ներդրումային ընկերության գրանցումը (վերագրանցումը) կատարվում է, ինչպես նաև լիցենզիան Կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրվում է Կենտրոնական բանկի կողմից ստեղծված լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) եզրակացության հիման վրա:

13. Ներդրումային ընկերության գրանցման և լիցենզիայի տրամադրման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը կայացնելու պահից 5 օրվա ընթացքում հիմնադիրներին տրվում է ներդրումային ընկերության գրանցման վկայականը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 5ա-ի, իսկ լիցենզիան՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի: Ընդ որում՝ լրացուցիչ ներդրումային ծառայության մատուցման լիցենզավորման դեպքում ներդրումային ընկերությանը տրված լիցենզիայում նշվում են միայն թույլատրված նոր ծառայություն(ներ)ը:

14. Գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև ներդրումային ընկերության ղեկավարների գրանցման համար պահանջվող փաստաթղթերը: Ներդրումային ընկերության ղեկավարները գրանցվում են՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերա-

տորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» Կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման:

15. Կենտրոնական բանկը մերժում է ներդրումային ընկերության գրանցումն ու լիցենզավորումը կամ լրացուցիչ ներդրումային ծառայություն մատուցելու լիցենզիայի տրամադրումը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածում նշված հիմքերով:

16. Գրանցման և լիցենզավորման, ինչպես նաև լրացուցիչ ներդրումային ծառայության մատուցման լիցենզիա ստանալու դիմումի մերժման դեպքում դիմումատուն կարող է կրկին դիմել լիցենզիա ստանալու համար:

ԳԼՈՒԽ 6. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

17. Օտարերկրյա ներդրումային ընկերությունը մասնաճյուղի գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման համար դիմումը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2բ-ի,

բ. մասնաճյուղի գործարար ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի գլուխ 17-ի,

գ. օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի,

դ. օտարերկրյա ներդրումային ընկերությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 7ա-ի և 7 բ-ի,

ե. կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված, կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի,

2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը,

3) մասնաճյուղի տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

4) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,

5) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

6) հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 12-ի:

18. Օտարերկրյա ներդրումային ընկերությունը ներկայացուցչության գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2բ-ի,

բ. օտարերկրյա ներդրումային ընկերությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի հավելվածներ 7ա և 7բ-ի,

գ. կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված, կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի,

2) ներկայացուցչության ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը,

3) ներկայացուցչության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

4) ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,

5) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը:

19. Օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին Կենտրոնական բանկի նախագահի կողմից մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին որոշում կայացնելու պահից 5 օրվա ընթացքում հիմնադիրներին տրվում է օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման վկայական՝ համաձայն հավելված 5բ-ի:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

20. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերը գրանցվում են Կենտրոնական բանկի կողմից: Գրանցման համար Կենտրոնական բանկ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. մասնաճյուղ գրանցելու վերաբերյալ ներդրումային ընկերության միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 2գ-ի,

բ. ստեղծվող մասնաճյուղի գործարար ծրագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի գլուխ 17-ի,

գ. մասնաճյուղի ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի,

դ. կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված: Ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի,

2) ներդրումային ընկերության իրավասու կառավարման մարմնի որոշումը կամ խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին,

3) մասնաճյուղի տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

4) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

5) հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 12-ի:

21. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության ներկայացուցչությունները գրանցվում են Կենտրոնական բանկի կողմից: Գրանցման համար Կենտրոնական բանկ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. ներկայացուցչություն գրանցելու վերաբերյալ ներդրումային ընկերության միջնորդագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2գ-ի,

բ. կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված, կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի,

2) ներկայացուցչության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

3) ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,

4) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև պատշաճ կարգով տրված լիազորագիրը:

22. Ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին Կենտրոնական բանկը կայացնում է որոշում, որն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հիմնադիրներին տրվում է ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման վկայական՝ համաձայն հավելված 5գ-ի:

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

23. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի համաձայնությունն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝ ստեղծվող մասնաճյուղի գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի գլուխ 17-ի,

2) ներդրումային ընկերության իրավասու կառավարման մարմնի որոշումը մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու մասին կամ խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածք,

3) մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրությունը, ընդ որում՝ կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված, կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 11-ի,

4) մասնաճյուղի ղեկավարների գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի, ղեկավարների ստորագրությունների նմուշները,

5) ներդրումային ընկերության իրավասու կառավարման մարմնի որոշումը մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին կամ իրավասու կառավարման մարմնի նիստի արձանագրությունից քաղվածք,

6) մասնաճյուղի կամ ներկայացուցչության տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

24. Կենտրոնական բանկը տալիս է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու համաձայնությունը կամ մերժում է միջնորդագիրը՝ այն Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից 30-օրյա ժամկետում:

25. Ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության ստեղծման համաձայնության մասին Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշում ընդունելուց հետո այն տրվում է հիմնադիրներին 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 9. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ) ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

26. Ներդրումային ընկերությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամանակով: Ընդ որում՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշման մեջ անհրաժեշտ է հստակ նշել այն ժամկետը, որի ավարտից հետո մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է վերսկսված:

27. Ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվություն ստանալու նպատակով ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվություն ստանալու միջնորդագիր՝ ներդրումային ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,

2) ներդրումային ընկերության իրավասու մարմնի որոշումը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման մասին,

3) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման հիմնավորումները,

4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հավաստող փաստաթուղթ:

28. Սույն կանոնակարգի 24-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո 20-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը տալիս է իր համաձայնությունը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման մասին կամ մերժում՝ մերժման հիմքերի մասին տասնօրյա ժամկետում տեղեկացնելով ներդրումային ծառայություններ մատուցող անձին: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանման գործունեության ժամանակավոր դադարեցման դիմումի քննության 20-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկությունների ստացումից հետո միջնորդագրով ներկայացված փաստաթղթերի քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և 20-օրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

29. Կենտրոնական բանկի կողմից 20-օրյա ժամկետում դիմումը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին ներդրումային ընկերությանը չտեղեկացնելու դեպքում մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է ժամանակավորապես դադարեցված՝ նշված 20-օրյա ժամկետի լրանալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:

30. Մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախագահի որոշումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներդրումային ընկերությունը մասնաճյուղի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն հազար տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում և Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը, ինչպես նաև տեղակայում այդ տեղեկատվությունը ներդրումային ընկերության ինտերնետային կայքում:

31. Մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման դեպքում ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գրանցումից հանելու մասին միջնորդագիր՝ ներդրումային ընկերության իրավասու մարմնի կողմից լիազորված անձի կամ այդ մարմնի անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ,

2) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին ներդրումային ընկերության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք,

3) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման հիմնավորումները,

4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթ,

5) մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման վկայականը:

32. Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ մասնաճյուղի կամ ներկայացուցչության ժամանակավոր դադարեցումը, ինչպես նաև դադարեցումը, եթե

1) ներկայացված փաստաթղթերում արտացոլված տվյալները անարժանահավատ են կամ կեղծ, կամ

2) ներկայացված փաստաթղթերը թերի են, կամ

3) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ներդրումային ընկերության հաճախորդների հետագա բնականոն սպասարկումն ապահովված չէ, կամ

4) տվյալ տարածաշրջանում բացակայում է ներդրումային ծառայությունների մատուցումը որևէ այլ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից:

33. Կենտրոնական բանկը Կենտրոնական բանկի որոշմամբ գրանցում է մասնաճյուղի գործունեության դադարեցումը, եթե մասնաճյուղը Կենտրոնական բանկում գրանցվելու պահից վեց ամսվա ընթացքում չի իրականացրել ներդրումային ծառայությունների մատուցման գործունեություն:

ԲԱԺԻՆ III. ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 10. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

34. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ձայնի իրավունք տվող մասնակցության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ավելացման մտադրություն ունեցող իրավաբանական անձը, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար տվյալ իրավաբանական անձի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6ա-ի,

2) ներդրումային ընկերության միջնորդությունը իրավաբանական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ ներդրումային ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ներդրումային ընկերության կնիքով (միայն գործող ներդրումային ընկերությունների համար),

3) ներդրումային ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (իսկ նորաստեղծ ներդրումային ընկերության համար՝ հիմնադիրների) որոշումը՝ մասնակցի ներգրավմանը կամ առկա մասնակցության ավելացմանը համաձայնություն տալու մասին (բացառությամբ՝ բաց բաժնետիրական ընկերությունների),

4) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը,

5) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի հիմնադիր պայմանագիրը և կանոնադրությունը՝ մինչև միջնորդագրի ներկայացման պահը կատարված փոփոխություններով,

6) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի մասնակիցների ցուցակը՝ նշելով նրանց մասնակցության չափը (տոկոսով) կանոնադրական կապիտալի մեջ,

7) տեղեկանք՝ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7ա-ի,

8) իրավաբանական անձի վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները: Եթե սույն ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, կամ հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին: Մինչև երեք տարի գործունեություն ունեցող անձանց համար ներակայացվում է տեղեկատվություն իրականացված գործունեության ողջ ժամկետի համար,

9) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին (օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին) համապատասխանա,

10) տեղեկանք՝ տրված պետական լիազորված մարմնի կողմից՝ դատարանի որոշմամբ սնանկ կամ անվճարունակ ճանաչված չլինելու վերաբերյալ: Օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից ներկայացվում է տեղեկանք՝ տրված նրա գրանցման երկրում սնանկ կամ անվճարունակ ճանաչված չլինելու վերաբերյալ տեղեկանք տալու լիազորություններ ունեցող մարմնի կողմից, եթե այդպիսի մարմին կա,

11) տեղեկանք՝ տրված իրավասու մարմնի կողմից բյուջեի և կենսաթոշակային հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքերի կամ դրանց բացակայության վերաբերյալ (ռեզիդենտների համար),

12) ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն),

13) նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձի դիրքորոշումը ներդրումային ընկերության կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ,

14) հայտարարարություն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին,

15) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ ներդրումային ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 8-ի, հակառակ դեպքում պետք է ներկայացնի իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի գլուխ 11-ով սահմանված փաստաթղթերը:

Սույն կետում նշված հայտարարությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ այն ներդրումային ընկերության միջնորդությամբ, որում անձը նախատեսել է ձեռք բերել կամ ձեռք է բերել նշանակալից մասնակցություն:

35. Եթե իրավաբանական անձ հանդիսացող ուղղակի մասնակիցն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն գլխի 34-րդ կետով ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև՝

1) խմբի (միության) կառուցվածքը,

2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները,

3) խմբի (միության) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին (օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին) համապատասխան (առկայության դեպքում):

36. Եթե 35-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև՝

1) տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, կամ

2) հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարներին:

37. Եթե 35-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

38. Եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 34-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ և 13-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և Ստանդարտ և Փուրզ կամ Մուդիզ վարկանշային գործակալությունների կողմից սահմանված «A-» կամ «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

39. Եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցությունը ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ է ներկայացնում 34-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

40. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող ֆիզիկական անձը, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6բ-ի,

2) ներդրումային ընկերության միջնորդությունը՝ ֆիզիկական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ ներդրումային ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ներդրումային ընկերության կնիքով (միայն գործող ներդրումային ընկերությունների համար),

3) ներդրումային ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (իսկ նորաստեղծ ներդրումային ընկերության համար՝ նախաձեռնող անձանց) որոշումը մասնակցի ներգրավմանը կամ առկա մասնակցության ավելացմանը համաձայնություն տալու մասին (բացառությամբ՝ բաց բաժնետիրական ընկերությունների),

4) տեղեկանք ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7բ-ի,

5) հայտարարագիր՝ չմարված պարտավորությունների բացակայության մասին,

6) նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի դիրքորոշումը՝ ներդրումային ընկերության կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ,

7) հայտարարություն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին,

8) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ ներդրումային ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն հավելված 8-ի, հակառակ դեպքում պետք է ներկայացվեն իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի գլուխ 11-ով սահմանված փաստաթղթերը: Սույն կետում նշված հայտարարությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ այն ներդրումային ընկերության միջնորդությամբ, որում անձը նախատեսել է ձեռք բերել կամ ձեռք է բերել նշանակալից մասնակցություն,

9) ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

41.Ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերել ցանկացող պետությունը պարտավոր է, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ պետության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնից,

2) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող պետության իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ ներդրումային ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,

3) ներդրումային ընկերության միջնորդությունը պետության կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ ներդրումային ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված ներդրումային ընկերության կնիքով (միայն գործող ներդրումային ընկերությունների համար),

4) ներդրումային ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը մասնակիցների ներգրավմանը կամ առկա մասնակցության ավելացմանը համաձայնություն տալու մասին,

5) նշանակալից մասնակցություն ակնկալող պետության դիրքորոշումը ներդրումային ընկերության կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 11. ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

42. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք կամ ներդրումային ընկերության մասնակցի հետ փոխկապակցված անձինք, ապա սույն գլխով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

43. Ներդրումային ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ակնկալող անձի վերաբերյալ Կենտրոնական բանկ են ներկայացվում իրավաբանական անձի համար՝ սույն կանոնակարգի 34-րդ կետի 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, իսկ ֆիզիկական անձի համար՝ սույն կանոնակարգի 40-րդ կետի 4-րդ, 5-րդ, 7-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկանք նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց (այդ թվում՝ այն իրավաբանական անձանց, որոնցում ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը նշանակալից մասնակից է) մասին՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 9-ի:

44. Եթե ներդրումային ընկերության անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով, ապա վերոնշյալ փաստաթղթերը Կենտրոնական բանկ է ներկայացնում ուղղակի նշանակալից մասնակիցը, այլ դեպքերում՝ ներդրումային ընկերությունը:

45. Եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 34-րդ կետի 11-րդ, 14-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

46. Եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 34-րդ կետի 7-րդ, 11-րդ, 14-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

47. Եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակիցը և ներդրումային ընկերությունում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձը ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա անուղղակի մասնակիցը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 34-րդ կետի 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 12. ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԵՌՔԲԵՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

48. Նշանակալից մասնակցության ձեռքբերման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար պահանջվող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում նշանակալից մասնակցությանը համաձայնություն տալու կամ այն մերժելու վերաբերյալ:

49. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում սույն կանոնակարգի 48-րդ կետում նախատեսված որոշումներից որևէ մեկը ընդունելու մասին անձին չտեղեկացվելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված՝ նշված 30-օրյա ժամկետի լրանալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:

50. Նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունը ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության միջնորդագիրը:

51. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի

իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

ԳԼՈՒԽ 13. ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

52. Անձը, որը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն ներդրումային ընկերությունում կամ ավելացնում է իր մասնակցությունը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասում նշված սահմանաչափերից ավելի՝ ցանկացած իրադարձության կամ գործարքի արդյունքում, որի մասին անձը տեղյակ չէր և չէր կարող տեղյակ լինել, այդ մասին տեղեկանալու պահից 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 10ա-ի:

53. Նշանակալից մասնակիցը ձեռքբերված բաժնետոմսերի (բաժնեմասերի)՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 7-րդ մասի, օտարման մասին Կենտրոնական բանկին տեղեկացնում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 10բ-ի:

ԲԱԺԻՆ IV. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 14. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

54. Ներդրումային ընկերությանը լիցենզիան տրվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ սահմանված լիցենզիայի ձևերին համապատասխան՝ սույն կանոնակարգի հավելված 1-ի համաձայն:

55. Լիցենզիան տրվում է մեկ օրինակով:

56. Ներդրումային ընկերությունների գործունեության ոլորտը կարգավորող՝ օրենքով և (կամ) նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պարտադիր պահանջներ կամ պայմաններ սահմանող իրավական ակտերի ցանկը Կենտրոնական բանկի պատասխանատու ստորաբաժանման կողմից հանձնվում է ներդրումային ընկերությանը՝ լիցենզիայի հետ միասին: Ցանկում նշվում են համապատասխան իրավական ակտերի լրիվ անվանումները և դրանց պաշտոնական հրապարակման տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնական տեղեկագրի անվանումն ու համարը: Ցանկում կատարված փոփոխությունների մասին Կենտրոնական բանկը հայտնում է բոլոր ներդրումային ընկերություններին ոչ ուշ, քան այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 15-րդ օրը:

57. Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում ներդրումային ընկերությունն այդ մասին հայտարարություն է տալիս զանգվածային լրատվության միջոցով (հեռուստատեսությամբ կամ առնվազն 1000 տպաքանակ ունեցող թերթում կամ ամսագրում) և Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը և զանգվածային լրատվության միջոցով հայտարարություն տալու փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթը:

58. Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը տալիս է ներդրումային ընկերությանը վերջինիս կողմից համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

59. Կորած լիցենզիան գտնելու դեպքում ներդրումային ընկերությունը գտնված լիցենզիայի օրինակը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

60. Լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, տառերը ջնջվելու և այլն) դեպքում ներդրումային ընկերությունը դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը և լիցենզիայի ոչ պիտանի օրինակը:

61. Կենտրոնական բանկը ոչ պիտանի դարձած լիցենզիայի կրկնօրինակը ներդրումային ընկերությանը տալիս է նրա կողմից դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում: Լիցենզիայի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը՝ անկախ լիցենզիայի կրկնօրինակը տրամադրելու հիմքից:

62. Լիցենզիայի կրկնօրինակի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 15. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ

63. Լիցենզիայի վերածևակերպման համար ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում լիցենզիայի վերածևակերպման մասին դիմում՝ կցելով համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը և լիցենզիայի վերածևակերպման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը: Լիցենզիայի վերածևակերպումն իրականացվում է համապատասխան փոփոխությունները ներառող լիցենզիայի նոր օրինակը ներդրումային ընկերությանը տրամադրելու միջոցով՝ վերածևակերպման ենթակա լիցենզիան Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում:

64. Լիցենզիայի վերածևակերպումն իրականացվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա ներդրումային ընկերության համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

65. Լիցենզիայի վերածևակերպման մասին դիմումը մերժվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով:

ԳԼՈՒԽ 16. ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

66. Օրենքով սահմանված հիմքերով ներդրումային ընկերության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի որոշումն ստանալուց հետո ներդրումային ընկերությունը 3 օրվա ընթացքում՝ կից գրությամբ լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

67. Ներդրումային ընկերության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման բողոքարկումը հիմք չէ 3 օրվա ընթացքում լիցենզիան չվերադարձնելու համար:

ԲԱԺԻՆ V. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 17. ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ, ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՋԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

68. Սույն գլուխը սահմանում է նոր ստեղծվող և գործող ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ՀՀ ներդրումային ընկերության մասնաճյուղի կողմից Կենտրոնական բանկ երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը:

69. Գործարար ծրագիրն ամբողջական փաստաթուղթ է, որի խնդիրներն են՝

1) ծառայել շահագրգիռ անձանց (մասնակիցներ, անդամներ, ներդրողներ, ղեկավարներ և այլ շահագրգիռ անձինք)՝ որպես մի ամփոփ փաստաթուղթ, որով կարող են գնահատվել ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործունեության բնույթը և առանձնահատկությունները,

2) օգնել ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավարներին՝ պարզաբանել, հստակեցնել և հետազոտել ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործունեության զարգացման հնարավոր հեռանկարները, ծառայել ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավարներին՝ որպես հիմք, որով կարող են գնահատվել ներդրումային ծառայություններ մատուցող անձի փաստացի գործունեության արդյունքները և արդյունավետությունը,

3) օգնել ներդրումային ծառայություններ մատուցող անձին հետևողականորեն իրականացնելու նախանշված նպատակները և խնդիրները պլանավորվող երեք տարիների ընթացքում,

4) Կենտրոնական բանկ ներկայացնել ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից պլանավորված գործունեությունները, ինչը Կենտրոնական բանկին հնարավորություն կտա գնահատել ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործունեությունը և նրա ընտրած ռազմավարությունը:

70. Գործարար ծրագրի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները՝

1) իրատեսություն (առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն),

2) գնահատելիություն (կատարման արդյունքների գնահատման հնարավորություն),

3) համահունչություն (ծրագրի առանձին բաժինների և բաժինների գլուխների միջև պատճառահետևանքային կապի, ծրագրի ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն),

4) կոնկրետություն (վերնագրի՝ ըստ էության ներկայացում, վերնագրից դուրս ավելորդ տեղեկատվության բացակայություն, խնդիրների՝ ըստ էության դիտարկում),

5) ծրագրի հիմքում կարող են դրվել նաև այլ, սակայն նշված սկզբունքներին չհակասող սկզբունքներ:

71. Ներդրումային ընկերության կողմից լիցենզավորման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելիս (մասնաճյուղի և ներկայացուցչության դեպքում՝ գրանցման փաստաթղթերը), ինչպես նաև մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա փետրվարի 15-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում առաջիկա երեք տարիների իր գործարար ծրագիրը՝ համաձայն սույն գլխի: Ընդ որում, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարար ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներառվում է գործարար ծրագրի կազմում:

72. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև վերանայված ծրագիրը (գործարար ծրագրի փոփոխությունները), եթե տեղի է ունեցել ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը:

73. Ծրագիրը հաստատվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի կողմից: Ծրագրին կից աղյուսակները և գրաֆիկները կազմվում են ցուցանիշների ծրագրային կանխատեսումների հիման վրա: Կանխատեսվող ցուցանիշները պետք է հիմնավորված լինեն կոնկրետ հաշվարկներով և արտացոլեն ծրագրում ամրագրված քաղաքականությունը:

74. Ծրագիրը և ծրագրով նախատեսված տվյալները Կենտրոնական բանկ են ներկայացվում ինչպես փաստաթղթային, այնպես էլ էլեկտրոնային կրիչով:

75. Ծրագիրը պարունակում է սույն կանոնակարգի հավելված 14-ով սահմանված գործարար ծրագրի ձևի տվյալները: Ծրագիրը կարող է ներառել սույն կանոնակարգի հավելված 14-ով սահմանված ծրագրի ձևի տվյալներից բացի լրացուցիչ տվյալներ:

76. Ներդրումային ընկերության կողմից ներկայացված ծրագրի՝ սույն կանոնակարգի հավելված 12-ով նշված ծավալը զգալի չափով գերազանցելու դեպքում լրացուցիչ տվյալները պետք է էական և հիմնավոր դեր կատարեն ծրագրում:

77. Ծրագիրը կարող է օգտագործվել Կենտրոնական բանկի կողմից ներդրումային ծառայություններ մատուցող անձի ռազմավարական կառավարման մակարդակը գնահատելու նպատակով:

ԳԼՈՒԽ 18. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

78. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 օրվա ընթացքում, Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 221-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փոփոխությունները,

2) ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանման, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության վայրի փոփոխությունը:

79. Ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» Կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման համաձայն:

80. Կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ ներդրումային ընկերության կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացված ներդրումային ընկերության կնիքով,

2) ներդրումային ընկերության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներդրումային ընկերության կամ ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանման, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության փոփոխված կանոնադրությունը (6 օրինակ), ընդ որում՝ կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված, կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի:

81. Ներդրումային ընկերության, ներդրումային ընկերության տարածքային ստորաբաժանման, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության վայրի փոփոխությունը գրանցելու համար սույն կանոնակարգի 80-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև՝

1) տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

2) տարածքի և տեխնիկական հագեցվածության նվազագույն տեխնիկական պահանջների՝ սույն կանոնակարգի գլուխ 19-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը,

3) հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 12-ի:

82. Կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում ներդրումային ընկերության կանոնադրության գրանցման համար ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 80-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման ազդագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը (բացի բաժնետիրական ներդրումային ծառայություններ մատուցող անձի համար):

83. Կենտրոնական բանկը պարտավոր է վերոհիշյալ փոփոխությունների գրանցման համար սույն գլխով սահմանված փաստաթղթերն ստանալու պահից 30-օրյա ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Փոփոխությունները գրանցվում են կամ դրանց գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

84. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել, բայց ոչ ավելի, քան մինչև կասեցումն ընկած օրերի և 30-օրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

ԳԼՈՒԽ 19. ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

85. Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը կամ ներդրումային ընկերության մասնաճյուղը պետք է ունենան՝

1) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով իրենց պատկանող առանձնացված տարածք,

2) կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց,

3) ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերի պահպանման համար առանձին պահոց,

4) պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Սույն ենթակետը չի տարածվում ներդրումային ընկերության մասնաճյուղի վրա,

5) էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավա-

րար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,

6) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերության համար մասնաճյուղի առկայության դեպքում՝ այնպիսի համակարգչային ծրագրեր, որոնք ապահովում են մասնաճյուղում կատարվող գործարքների ավտոմատ արտացոլումը ներդրումային ընկերության հաշվեկշռում:

86. Բացի սույն կանոնակարգի 85-րդ կետում նշված պահանջներից՝ պահառություն իրականացնող ներդրումային ընկերությունը պետք է՝

1) ապահովի հաճախորդների ազատ մուտքը տարածք՝ հանձնարարագրերի, հարցումների և այլ փաստաթղթերի լրացման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հաշիվներից քաղվածքների և տեղեկանքների ստացման համար,

2) փաստաթղթային արժեթղթերի պահառություն իրականացնելու դեպքում ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ արժեթղթերի հավաստագրերի պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն ներդրումային ընկերության ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,

3) ունենա պահոց և չհրկիզվող պահարաններ՝ վարվող արժեթղթերի հաշիվների տվյալների բազայի էլեկտրոնային կրկնօրինակների և գործառնություններին վերաբերող փաստաթղթերի բնօրինակների պահպանման համար: Պահոցին և չհրկիզվող պահարանին մուտք կարող են ունենալ միայն ներդրումային ընկերության ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցները,

4) արժեթղթերի հաշվառման համակարգը էլեկտրոնային եղանակով վարելու դեպքում պետք է կիրառի այնպիսի համակարգ, որը կպաշտպանի արժեթղթերի հաշվառման ժամանակ օգտագործվող ողջ տեղեկատվությունը ոչ լիազորված օգտագործումից,

5) հնարավորություն ունենա օգտվելու արժեթղթերի էլեկտրոնային հաշվառման պահուստային համակարգից կամ իրականացնելու արժեթղթերի հաշվառումը թղթային եղանակով, այն դեպքում, երբ հիմնական ավտոմատացման համակարգը շարքից դուրս է եկել կամ այլ պատճառներով հնարավորություն չկա այն օգտագործել,

6) կիրառի արժեթղթերի հաշվառման միայն այնպիսի համակարգչային ծրագիր, որն ապահովում է օրենքով և սույն կետով սահմանված պահանջները,

7) ծրագրային ապահովումը և տեխնիկական հագեցվածությունը ապահովի տվյալների և տեղեկատվության կանոնավոր և անխափան փոխանակման հնարավորություն պահառուի և ռեեստրավարի, պահառուի և օտարերկրյա պահառուի միջև՝ համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով,

8) պահպանի արժեթղթերի հաշվառմանն առնչվող փաստաթղթերը (գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը), ինչպես նաև տվյալների բազան առնվազն 70 տարի,

9) այն դեպքում, եթե արժեթղթերի հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով, մինչև յուրաքանչյուր շաբաթվա ավարտը պահառուն իրականացնի այդ շաբաթվա տվյալների բազայի կրկնօրինակումը և այդ կրկնօրինակները պահպանի իր տարածքի չհրկիզվող պահարաններում կամ պահառուի տարածքից դուրս գտնվող տվյալների պահպանման հատուկ համակարգում (տվյալների պահպանման հեռակա համակարգ): Ամսվա ընթացքում պատրաստված կրկնօրինակները մինչև հաջորդ ամսվա առաջին օրվա ավարտը պետք է պահպանության (ի պահ) հանձնվեն պահառուի կողմից ընտրված բանկի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի մագնիսակայուն պահոցում (սեփական մագնիսակայուն պահոց չունենալու դեպքում),

10) այն դեպքում, երբ արժեթղթերի հաշվառումն իրականացվում է թղթային եղանակով, պահառուն շաբաթվա վերջում պետք է իրականացնի արժեթղթերի հաշվառման մատյաններում և արժեթղթերի հաշիվներում տվյալ օրվա մուտքագրած տվյալների կրկնօրինակումը և ի պահ հանձնի դրանք պահառուի տարածքի չհրկիզվող պահարանում,

11) սույն կետի 9-րդ ենթակետում նշված տվյալների բազայի կրկնօրինակները պետք է պատրաստվեն այնպիսի եղանակով, որ ցանկացած պահի հնարավոր լինի վերականգնել դրանց սկզբնական տեսքը: Տվյալների բազայի և արժեթղթերի հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակներ կարելի է չպատրաստել, եթե համապատասխան ժամանակահատվածի ընթացքում տվյալների բազայում և արժեթղթերի հաշվառման հաշիվներում և հաշվառման գրքերում մուտքեր կամ գրառումներ չեն եղել,

12) աշխատանքային ժամերի ավարտից հետո պահառուի տարածքում պահառուի ներքին կանոններով սահմանված իրավասու աշխատակիցների բացակայության դեպ-

քում արժեթղթերի հաշվառմանն առնչվող բոլոր թղթային կրիչով փաստաթղթերը (ներառյալ՝ գործառնությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և արժեթղթերի հաշվառման գրքերը) պետք է պահվեն բացառապես չհրկիզվող պահարանում կամ պահոցում:

87. Օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության տարածքը և տեխնիկական հագեցվածությունը պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի և օտարերկրյա վերահսկող մարմնի կողմից սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության պահանջներից ամենախիստ պահանջին:

ԳԼՈՒԽ 20. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ

88. Սույն կանոնակարգի իմաստով՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի ֆինանսական վիճակի առկա կամ հնարավոր վատթարացում են համարվում հետևյալ դեպքերը, երբ՝

1) ներդրումային ծառայություններ մատուցող անձը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվը (նորմատիվները) կամ հավանական է հիմնական տնտեսական նորմատիվի (նորմատիվների) խախտումը, և (կամ)

2) ներդրումային ծառայություններ մատուցող անձի մոտ հավանական է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում սահմանված անվճարունակության հիմքերի առաջացումը:

ԳԼՈՒԽ 21. ԲԱՆԿԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

89. Բանկը, վարկային կազմակերպությունը ներդրումային ծառայությունների մատուցման մասին այդ ծառայությունների մատուցումը սկսելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկին տեղեկացնում է՝ համաձայն սույն կանոնակարգի հավելվածի 13-ի:

Հավելված 1

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01 Հավելվածի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՆԸ ԹԻՎ XXXX

ԼԻՑԵՆԶԻԱ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ _____
_____
_____
_____
_____
_____

Իրավաբանական անձի անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝_____

Կ.Տ.

Տրված է՝ __ _____ 200_ թ.

Պետական տուրքը վճարված է՝ __ _____ 200_ թ.

Հավելված 2ա

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01 Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել ներդրումային ծառայություններ մատուցելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել ստորև նշված ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա.

Հիմնական ներդրումային ծառայություններ

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը.
- իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում.
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին.
- իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում.
- արժեթղթերի փաթեթի կառավարում.
- արժեթղթերի երաշխավորված տեղաբաշխման իրականացում.
- արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացում:

Ոչ հիմնական ներդրումային ծառայություններ

- արժեթղթերի պահառություն.
- փոխառության տրամադրումը հաճախորդներին՝ արժեթղթերով գործարքների իրականացման համար, պայմանով, որ փոխատուն հանդիսանում է նման գործարքի կողմ.
- արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում.
- խորհրդատվության տրամադրումն ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցումը.
- արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացումը.
- վարկային կազմակերպության գործունեությունը.
- արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմումը և տարածումը:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Դիմումը ներկայացնող անձ՝_____

(կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները, գտնվելու վայրը)

___ _____ 200_ թ.

Հավելված 2բ

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01 Հավելվածի

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ) ԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(օտարերկրյա ներդրումային ընկերության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում _____ (մասնաճյուղ, ներկայացուցչություն) բացելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի (ներկայացուցչության) գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել օտարերկրյա ներդրումային ընկերության _____:
(մասնաճյուղը, ներկայացուցչությունը)

Մասնաճյուղը (ներկայացուցչությունը) մատուցելու է հետևյալ ներդրումային ծառայությունները.

Հիմնական ներդրումային ծառայություններ

- ❑ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում.
- ❑ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում.
- ❑ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրումը հաճախորդներին.
- ❑ իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում.
- ❑ արժեթղթերի փաթեթի կառավարում.
- ❑ արժեթղթերի երաշխավորված տեղաբաշխման իրականացում.
- ❑ արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացում.

Ոչ հիմնական ներդրումային ծառայություններ

- ❑ արժեթղթերի պահառությունը.
- ❑ փոխառության տրամադրումը հաճախորդներին՝ արժեթղթերով գործարքների իրականացման համար, պայմանով, որ փոխատուն հանդիսանում է նման գործարքի կողմ.
- ❑ արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցումը.
- ❑ խորհրդատվության տրամադրումն ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցումը.
- ❑ արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացումը.
- ❑ վարկային կազմակերպության գործունեությունը.
- ❑ արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմումը և տարածումը.

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

_____
(Օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները, գտնվելու վայրը)

___ _____ 200_ թ.

Հավելված 2գ

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01 Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ) ԳՐԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____
_____

(ներդրումային ընկերության լրիվ անվանումը (ֆիրմային անվանումը))

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում _____

(մասնաճյուղ, ներկայացուցչություն)

բացելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք ներդրումային ընկերության մասնաճյուղի (ներկայացուցչության) գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ներդրումային ընկերության _____:

(մասնաճյուղը, ներկայացուցչությունը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

_____ _____

(ներդրումային ընկերության գործադիր մարմնի անունը, ազգանունը) *(ստորագրությունը)*

___ _____ 200_ թ.

Հավելված 3

«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01 Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անձնական տվյալներ

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____

(օր/ամիս/տարի)

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի համարը և սերիան, ում կողմից և երբ է տրված _____

Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում) _____

1.7. Հասցեն (մշտական և բնակության տվյալ պահին)

1.8. Հեռախոսահամար _____ 1.9. էլեկտրոնային փոստի հասցե _____

1.9. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը

Անունը, ազգանունը, հայրանունը _____

Կրելու ժամանակաշրջանը _____ Անձնագրի սերիան և համարը _____

(օր/ամիս/տարի)

2. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի վերաբերյալ տեղեկություններ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

2.1. անվանումը _____

2.2. Գտնվելու վայրը

2.3. Հեռախոսահամար _____ 2.4. Ֆաքսի համար _____

ՀՀ ներդրումային ընկերության մասնաճյուղի ղեկավարի համար նշել նաև մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը

3. Ղեկավար պաշտոնը

3.1. Առաջադրվող պաշտոնը _____

3.2. Արդյո՞ք նշանակված եք այդ պաշտոնում որպես ժամանակավոր պաշտոնակատար: Եթե «այո» նշել նշանակման ամսաթիվը: _____

(օր/ամիս/տարի)

3.3. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր դերը, իրավասությունները և պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար.

Դուք կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր մանրամասն նկարագիրը ներկայացնելու համար և կցել դրանք սույն հավելվածին:

4. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նշված հիմքերի մասին.
Մեկնաբանությունների համար կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր

1) Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

2) Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

3) Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, համապատասխան մասնագիտական որակավորում: Այո ☐ Ոչ ☐

4) Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ և ունեք չմարված (չներված) պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

5) Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

6) Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

Նախկինում կամ ներկայումս ղեկավար հանդիսացող անձինք պետք է պատասխանեն նաև 7-ից 16-րդ հարցերին
Նախկինում կամ ներկայումս նշանակալից մասնակցություն ունեցող անձինք պետք է պատասխանեն նաև 4.7-ից 9-րդ հարցերին

7) Արդյո՞ք ՀՀ տարածքում գործող ներդրումային ծառայությունների մատուցման համակարգում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ներդրումային ծառայություններ մատուցող անձի ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

4.7. Արդյո՞ք այլ պետությունների ներդրումային ծառայություններ մատուցող անձի կամ այլ ֆինանսական հաստատություններում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ներդրումային ծառայություններ մատուցող անձը կամ ֆինանսական այլ հաստատությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.9. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված հիմքերով: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.10. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում միտումնավոր կերպով խախտել եք օրենքները և այլ իրավական ակտերը: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.11. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում վարել եք անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել եք վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողությունները: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.12. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում կատարել եք այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով ներդրումային ծառայություններ մատուցող անձը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐

4.13. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում կատարել եք անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են ներդրումային ծառայություններ մատուցող անձի հաճախորդների շահերին:
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

Այո ☐ Ոչ ☐

4.14. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք եք դրսևորել Ձեր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի նկատմամբ ստանձնած պարտականությունների նկատմամբ:
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

Այո ☐ Ոչ ☐

4.15. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում չեք կատարել Կենտրոնական բանկի հանձնարարականը կամ անտեսել եք Կենտրոնական բանկի նախազգուշացումը:
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

Այո ☐ Ոչ ☐

5. Կրթություն, որակավորում

Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել իր ռեզյումեն, որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

5.1. Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Հիմնական առարկաները	Հաճախումների ժամանակաշրջանը (----թ-ից մինչև ----թ.)	Գիտական աստիճան

5.2. Ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում: _____

6. Աշխատանքային գործունեություն

Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել իր ռեզյումեն, որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

6.1. Աշխատանքային գործունեությունը

Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, երաշխավորողի անունը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտականությունները

6.2. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող ներդրումային ծառայությունների մատուցման համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Հասցե	Հեռախոս
1.			
2.			

7. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

ԿԲ կողմից կարող են պահանջվել նաև 7.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:

Անհրաժեշտության դեպքում օգտագործեք լրացուցիչ թերթեր

7.1. Նշեք այն ներդրումային ծառայություններ մատուցող անձի կամ ֆինանսական կազմակերպության անվանումը, որի կանոնադրական կապիտալում ունեք կամ ունեցել եք նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից.

Կազմակերպության անվանումը	%	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումար (դրամով)
1.			
2.			

7.2. Նշեք այն ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը, որի կանոնադրական կապիտալում Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են նշանակալից մասնակցություն:

	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-ին պլա-նավորվող տարվա հուլիսի 1	2-րդ պլա-նավորվող տարվա հունվարի 1	2-րդ պլա-նավորվող տարվա հուլիսի 1	3-րդ պլա-նավորվող տարվա հունվարի 1	3-րդ պլա-նավորվող տարվա հուլիսի 1	4-րդ պլա-նավորվող տարվա հունվարի 1
Ակտիվ							
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ							
Դեբիտորական պարտքեր							
Այլ ընթացիկ ակտիվներ							
Ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումներ							
Հիմնական միջոցներ							
Ոչ նյութական ակտիվներ							
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ							
Ընդամենը ակտիվ							
Պասիվ							
Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ							
Ընթացիկ այլ պարտավորություններ							
Ընթացիկ այլ պարտավորություններ							
Ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ							
Ոչ ընթացիկ ֆինանսական այլ պարտավորություններ							
Ոչ ընթացիկ այլ պարտավորություններ							
Ընդամենը պարտավորություններ							
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ							
Կուտակված շահույթ (վնաս)							
Սեփական կապիտալի այլ տարրեր							
Ընդամենը սեփական կապիտալ							
Ընդամենը պասիվ							

Աղյուսակ 2

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՃԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-ին պլանավորվող տարվա հուլիսի 1	2-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	2-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	3-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	3-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	4-րդ պլանավորվող տարվա հունվարի 1
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ							
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք							
Համախառն շահույթ (վնաս)							
Իրացման ծախսեր							
Վարչական ծախսեր							
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)							
Գործառնական այլ եկամուտներ							
Գործառնական այլ ծախսեր							
Գործառնական շահույթ (վնաս)							
Ոչ գործառնական եկամուտներ							
Ոչ գործառնական ծախսեր							
Ոչ գործառնական շահույթ (վնաս)							
Ֆինանսական ծախսեր							
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)							
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)							
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)							
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)							
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)							

Աղյուսակ 3

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հազար դրամ)

Ցուցանիշի անվանումը	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Առաջիկա տսրիներ		
		1-ին	2-րդ	3-րդ
1. Բրոքերային գործարքներ				
1.1. արժեթղթերի առքի/վաճառքի գործառնություններ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
1.2. ռեպո գործարքներ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
1.3. հակադարձ ռեպո գործարքներ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
2. Դիլերային գործարքներ				
2.1.արժեթղթերի առքի/վաճառքի գործառնություններ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
2.2. ռեպո գործարքներ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
2.3. հակադարձ ռեպո գործարքներ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
Ընդամենը				

Աղյուսակ 4

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հազար դրամ)

Ցուցանիշի անվանումը	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Առաջիկա տարիներ		
		1-ին	2-րդ	3-րդ
1. Բորսերային գործարքներ				
1.1. արժեթղթերի առքի/վաճառքի գործառնություններ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
1.2. ռեպո գործարքներ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
1.3. հակադարձ ռեպո գործարքներ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
2. Դիլերային գործարքներ				
2.1. արժեթղթերի առքի/վաճառքի գործառնություններ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
2.2. ռեպո գործարքներ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
2.3. հակադարձ ռեպո գործարքներ, այդ թվում՝				
պետական արժեթղթեր				
ոչ պետական արժեթղթեր				
Ընդամենը				

Աղյուսակ 5

ՀԱՎԱՏԱՐԱՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐՑՐԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

(հազար դրամ)

Ցուցանիշի անվանումը	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Առաջիկա տարիներ		
		1-ին	2-րդ	3-րդ
1. Հավատարմագրային կառավարման վերցված դրամական միջոցներ, այդ թվում՝ *(հազար դրամ)*				
1.1. ՀՀ դրամով				
1.2. այլ արժույթով				
2. Հավատարմագրային կառավարման վերցված արժեթղթեր, այդ թվում՝ *(հազար դրամ)*				
1.1. պետական				
1.2. ոչ պետական				

Աղյուսակ 6

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(հազար դրամ)

Տեղաբաշխման ենթակա արժեթղթերի դաս	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ		Առաջիկա տարիներ					
			1-ին		2-րդ		3-րդ	
	թողնվում է շրջանառության մեջ	չի թողնվում շրջանառության մեջ	թողնվում է շրջանառության մեջ	չի թողնվում շրջանառության մեջ	թողնվում է շրջանառության մեջ	չի թողնվում շրջանառության մեջ	թողնվում է շրջանառության մեջ	չի թողնվում շրջանառության մեջ
1. Ոչ պետական արժեթղթեր, այդ թվում՝								

Աղյուսակ 7

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Առաջիկա տարիներ		
		1-ին	2-րդ	3-րդ
Կառավարման տնտեսական արդյունավետությունը՝ *զուտ շահույթ/համախառն ծախսեր*				
Շահութաբերությունն ըստ ակտիվների՝ *զուտ շահույթ/համախառն ակտիվներ*				
Շահութաբերությունն ըստ կապիտալի՝ *զուտ շահույթ/կանոնադրական կապիտալ*				
Անձնակազմի կառուցվածքի արդյունավետությունը՝				
Վարչական աշխատողների* թիվ				
Սպասարկող աշխատողների** թիվ				
վարչական աշխատողների թիվ/սպասարկող աշխատողներ թիվ				
Կառավարման արդյունավետությունը՝				
աշխատողների թիվ				
զուտ շահույթ/աշխատողների թիվ				
Կադրերի վերապատրաստում՝ *ուսուցման ծախսեր/վարչական աշխատողների թիվ*				
Կադրերի վարձատրություն՝ *վարչական աշխատողների աշխատավարձ և այլ վճարումներ/վարչական աշխատողների թիվ*				
Վաճառքի խթանում՝ *գովազդի ծախսեր/ընդհանուր ծախսեր*				
Այլ ցուցանիշներ՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի հայեցողությամբ				

** Վարչական աշխատողներ են համարվում ներդրումային ծառայություններ մատուցող անձի բուն գործունեությանն ուղղակիորեն առնչվող աշխատողները:*

*** Սպասարկող աշխատողներ են համարվում ներդրումային ծառայություններ մատուցող անձի բուն գործունեությանն ուղղակիորեն չառնչվող աշխատողները (օրինակ՝ հավաքարար, վարորդ):*

*«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասը, 108-րդ հոդվածը, 110-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 111-րդ հոդվածի 2-րդ մասը, 221-րդ հոդվածի 1-ին մասը, 222-րդ հոդվածի 14-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը՝ համաձայն հավելվածի (այսուհետ՝ Կանոնակարգ 5/01):
2. 2008 թվականի հունիսի 30-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ««Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 28-րդ բաժինը, 104.2-2/ԻԿԿ, 104.2-3/ԻԿԿ ձևերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
23 հունվարի 2008 թ., N 17-Ն

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հունվարի 15-ի
թիվ 17-Ն որոշման

«ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/01

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կարգավորվող շուկայի օպերատորի (այսուհետ՝ օպերատոր) գրանցման (ներառյալ՝ փոփոխությունների գրանցման) և լիցենզավորման, գործող օպերատորի վերագրանցման և վերալիցենզավորման, օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կար-

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.02.08 թ. (ՀՀԳՏ N8 (282), 17.03.08):

գը, օպերատորի երեք տարվա գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, օպերատորի տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների և հուսալիության չափանիշները, ինչպես նաև կարգավորում է այդ հարցերի հետ կապված և Հայաստանի Հանրապետության օրենքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված այլ հարաբերություններ:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող, ինչպես նաև գործող օպերատորի վրա:

3. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով, կամ մուտքագրվում են Կենտրոնական բանկ: Ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն օպերատորի իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում օպերատորի գրանցման և լիցենզավորման, վերագրանցման և վերալիցենզավորման գործընթացներն իրականացվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) ***«Կենտրոնական բանկ»*** ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

2) ***«հանձնաժողով»*** ՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,

3) ***«ծրագիր»*** ՝ Կենտրոնական բանկ ներկայացվող երեք տարվա գործարար ծրագիր,

4) ***«ֆինանսական խումբ (միություն)»*** ՝ որևէ երկրի օրենսդրության իմաստով ֆինանսական խումբ կամ ֆինանսական միություն,

5) ***«ֆինանսական կազմակերպություն»*** ՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, կենսաթոշակային ֆոնդ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների և (կամ) այլ իրավական ակտերի համաձայն ֆինանսական կազմակերպություն համարվող այլ անձինք,

6) ***«օպերատոր»*** ՝ անձ (անձինք), որը կազմակերպում է կարգավորվող շուկայի գործունեությունը:

6. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II. ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3. ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7. Օպերատորի (բացառությամբ Հայաստանի ֆոնդային բորսա ինքնակարգավորվող կազմակերպության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 222-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն որպես բաց բաժնետիրական ընկերության վերագրանցվող օպերատորի) պետական գրանցման և լիցենզավորման, ինչպես նաև վերագրանցման և վերալիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է հիմնադիր ժողովի կողմից լիազորված անձի կողմից վավերացված, իսկ վերագրանցման և վերալիցենզավորման դեպքում դիմումը ներկայացվում է դիմումատուի կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի,

բ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի գլուխ 12-ի,

գ. օպերատորի ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը ներկայացվում է համաձայն հավելված 3-ի,

դ. օպերատորի բաժնետերերի (մասնակիցների) վերաբերյալ տեղեկությունները (տեղեկանքը) ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի,

ե. կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված: Կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի,

2) օպերատորի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը,

3) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա նաև նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

4) վերագրանցվող և վերալիցենզավորվող ընկերությունների համար՝ այն իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկություններ, որոնց որևէ դասի բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսը ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է օպերատորին (տվյալ անձի անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, դիմորդին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող՝ տվյալ անձի բաժնային արժեթղթերի դասը և քանակը՝ տոկոսային արտահայտությամբ),

5) տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական պայմանագրի պատճենը:

8. Լիցենզիա ստանալու դիմումի մեջ կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության դեպքում Կենտրոնական բանկի կողմից գրանցման և լիցենզիայի տրամադրման մասին որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկի կողմից ստանալու պահից: Նշված թերությունները պետք է վերացվեն Կենտրոնական բանկի կողմից դրանց մասին տեղեկացման օրվանից հետո առավելագույնը 10 օրվա ընթացքում: Ընդ որում՝ նշված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում գրանցման և լիցենզավորման դիմումը համարվում է մերժված:

ԳԼՈՒԽ 4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

9. Կենտրոնական բանկը բավարարում է օպերատորի պետական գրանցման և լիցենզավորման դիմումը օրենքով և սույն կանոնակարգով սահմանված կարգով:

10. Օպերատորի գրանցումը կատարվում է, ինչպես նաև լիցենզիան Կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրվում է հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

11. Օպերատորի գրանցման և լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ուժի մեջ մտնելուց հետո 5 օրվա ընթացքում հիմնադիրներին տրվում է օպերատորի գրանցման վկայականը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 5-ի և լիցենզիան՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի:

12. Գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև օպերատորի ղեկավարների գրանցման համար պահանջվող փաստաթղթերը: Օպերատորի ղեկավարները գրանցվում են՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշները ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման:

13. Կենտրոնական բանկը մերժում է օպերատորի լիցենզիայի տրամադրումը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 106-րդ հոդվածում նշված հիմքերով:

14. Լիցենզիա ստանալու դիմումի մերժման դեպքում դիմումատուն կարող է կրկին դիմել լիցենզիա ստանալու համար:

ԲԱԺԻՆ III. ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 5. ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

15. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ձայնի իրավունք տվող մասնակցության՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ավելացման մտադրություն ունեցող իրավաբանական անձը մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար տվյալ իրավաբանական անձի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6ա-ի,

2) օպերատորի միջնորդությունը իրավաբանական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ օպերատորի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված օպերատորի կնիքով (միայն գործող օպերատորների համար),

3) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը,

4) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի հիմնադիր պայմանագիրը և կանոնադրությունը՝ մինչև միջնորդագրի ներկայացման պահը կատարված փոփոխություններով,

5) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի մասնակիցների ցուցակը՝ նշելով նրանց մասնակցության չափը (տոկոսով) կանոնադրական կապիտալի մեջ,

6) տեղեկանք՝ օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7ա-ի,

7) իրավաբանական անձի վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները: Եթե սույն ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ է ներկայացվում նաև տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, կամ հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ նշված են, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին: Մինչև երեք տարի գործունեություն ունեցող անձանց համար ներկայացվում է տեղեկատվություն իրականացված գործունեության ողջ ժամկետի համար,

8) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին (օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին) համապատասխան,

9) տեղեկանք՝ տրված պետական լիազորված մարմնի կողմից՝ դատարանի որոշմամբ սնանկ կամ անվճարունակ ճանաչված չլինելու վերաբերյալ: Օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից ներկայացվում է տեղեկանք՝ տրված նրա գրանցման երկրում սնանկ կամ անվճարունակ ճանաչված չլինելու վերաբերյալ տեղեկանք տալու լիազորություններ ունեցող մարմնի կողմից, եթե այդպիսի մարմին կա,

10) տեղեկանք՝ տրված իրավասու մարմնի կողմից բյուջեի և կենսաթոշակային հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքերի կամ դրանց բացակայության վերաբերյալ (ռեզիդենտների համար),

11) ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն),

12) նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձի դիրքորոշումը օպերատորի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ,

13) հայտարարություն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին,

14) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ օպերատորում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն հավելված 8-ի, հակառակ դեպքում պետք է ներկայացնի իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի գլուխ 6-ով սահմանված փաստաթղթերը: Սույն կետում նշված հայտարարությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ այն օպերատորի միջնորդությամբ, որում անձը նախատեսել է ձեռք բերել կամ ձեռք է բերել նշանակալից մասնակցություն:

16. Եթե իրավաբանական անձ հանդիսացող ուղղակի մասնակիցն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն գլխի 15-րդ կետով ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև՝

1) խմբի (միության) կառուցվածքը,

2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները,

3) խմբի (միության) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին (օտարերկրյա իրավաբանական անձանց համար՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին) համապատասխան (առկայության դեպքում):

17. Եթե 16-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ են ներկայացվում նաև՝

1) տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, կամ

2) հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ նշված է, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին:

18. Եթե 16-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

19. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 15-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ և 13-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և Ստանդարտ և Փուրզ կամ Մուդիզ վարկանշային գործակալությունների կողմից սահմանված «A-» կամ «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

20. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցությունը ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ է ներկայացնում 15-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

21. Ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող ֆիզիկական անձը, մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6բ-ի,

2) օպերատորի միջնորդությունը՝ ֆիզիկական անձի կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ օպերատորի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված օպերատորի կնիքով (միայն գործող օպերատորի համար),

3) տեղեկանք օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 7բ-ի,

4) հայտարարագիր՝ չմարված պարտավորությունների բացակայության մասին,

5) նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի դիրքորոշումը՝ օպերատորի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ,

6) հայտարարագիր «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին,

7) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ օպերատորում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն հավելված 8-ի, հակառակ դեպքում՝ իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի գլուխ 6-ով սահմանված փաստաթղթերը: Սույն կետում նշված հայտարարությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ այն օպերատորի միջնորդությամբ, որում անձը նախատեսել է ձեռք բերել կամ ձեռք է բերել նշանակալից մասնակցություն,

8) ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

22. Օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերել ցանկացող պետությունը պարտավոր է մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ պետության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնից,

2) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող պետության իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ օպերատորում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,

3) օպերատորի միջնորդությունը պետության կողմից օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու վերաբերյալ՝ օպերատորի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված օպերատորի կնիքով,

4) օպերատորի մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը մասնակիցների ներգրավմանը կամ առկա մասնակցության ավելացմանը համաձայնություն տալու մասին,

5) նշանակալից մասնակցություն ակնկալող պետության դիրքորոշումը օպերատորի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք կամ օպերատորի մասնակցի հետ փոխկապակցված անձինք, ապա սույն գլխով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

24. Օպերատորում անուղղակի նշանակալից մասնակցություն ակնկալող անձի վերաբերյալ Կենտրոնական բանկ են ներկայացվում իրավաբանական անձի համար՝ սույն կանոնակարգի 15-րդ կետի 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, իսկ ֆիզիկական անձի համար՝ սույն կանոնակարգի 21-րդ կետի 4-րդ, 5-րդ, 7-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, ինչ-

պես նաև տեղեկանք նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց (այդ թվում՝ այն իրավաբանական անձանց, որոնցում օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը նշանակալից մասնակից է) մասին՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 9-ի:

25. Եթե անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով, ապա վերոնշյալ փաստաթղթերը Կենտրոնական բանկ է ներկայացնում ուղղակի նշանակալից մասնակիցը, այլ դեպքերում՝ օպերատորը:

26. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 15-րդ կետի 11-րդ, 14-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

27. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերում ՀՀ կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 15-րդ կետի 7-րդ, 11-րդ, 14-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

28. Եթե օպերատորի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակիցը և օպերատորում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձը ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա անուղղակի մասնակիցը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 15-րդ կետի 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 7. ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

29. Նշանակալից մասնակցության ձեռքբերման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար պահանջվող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում նշանակալից մասնակցությանը համաձայնություն տալու կամ այն մերժելու վերաբերյալ:

30. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում սույն կանոնակարգի 29-րդ կետում նախատեսված որոշումներից որևէ մեկը ընդունելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված՝ նշված 30-օրյա ժամկետը լրանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:

31. Նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունը օպերատորի կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության միջնորդագիրը:

32. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

ԳԼՈՒԽ 8. ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԲ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Անձը, որը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն օպերատորում կամ ավելացնում է իր մասնակցությունը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասում նշված սահմանաչափերից ավելի՝ ցանկացած իրադարձության կամ գործարքի արդյունքում, որի մասին անձը տեղյալ չէր և չէր կարող տեղյակ լինել, այդ մասին տեղեկանալու պահից 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 10ա-ի:

34. Նշանակալից մասնակիցը ձեռքբերված բաժնետոմսերի (բաժնեմասերի)՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 7-րդ մասի, օտարման մասին Կենտրոնական բանկին տեղեկացնում է՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 10բ-ի:

ԲԱԺԻՆ IV. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

35. Օպերատորին լիցենզիան տրվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ սահմանված լիցենզիայի ձևերին համապատասխան՝ սույն կանոնակարգի հավելված 1-ի համաձայն:

36. Լիցենզիան տրվում է մեկ օրինակ:

37. Օպերատորի գործունեության ոլորտը կարգավորող՝ օրենքով և (կամ) նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պարտադիր պահանջներ կամ պայմաններ սահմանող իրավական ակտերի ցանկը Կենտրոնական բանկի կողմից հանձնվում է օպերատորին՝ լիցենզիայի հետ միասին: Ցանկում նշվում են համապատասխան իրավական ակտերի լրիվ անվանումները և դրանց պաշտոնական հրապարակման տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնական տեղեկագրի անվանումն ու համարը: Ցանկում կատարված փոփոխությունների մասին Կենտրոնական բանկը հայտնում է օպերատորին ոչ ուշ, քան այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 15-րդ օրը:

38. Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում օպերատորն այդ մասին հայտարարություն է տալիս զանգվածային լրատվության միջոցով (հեռուստատեսությամբ կամ առնվազն 1000 տպաքանակ ունեցող թերթում կամ ամսագրում) և Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը և զանգվածային լրատվության միջոցով հայտարարություն տալու փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթը:

39. Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը տալիս է օպերատորին՝ վերջինիս կողմից համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

40. Կորած լիցենզիան գտնելու դեպքում օպերատորը գտնված լիցենզիայի օրինակը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

41. Լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, տառերը ջնջվելու և այլն) դեպքում օպերատորը դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ (լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար)՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը և լիցենզիայի ոչ պիտանի օրինակը:

42. Կենտրոնական բանկը ոչ պիտանի դարձած լիցենզիայի կրկնօրինակը օպերատորին տալիս է նրա կողմից դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում: Լիցենզիայի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը՝ անկախ լիցենզիայի կրկնօրինակը տրամադրելու հիմքից:

43. Լիցենզիայի կրկնօրինակի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 10. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

44. Լիցենզիայի վերաձևակերպման համար օպերատորը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում՝ կցելով համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը և լիցենզիայի վերաձևակերպման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը: Լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է համապատասխան փոփոխությունները ներառող լիցենզիայի նոր օրինակը օպերատորին տրամադրելու միջոցով՝ վերաձևակերպման ենթակա լիցենզիան Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում:

45. Լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, օպերատորի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

46. Լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմումը մերժվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 106-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով:

ԳԼՈՒԽ 11. ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

47. Օրենքով սահմանված հիմքերով օպերատորի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի որոշումն ստանալուց հետո օպերատորը 3 օրվա ընթացքում՝ կից գրությամբ լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

48. Օպերատորի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման բողոքարկումը հիմք չէ 3 օրվա ընթացքում լիցենզիան չվերադարձնելու համար:

ԲԱԺԻՆ V. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 12. ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ, ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

49. Սույն գլուխը սահմանում է օպերատորի կողմից Կենտրոնական բանկ երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը:

50. Գործարար ծրագիրը ամբողջական փաստաթուղթ է, որի խնդիրներն են.

1) ծառայել շահագրգիռ անձանց (մասնակիցներ, անդամներ, ներդրողներ, ղեկավարներ և այլ շահագրգիռ անձինք)՝ որպես մի ամփոփ փաստաթուղթ, որով կարող են գնահատվել օպերատորի գործունեության բնույթը և առանձնահատկությունները,

2) օգնել օպերատորի ղեկավարներին պարզաբանել, հստակեցնել և հետազոտել օպերատորի գործունեության զարգացման հնարավոր հեռանկարները և ծառայել օպերատորի ղեկավարներին՝ որպես հիմք, որով կարող են գնահատվել օպերատորի փաստացի գործունեության արդյունքները և արդյունավետությունը,

3) օգնել օպերատորին հետևողականորեն իրականացնել նախանշված նպատակները և խնդիրները՝ պլանավորվող երեք տարիների ընթացքում,

4) Կենտրոնական բանկին ներկայացնել օպերատորի կողմից պլանավորված գործունեությունները, որը Կենտրոնական բանկին հնարավորություն կտա գնահատել օպերատորի գործունեությունը և նրա ընտրած ռազմավարությունը:

51. Գործարար ծրագրի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները.

1) իրատեսություն (առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն),

2) գնահատելիություն (կատարման արդյունքների գնահատման հնարավորություն),

3) համահունչություն (ծրագրի առանձին բաժինների և բաժինների գլուխների միջև պատճառահետևանքային կապի, ծրագրի ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն),

4) կոնկրետություն (վերնագրի՝ ըստ էության ներկայացում, վերնագրից դուրս ավելորդ տեղեկատվության բացակայություն, խնդիրների՝ ըստ էության դիտարկում):

5) Ծրագրի հիմքում կարող են դրվել նաև այլ, սակայն նշված սկզբունքներին չհակասող սկզբունքներ:

52. Օպերատորը լիցենզավորման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելիս, ինչպես նաև մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա փետրվարի 15-ը, Կենտրոնական բանկ է ներկայացնում առաջիկա երեք տարիների իր գործարար ծրագիրը՝ համաձայն սույն գլխի: Ընդ որում, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 108-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարար ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներառվում է գործարար ծրագրի կազմում:

53. Օպերատորը մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև վերանայված ծրագիրը (ծրագրի փոփոխությունները), եթե տեղի է ունեցել օպերատորի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը:

54. Ծրագիրը հաստատվում է օպերատորի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի կողմից:

55. Ծրագիրը և ծրագրով նախատեսված տվյալները Կենտրոնական բանկ են ներկայացվում ինչպես փաստաթղթային, այնպես էլ էլեկտրոնային կրիչով:

56. Օպերատորի ծրագիրը առնվազն ներառում է օպերատորի կողմից ներդրվող առևտրային, տեղեկատվական և այլ համակարգերի, դիմողի կազմակերպական կառուցվածքի, նրա կողմից կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ տեխնիկական միջոցների, ինչպես նաև դրանց տնտեսական ցուցանիշների մանրամասն նկարագրությունը: Ծրագիրը պետք է ներառի նաև օպերատորի գործունեության նպատակները, խնդիրները և միջոցառումները, կատարվելիք գործարքների վերաբերյալ կանխատեսումները, ցուցակումների կախատեսվող մակարդակը, կանխատեսվող հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի կանխատեսումը, կառավարման արդյունավետության ցուցանիշների կանխատեսումը (նշված կանխատեսումներն իրականացվում են առնվազն 3 տարվա կտրվածքով), ինչպես նաև ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը (նախորդ տարվա խնդիրների կատարողականի վերլուծությունը, խնդիրների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնական պատճառները):

57. Ծրագիրը կարող է օգտագործվել Կենտրոնական բանկի կողմից օպերատորի ռազմավարական կառավարման մակարդակը գնահատելու նպատակով:

ԳԼՈՒԽ 13. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

58. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող օպերատորը փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 օրվա ընթացքում Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում.

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 221-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փոփոխությունները,

2) օպերատորի գործունեության վայրի փոփոխությունը:

59. Ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման համաձայն:

60. Օպերատորը կանոնադրությունում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ օպերատորի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացված օպերատորի կնիքով,

2) օպերատորի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ օպերատորի կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) օպերատորի փոփոխված կանոնադրությունը (6 օրինակ), ընդ որում՝ կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված: Կանոնադրությունը պետք է լինի թելակարված, ընդ որում՝ կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն հավելված 11-ի:

61. Օպերատորի տարածքային ստորաբաժանման գործունեության վայրի փոփոխությունը գրանցելու համար սույն կանոնակարգի 60-րդ կետում նշված փաստաթղթերից բացի՝ Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև.

1) տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

2) օպերատորի կողմից գործածվող տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների և հուսալիության՝ սույն կանոնակարգի գլուխ 14-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը:

62. Կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում օպերատորի կանոնադրության գրանցման համար օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 60-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման ազդագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը:

63. Կենտրոնական բանկը պարտավոր է վերոհիշյալ փոփոխությունների գրանցման համար սույն գլխով սահմանված փաստաթղթերն ստանալու պահից 30-օրյա ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը: Փոփոխությունները գրանցվում են կամ դրանց գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ:

64. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել, բայց ոչ ավելի, քան մինչև կասեցումն ընկած օրերի և 30-օրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

ԳԼՈՒԽ 14. ՕՊԵՐԱՏՈՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

65. Օպերատորը պետք է ունենա.

1) սեփականության իրավունքով, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք,

2) կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց,

3) պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ),

4) էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներ, որոնցից մեկը պետք է լինի պահուստային: Հիմնական էլեկտրասնուցումը շարքից դուրս գալու դեպքում պետք է ունենա տեղային էլեկտրասնուցման աղբյուր (գեներատորներ, մարտկոցներ), որոնք բավարար են բնականոն գործունեության ապահովման համար՝ առանց տեղեկությունների և համակարգի ամբողջականությանը վնաս հասցնելու,

5) օպերատորի գործունեության ծավալին և բարդությանը համապատասխան առևտրային, տեղեկատվական և այլ համակարգեր,

6) տեղեկատվական համակարգերի (ներառյալ՝ հեռակոմունիկացիոն համակարգը) գործունեության հետ կապված խնդիրների լուծման նախապայմաններ (անհրաժեշտ է ապահովել այնպիսի տեղեկատվական համակարգ, որի էլեկտրաէներգիայի մատակարարման աղբյուրն անկախ լինի ընդհանուր մատակարարման աղբյուրից: Առևտրային, տեղեկատվական համակարգի անխափան գործունեությունը պետք է ապահովված լինի նաև համակարգչային և տվյալների բազայի՝ մեկ այլ համակարգի առկայությամբ),

7) պայմանների ապահովում, որոնց ներքո տվյալները մուտք են գործում տեղեկատվական համակարգ և վտանգի առկայության դեպքում տալիս են ազդանշան: Տվյալների օգտագործման պայմաններ (բոլոր տվյալները, որոնց մուտքը համակարգ թույլատրված է, պետք է մուտքագրվեն տվյալների բազա, և այն անձանց վերաբերյալ տվյալներ, որոնք այդ տվյալների համակարգ մուտքին հավանություն են տալիս),

8) պայմաններ, որոնք տեղեկատվական համակարգում կապահովեն տվյալների բազայի կանոնավոր ստեղծումը և դրանց 10 տարի ապահով պահպանումը շուկայի օպերատորի տարածքից դուրս,

9) կանոնավոր վերահսկողություն տեխնիկական և համակարգչային ծրագրերի համակարգերի գործունեության նկատմամբ (ժամանակին պետք է թարմացվեն առկա տեխնիկական և համակարգչային ծրագրերը):

Հավելված 1[*]

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում մշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՊ ԹԻՎ XXXX

ԼԻՑԵՆԶԻԱ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Իրավաբանական անձի անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____

Կ.Տ.

Տրված է՝ __ _____ 200_ թ.

Պետական տուրքը վճարված է՝ __ _____200_ թ.

** Պաշտոնական հրապարակման մեջ սույն Կանոնակարգի հավելվածների վերնագրերում սպրդել է տեխնիկական վրիպակ։*

Հավելված 2

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(կազմակերպության անվանումը (ֆիրմային անվանումը))

որոշում է կայացրել _____

(օպերատորի)

գործունեության լիցենզիա ստանալու համար դիմելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝__ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել օպերատորի գործունեության լիցենզիա:

Օպերատորի իրավասու մարմնի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները

_____ _____

_____ _____ 200_ թ.

Հավելված 3

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անձնական տվյալներ
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____
1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____ *(օր/ամիս/տարի)*
1.4. Ծննդավայրը _____
1.5. Քաղաքացիությունը _____
1.6. Անձնագրի համարը և սերիան, ում կողմից և երբ է տրված _____ Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում) _____
1.7. Հասցեն (մշտական և բնակության տվյալ պահին)
1.8. Հեռախոսահամար _____ 1.9. էլեկտրոնային փոստի հասցե _____
1.9. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը, ինչպես նաև նախկինում Ձեր ունեցած մյուս անձնագրերի սերիան և համարը . Անունը, ազգանունը, հայրանունը _____ Կրելու ժամանակաշրջանը _____ *(օր/ամիս/տարի)* Անձնագրի սերիան և համարը _____
2. Օպերատորի մասին տվյալներ, որի ղեկավար պետք է հանդիսանաք
2.1. Օպերատորի անվանումը _____
2.2. Գտնվելու վայրը _____
2.3. Հեռախոսահամար _____ 2.4. Ֆաքսի համար _____
ՀՀ օպերատորի ղեկավարի համար նշել նաև մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը:
3. Ղեկավար պաշտոնը
3.1. Առաջադրվող պաշտոնը _____
3.2. Արդյո՞ք նշանակված եք այդ պաշտոնում որպես ժամանակավոր պաշտոնակատար: Եթե «այո» նշել նշանակման ամսաթիվը: _____ *(օր/ամիս/տարի)*
3.3. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր դերը, իրավասությունները և պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար. *Դուք կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր մանրամասն նկարագիրը ներկայացնելու համար և կցել դրանք սույն հավելվածին:*

4. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նշված հիմքերի մասին.

Մեկնաբանությունների համար կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր

1) Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

2) Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

3) Արդյո՞ք Դուք ունեք օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան մասնագիտական որակավորում Այո ☐ Ոչ ☐

4) Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ և ունեք չմարված (չներված) պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

5) Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

6) Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

Նախկինում կամ ներկայումս ղեկավար հանդիսացող անձինք պետք է պատասխանեն նաև 7-ից 16-րդ հարցերին:
Նախկինում կամ ներկայումս նշանակալից մասնակցություն ունեցող անձինք պետք է պատասխանեն նաև 4.7-ից 9-րդ հարցերին

7) Արդյո՞ք ՀՀ տարածքում գործող օպերատորում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում օպերատորը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով օպերատորի ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

4.7. Արդյո՞ք այլ պետությունների օպերատորի կամ այլ ֆինանսական հաստատություններում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով օպերատորը կամ ֆինանսական այլ հաստատությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.9. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված հիմքերով: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.10. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով օպերատորի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում միտումնավոր կերպով խախտել եք օրենքները և այլ իրավական ակտերը: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.11. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով օպերատորի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում վարել եք անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել եք վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.12. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով օպերատորի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում կատարել եք այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով օպերատորը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐
4.13. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով օպերատորի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում կատարել եք անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են օպերատորի հաճախորդների շահերին: *«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները*	Այո ☐	Ոչ ☐

4.14. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով օպերատորի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում դրսևորել եք անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք Ձեր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ օպերատորի նկատմամբ ստանձնած պարտականությունների նկատմամբ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

4.15. Արդյո՞ք Դուք, հանդիսանալով օպերատորի ղեկավար, Ձեր պաշտոնավարման ընթացքում չեք կատարել Կենտրոնական բանկի հանձնարարականը կամ անտեսել եք Կենտրոնական բանկի նախազգուշացումը: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

5. Կրթություն, որակավորում
Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել իր ռեզյումեն, որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

5.1. Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Հիմնական առարկաները	Հաճախումների ժամանակաշրջանը (----թ-ից մինչև ----թ.)	Գիտական աստիճան

5.2. Ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում: _____

6. Աշխատանքային գործունեություն
Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել իր ռեզյումեն, որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

6.1. Աշխատանքային գործունեությունը

Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, երաշխավորողի անունը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտականությունները

6.2. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ օպերատորում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալներ, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Հասցե	Հեռախոս
1.			
2.			

7. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն
ԿԲ կողմից կարող են պահանջվել նաև 7.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:
Անհրաժեշտության դեպքում օգտագործեք լրացուցիչ թերթեր

7.1. Նշեք՝ արդյո՞ք օպերատորի կանոնադրական կապիտալում ունեք կամ ունեցել եք նշանակալից մասնակցություն:
Մասնակցությունները նշել՝ սկսած ներկայումս առկա ամենախոշորներից.

Կազմակերպության անվանումը	%	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումար (դրամով)
1.			
2.			

7.2. Նշեք այն օպերատորի անվանումը, որի կանոնադրական կապիտալում Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են նշանակալից մասնակցություն:
Մասնակցությունները նշել՝ սկսած ներկայումս առկա ամենախոշորներից.

Կազմակերպության անվանումը	%	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումար (դրամով)
1.			
2.			

7.3. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված՝ օպերատորում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները (եթե այդպիսիք կան).

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), փոխկապակցվածության տեսակը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Բնակության վայրը	Հեռախոսը՝
1.			
2.			

8. Դրամային (կամ այլ) պարտավորությունները

8.1. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ օպերատորի նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ)

8.2. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք կամ նախկինում ունեցել եք ՀՀ տարածքում գործող օպերատորի հանդեպ կամ այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ պարտավորություններ (ներառյալ՝ ժամկետանց պարտավորություններ): Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ)

9. Այլ տեղեկատվություն

9.1. Արդյո՞ք Դուք անցյալում դիմել եք Կենտրոնական բանկ ղեկավարի որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը մասնակցելու նպատակով: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել, թե որ ղեկավար պաշտոնների համար

9.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (բացառությամբ՝ կետ 7.3. կետում նշված անձանց).

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպում), փոխկապակցվածության տեսակը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Բնակության վայրը	Հեռախոսը
1.			
2.			

9.3. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գործունեության վայրը	Գտնվելու վայրը/ հեռախոսը
1.		
2.		

9.4. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

10. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Հավելված 4

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ (ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաբանական անձ հանդիսացող բաժնետերեր (մասնակիցներ)						
Ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը		Պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, կապի միջոցները	Բաժնետոմսերի (բաժնեմասի)		Բաժնետոմսերով (բաժնեմասով) հավաստվող ձայների	
			քանակը	տոկոսային մեծությունը	քանակը	տոկոսային մեծությունը
1						
2						
..						

Ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերեր (մասնակիցներ)						
Անունը, ազգանունը, բնակության վայրը		Անձնագրի սերիան և համարը	Բաժնետոմսերի (բաժնեմասերի)		Բաժնետոմսերով (բաժնեմասով) հավաստվող ձայների	
			քանակը	տոկոսային մեծությունը	քանակը	տոկոսային մեծությունը
1						
2						
…						

Հավելված 5

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՊԵՐԱՏՈՐԻ
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
---- թվականի թիվ --- որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ ---

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____

(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրի հասցեն)

_____

_____ օպերատորին առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____ _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

___ _____ 200 ____ թ.

Կ.Տ.

Հավելված 6ա

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ
ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

_____

(իրավաբանական անձի անվանումը)

որոշում է կայացրել _____

(օպերատորի անվանումը)

կանոնադրական կապիտալում ձեռք բերել նշանակալից մասնակցություն (ավելացնել մասնակցությունն այնպես, որ ձայնի իրավունք տվող մասնակցությունը կազմի 20 (50, 75) տոկոս (տոկոսից ավելի)):

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք նշանակալից մասնակցության նախնական համաձայնության ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ նշանակալից մասնակցության ձեռքբերման համար Ձեր նախնական համաձայնությունը:

_____

(իրավաբանական անձի տնօրենի անունը , ազգանունը)

_____

(ստորագրություն)

_____ _____ 200 ___թ.

Հավելված 6բ

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

_____

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

որոշում է կայացրել _____

(օպերատորի անվանումը)

կանոնադրական կապիտալում ձեռք բերել նշանակալից մասնակցություն (ավելացնել մասնակցությունն այնպես, որ ձայնի իրավունք տվող մասնակցությունը կկազմի 20 (50, 75) տոկոս (տոկոսից ավել)):

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք նշանակալից մասնակցության նախնական համաձայնության ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը: Առդիր՝ --- էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ նշանակալից մասնակցություն ձեռքբերման համար Ձեր նախնական համաձայնությունը:

_____

(ստորագրություն)

_____ _____ 200 թ.

Հավելված 7ա

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ (ՈՒՆԵՑՈՂ) ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավաբանական անձ- մասնակցի (կազմակերպության) տվյալներ

1.1. Անվանումը _____

1.2. Գտնվելու վայրը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)

1.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____
(օր/ամիս/տարի)

1.4. Օպերատորի անվանումը, որտեղ մասնակիցն ակնկալում է ձեռք բերել նշանակալից մասնակցություն. _____

2. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

2.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ *հատ* _____ *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ *հատ* _____ *%*

2.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) ձեռքբերման գինը _____

2.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ շուկայական արժեքը _____

3. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները

3.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

3.2. Նշեք ներդրման աղբյուրները՝
1.
2.
3.

3.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե բորսայի միջոցով), ապա նշեք.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/մասնակցության չափը (%)
1.		
2.		

4. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ
ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև 4.2 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

4.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Բաժնետոմսերի քանակը	Անվանական արժեքը (դրամով)
1.			
2.			

5. Տեղեկություններ կազմակերպության մասնակիցների վերաբերյալ
ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև 5.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

5.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

5.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք.

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

5.3. Այլ մասնակցություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձինք.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար), անձի անունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Գտնվելու/ բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

6. Տեղեկություններ կազմակերպության ղեկավարների (դիտորդ խորհրդի անդամ, գործադիր մարմնի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ
ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել, որ կազմակերպության ղեկավարների համար լրացվի նաև հավելված 3-ը

Անունը, ազգանունը, անձնագրի համարը սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)	Բնակության վայրը
1.			
2.			

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:

Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար), անձի անունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Գտնվելու/ բնակության վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

8. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր ակնկալիքները տվյալ ներդրումից

Եթե մեկնաբանությունների համար տեղը չի բավարարում, օգտագործեք լրացուցիչ թերթեր

9. Այլ տեղեկատվություն

9.1. Արդյո՞ք կազմակերպությունը նախկինում լրացրել է այս հարցաշարը: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել հարցաշարի լրացման ամսաթիվը

9.2. Արդյո՞ք կազմակերպությունն ունի 30 օր ժամկետանց/չմարված պարտականություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

9.3. Արդյո՞ք կազմակերպության մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐
«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

9.4. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր, տեղեկատվություն

10. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Տնօրենի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Կ. Տ.

Հավելված 7բ

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ (ՈՒՆԵՑՈՂ) ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ֆիզիկական անձ- մասնակցի տվյալներ

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի սերիան և համարը _____
Սոցիալական քարտի համարը _____
(առկայության դեպքում)

1.7. Բնակության վայրը (մշտական և բնակության տվյալ պահին)

1.8. Հեռախոսահամար _____ 1.9. Էլեկտրոնային փոստի հասցե _____

1.10. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը. _____

Անունը, ազգանունը, հայրանունը _____

Կրելու ժամանակաշրջանը _____ Անձնագրի սերիան և համարը _____
օր/ամիս/տարի

1.11. Օպերատորի անվանումը, որում մասնակիցն ակնկալում է ձեռք բերել նշանակալից մասնակցություն. _____

2. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

2.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ _____
հատ *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ _____
հատ *%*

2.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) վաճառքի գինը _____

2.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ հաշվեկշռային արժեքը

3. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները

3.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

4. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ
ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև 4.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

4.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Բաժնետոմսերի քանակը	Անվանական արժեքը (դրամով)
1.			
2.			

5. Կրթություն, որակավորում

5.1. Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Հաճախումների ժամանակաշրջանը (----թ-ից մինչև ----թ.)	Գիտական աստիճանը

5.2. Ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում _____

6. Աշխատանքային գործունեություն
Այս կետը լրացնելու փոխարեն թեկնածուն կարող է ներկայացնել ինքնակենսագրությունը (տպագիր և հայերեն), որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

6.1.Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա դրությամբ

Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, երաշխավորողի անունը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտականություն-ները

6.2. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ ֆինանսաբանկային համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անունը, ազգանունը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Բնակության վայրը	Հեռախոսը
1.			
2.			

7. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր դերը և պատասխանատվության ոլորտը որպես օպերատորի մասնակից
Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

8. Մանրամասնորեն նկարագրեք Ձեր ակնկալիքները տվյալ ներդրումից
Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

9. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:
Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

9.1. Փոխկապակցված անձինք, որոնք ունեն նշանակալից մասնակցություն այլ կազմակերպություններում.

Անձնագրի համարը
Սոցիալական քարտի համարը
Անուն, ազգանուն, փոխկապակցվածության տեսակ (առկայության դեպքում)

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

9.2. Նշեք Ձեզ հետ փոխկապակցված՝ օպերատորում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները.

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Փոխկապակցվածության տեսակը	Բնակության վայրը, հեռախոսը
1.			
2.			

9.3. Այլ փոխկապակցված անձինք.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար), անձի անունը, անձնագրի համարը սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Գտնվելու/ բնակության վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

9.4. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն օպերատորի նկատմամբ, որի կանոնադրական հիմնադրամում մտադիր եք ձեռք բերել նշանակալից մասնակցություն: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ)

9.5. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձը) ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող օպերատորի հանդեպ ժամկետանց պարտավորություններ: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները (գումար, ժամկետ, այլ)

10. Այլ տեղեկատվություն

10.1. Արդյո՞ք Դուք նախկինում լրացրել եք այս հարցաշարը: Այո ☐ Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել հարցաշարի լրացման ամսաթիվը

10.2. Արդյո՞ք Ձեզ մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐
«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

10.3. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

11. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 8

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները » կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ՉԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ _____

(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը,
իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

հայտարարում եմ, որ _____ում իմ մասնակցության
(օպերատորի անվանումը)

միջոցով որևէ այլ անձ օպերատորում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չեմ բերում:

Հավաստիացնում եմ, որ սույն տեղեկատվությունն արժանահավատ է: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևէ փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ փոփոխության օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
(օր/ամիս/տարի)

Հավելված 9

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Նշանակալից մասնակիցը

1. Անվանումը _____

2. Իրավաբանական անձի (կազմակերպության) տվյալներ

2.1. Անվանումը _____

2.2. Գտնվելու վայրը/ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)

2.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____
օր/ամիս/տարի

2.4. Կազմակերպության անվանումը, որում մասնակիցն ակնկալում է ձեռք բերել նշանակալից մասնակցություն. _____

3. Տեղեկություններ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության վերաբերյալ.

Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը	_____ *հատ*	_____ *%*
այդ թվում՝ ձայնի իրավունք տվող	_____ *հատ*	_____ *%*

4. Տեղեկություններ իրավաբանական անձի նշանակալից մասնակիցների վերաբերյալ

ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել 4.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք.

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար)	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

4.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք.

Անունը, ազգանունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

5. Տեղեկություններ կազմակերպության ղեկավարների (խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ

Անունը, ազգանունը, անձնագրի համարը սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)	Բնակության վայրը
1.			
2.			

6. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:

Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ (ռեզիդենտների համար), անձի անունը, անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)	Գտնվելու/ բնակության վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

7. Այլ տեղեկատվություն

7.1. Արդյո՞ք կազմակերպությունը նախկինում լրացրել է այս հարցաշարը: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել հարցաշարի լրացման ամսաթիվը

7.2. Արդյո՞ք կազմակերպությունն ունի 30 օր ժամկետանց/չմարված պարտականություններ: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

7.3. Արդյո՞ք կազմակերպության մոտ բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ի մասով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐

«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

8. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Կ. Տ.

Հավելված 10ա

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները » կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ես՝ _____

(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը,
իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

տեղեկացնում եմ, որ _____ -ի

(օպերատորի անվանումը)

կանոնադրական կապիտալում ձեռք եմ բերել նշանակալից մասնակցություն (ավելացրել եմ իմ մասնակցությունն այնպես, որ ձայնի իրավունք տվող մասնակցությունս 20 (50, 75) տոկոս է (տոկոսից ավելի է)՝ կազմելով ---------- տոկոս):

_____

(ֆիզիկական անձի համար՝ բնակության վայրը, կապի միջոցները, իրավաբանական անձի համար՝ գրանցման վայրը, կապի միջոցները)

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Հավելված 10բ

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01 Հավելվածի

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ես՝ _____
(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

տեղեկացնում եմ, որ իմ կողմից ձեռքբերված բաժնետոսերի (բաժնետոմսերի) օտարման արդյունքում _____ - ում
(օպերատորի անվանումը)
իմ՝ ձայնի իրավունք տվող մասնակցությունը նվազում է 10 (20, 50, 75) տոկոսից (10 և ավելի տոկոսով կամ դադարում եմ հսկել _____ -ը)՝
(օպերատորի անվանումը)
կազմելով _____ տոկոս:

_____
(ֆիզիկական անձի համար՝ բնակության վայրը, կապի միջոցները, իրավաբանական անձի համար՝ գրանցման վայրը, կապի միջոցները)

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 11

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները » կանոնակարգ 5/01 Հավելվածի

Համարակալված, կնքված և կարված է

_____ *(* _____ *) թերթ:*
Նշել թվերով *Նշել տառերով*

Իվ Լիցենզավորման ու գրանցման բաժնի պետ՝

_____ _____
անուն, ազգանուն *ստորագրություն*

վերահսկող՝

_____ _____
անուն, ազգանուն *ստորագրություն*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 713-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածները և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ««Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ուժը կորցրած ճանաչել 75.1, 75.7, 75.8, 75.9 և 111.1 կետերը.

2) 75.1.1 ենթակետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«75.1.1. Մասնագիտացված անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ընթացիկ հաշվետվություն՝ սույն կանոնագրքի 66.4-6ՄԱ ձևին համապատասխան:».

3) 75.2., 75.3, 75.4 և 75.5 կետերի «75.1 և 75.1.1 կետերում սահմանված ձևերի» բառերը փոխարինել «75.1.1 կետում սահմանված ձևի» բառերով.

4) 111.2, 111.3 կետերից հանել «, ի լրումն սույն կանոնագրքի 111.1 կետում սահմանված ձևերի,» բառերը.

5) 111.4 կետի «104.2-3/ԻԿԿ և 104.2-6/ԿԴ ձևերի» բառերը փոխարինել «104.2-6/ԿԴ ձևի».

6) 66.4-1ՄԱ ձևից հանել «75.1 կետի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունիսի 30-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
23 հունվարի 2008 թ., N 18-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին***

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, 20-րդ հոդվածների դրույթները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի ««Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը հաստատելու մասին» թիվ 240-Ն որոշմամբ հաստատված «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 16) կատարել հետևյալ լրացումները.

1. Կանոնակարգ 16-ի 9-րդ գլուխը լրացնել 50.1, 50.2 և 50.3 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«50.1. Այն դեպքում, երբ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունն ինքնուրույն է մշակել ծրագրային համակարգը, պետք է առկա լինեն՝

ա) հստակ մշակված տեխնիկական առաջադրանքը և պահանջները,

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.02.08 թ. (ՀՀԳՏ N8 (282), 17.03.08):
*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.08 թ. (ՀՀԳՏ N6 (280), 3.03.08):

բ) ծրագրային համակարգի մշակման մասնակիցների ցուցակը, մասնակիցների զբաղեցրած պաշտոնները և մասնագիտական կրթությունը,

գ) ծրագրի մշակման լեզուն, ինտերֆեյսը,

դ) ծրագրային կոդի գտնվելու վայրը,

ե) ծրագրային կոդի մեջ փոփոխություններ կատարելու հնարավորություններ ունեցող աշխատակիցների ցուցակը,

զ) թեստավորող խմբի անդամների ցուցակը, մասնագիտական որակավորումը, թեստավորման արձանագրությունը, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մնացած մասնակիցների ստորագրությունները,

է) այդ ծրագիրը օգտագործող ստորաբաժանումների աշխատակիցների՝ թեստավորմանը մասնակցությունը փաստող փաստաթղթերը,

ը) ծրագրային ապահովման օգտագործողների ուղեցույցը կամ այլ ուղղորդող գրքեր, փաստաթղթեր:

50.2. Այն դեպքում, երբ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ծրագրային համակարգը մշակվել է այլ կազմակերպության կողմից, պետք է առկա լինեն՝

ա) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից կիրառվող ծրագրային ապահովման վերաբերյալ տվյալ կազմակերպության և մշակող կազմակերպության միջև կնքված պայմանագիրը,

բ) ծրագրային համակարգը մշակող կազմակերպությանը ներկայացված հստակ տեխնիկական առաջադրանքը և պահանջները,

գ) նոր մշակված ծրագրային ապահովման թեստավորման արձանագրությունը և այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են թեստավորման արդյունքները, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մնացած մասնակիցների ստորագրությունները,

դ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության և ծրագրային ապահովումը մշակող կազմակերպության կողմից ստորագրված ընդունման-հանձնման ակտը,

ե) մշակող կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ հեղինակավոր աուդիտորական կազմակերպության եզրակացությունը,

զ) մշակող կազմակերպության՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխանությունը հավաստող վկայագիր կամ միջազգային հավաստագրման որևէ կազմակերպության կողմից մշակող կազմակերպությանը տրված վկայագիր կամ գրանցված որևէ ապահովագրական ընկերությունում ծրագրային համակարգի ապահովագրվածությունը փաստող փաստաթուղթ:

50.3. Սույն կանոնակարգի 50.2 կետում նշված դեպքում պետք է ապահովվեն ծրագրային ապահովման համար անհրաժեշտ հետևյալ կանոնները՝

ա) մշակող կազմակերպության կողմից ծրագրային ապահովման սպասարկման պայմանագրից հրաժարվելու դեպքում տվյալ կազմակերպությունը դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը տեղեկացնում է առնվազն 3 ամիս առաջ,

բ) համակարգի սպասարկման աշխատանքների հետ կապված հարցումների կատարման նվազագույն ժամանակահատվածի առկայություն,

գ) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը մշակող կազմակերպությունը տրամադրում է ծրագրային տեքստերը,

դ) մշակող կազմակերպությունը չի կարող որևէ անձնական օգտագործման «բեքդոր», այսինքն՝ հեռահար աշխատատեղից կամայական նպատակով ծրագրային համակարգ մուտքի հնարավորություն ունենալ,

ե) համակարգը մշակող կազմակերպության ստեղծած՝ գլխավոր ադմինիստրատորի գաղտնաբառը վերջնական գործարկումից և ծրագրի ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց անմիջապես հետո փոխվում է և փակ ծրարի միջոցով փոխված գաղտնաբառը հանձնվում է կազմակերպության գլխավոր տնօրենին,

զ) համակարգը մշակող կազմակերպությունը կազմակերպում է ուսուցում և (կամ) տրամադրում է համակարգի օգտագործման ձեռնարկներ,

է) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը (կամ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիազորած անձը) պետք է ունենա մոնիտորինգի իրականացման հնարավորություն մշակող կազմակերպությունում՝ պայմանագրի դրույթների ապահովման շրջանակներում (տեխնիկական անվտանգություն, ծրագրերի մշակման և թեստավորման գործընթաց և այլն),

ը) Կենտրոնական բանկին (պահանջի առկայության դեպքում) ծրագրային ապահովման տրամադրման հնարավորության վերապահում՝ անհրաժեշտ անվտանգության թեստավորումների իրականացման նպատակով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 փետրվարի 2008 թ., N 22-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, 20-րդ հոդվածների դրույթները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի ««Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ը հաստատելու մասին» թիվ 241-Ն որոշմամբ հաստատված «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 17) կատարել հետևյալ լրացումները.

1. Կանոնակարգ 17-ի 3-րդ գլուխը լրացնել 21.1, 21.2 և 21.3 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21.1. Այն դեպքում, երբ պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունն ինքնուրույն է մշակել ծրագրային համակարգը, պետք է առկա լինեն՝

ա) հստակ մշակված տեխնիկական առաջադրանքը և պահանջները,

բ) մշակման մասնակիցների ցուցակը, մասնակիցների զբաղեցրած պաշտոնները և մասնագիտական կրթությունը,

գ) ծրագրի մշակման լեզուն, ինտերֆեյսը,

դ) ծրագրային կոդի գտնվելու վայրը,

ե) ծրագրային կոդի մեջ փոփոխություններ կատարելու հնարավորություններ ունեցող աշխատակիցների ցուցակը,

զ) թեստավորող խմբի անդամների ցուցակը, մասնագիտական որակավորումը, թեստավորման արձանագրությունը, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մնացած մասնակիցների ստորագրությունները,

է) այդ ծրագիրը օգտագործող ստորաբաժանումների աշխատակիցների՝ թեստավորմանը մասնակցությունը փաստող փաստաթղթերը,

ը) ծրագրային ապահովման օգտագործողների ուղեցույցը կամ այլ ուղղորդող գրքեր, փաստաթղթեր:

21.2. Այն դեպքում, երբ պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության ծրագրային համակարգը մշակվել է այլ կազմակերպության կողմից, պետք է առկա լինեն՝

ա) պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության կողմից կիրառվող ծրագրային ապահովման վերաբերյալ տվյալ կազմակերպության և մշակող կազմակերպության միջև կնքված պայմանագիրը,

բ) ծրագրային համակարգը մշակող կազմակերպությանը ներկայացված հստակ տեխնիկական առաջադրանքը և պահանջները,

գ) նոր մշակված ծրագրային ապահովման թեստավորման արձանագրությունը և այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են տեստավորման արդյունքները, տեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մնացած մասնակիցների ստորագրությունները,

դ) պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության և ծրագրային ապահովումը մշակող կազմակերպության կողմից ստորագրված ընդունման-հանձնման ակտը,

ե) մշակող կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ հեղինակավոր աուդիտորական կազմակերպության եզրակացությունը,

զ) մշակող կազմակերպության՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխանությունը հավաստող վկայագիր կամ միջազգային հավաստագրման որևէ կազմակերպության կողմից մշակող կազմակերպությանը տրված վկայագիր կամ գրանցված որևէ ապահովագրական ընկերությունում ծրագրային համակարգի ապահովագրվածությունը փաստող փաստաթուղթ:

21.3. Սույն կանոնակարգի 21.2 կետում նշված դեպքում պետք է ապահովել ծրագրային ապահովման հետևյալ կանոնները՝

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հունվարի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.02.08 թ. (ՀՀԳՏ N6 (280), 3.03.08):

ա) մշակող կազմակերպության կողմից ծրագրային ապահովման սպասարկման պայմանագրից հրաժարվելու դեպքում տվյալ կազմակերպությունը պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությանը տեղեկացնում է առնվազն 3 ամիս առաջ,

բ) համակարգի սպասարկման աշխատանքների հետ կապված հարցումների կատարման նվազագույն ժամանակահատվածի առկայություն,

գ) պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությանը մշակող կազմակերպությունը տրամադրում է ծրագրային տեքստերը,

դ) մշակող կազմակերպությունը չի կարող որևէ անձնական օգտագործման «բեքդոր», այսինքն՝ հեռահար աշխատատեղից կամայական նպատակով ծրագրային համակարգ մուտքի հնարավորություն ունենալ,

ե) համակարգը մշակող կազմակերպության ստեղծած գլխավոր ադմինիստրատորի գաղտնաբառը վերջնական գործարկումից և ծրագրի ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց անմիջապես հետո փոխվում է և փակ ծրարի միջոցով փոխված գաղտնաբառը հանձնվում է պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության գլխավոր տնօրենին,

զ) համակարգը մշակող կազմակերպությունը կազմակերպում է ուսուցում և (կամ) տրամադրում է համակարգի օգտագործման ձեռնարկներ,

է) պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունը (պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության լիազորած անձը) պետք է ունենա մոնիտորինգի իրականացման հնարավորություն մշակող կազմակերպությունում՝ պայմանագրի դրույթների ապահովման շրջանակներում (տեխնիկական անվտանգություն, ծրագրերի մշակման և թեստավորման գործընթաց և այլն),

ը) Կենտրոնական բանկին (պահանջի առկայության դեպքում) ծրագրային ապահովման տրամադրման հնարավորության վերապահում՝ անհրաժեշտ անվտանգության թեստավորումների իրականացման նպատակով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 փետրվարի 2008 թ., N 23-Ն

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՓԵՏՐՎԱՐ 2008)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի մարտի 4-ի նիստի «2008 թվականի մարտ ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի (բացառությամբ արտաքին առևտրի), դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում: Դրամավարկային ցուցանիշները և ՀՀ միջազգային պահուստները հաշվարկված են հաշվեգրման սկզբունքով:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կրտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.CBA.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2008 թվականի մարտ ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստի արձանագրություն 194

Իրական հատվածի ցուցանիշներ 198

Պետական բյուջեի ցուցանիշներ 201

Արտաքին հատվածի ցուցանիշներ 202

Դրամավարկային ցուցանիշներ 204

Ֆինանսական շուկա 215

Վարկային ներդրումներ 234

Առևտրային բանկերի ավանդներ 245

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 247

Վճարահաշվարկային համակարգ 251

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(04.03.2008)

2008 թվականի մարտ ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2008 թվականի մարտի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը, Ա. Նորեկյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից մարտ ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչև մարտն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների զարգացումների և ապագա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:

Գնաճ

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2008 թվականի փետրվարին արձանագրվել է 1.1% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 7.5%՝ 0.9 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ տարվա վերջին արձանագրված մակարդակից: Գնաճը հիմնականում պայմանավորվել է փետրվարի ընթացքում բուժսպասարկման և մշակույթի ծառայությունների սակագների, ինչպես նաև ամսվա վերջին տասնօրյակում կենդանական և բուսական յուղեր, շաքարավազ և մսամթերք ապրանքախմբերի գների աճով: Պարենային ապրանքների գները փետրվարին ավելացել են 0.6%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.5%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ 2.3%-ով:

Արտաքին միջավայր

2008 թվականի փետրվարին արտաքին հատվածը շարունակել է նոր գնաճային ճնշումներ առաջացնել ներքին տնտեսության համար: Գրեթե բոլոր հումքային ապրանքների գների մակարդակները գերազանցել են կանխատեսումները: Նավթի միջազգային գները՝ պայմանավորված հիմնականում աշխարհաքաղաքական զարգացումներով, փետրվարին գերազանցել են 100 ԱՄՆ դոլար՝ բարելի դիմաց հոգեբանական սահմանագիծը ինչպես Նյու Յորքում գնանշվող Light Sweet տեսակի համար, այնպես էլ Լոնդոնում գնանշվող Brent տեսակի համար:

Նմանօրինակ իրավիճակ է գրանցվել նաև արդյունաբերական և թանկարժեք մետաղների շուկաներում: Պղնձի գինը կրկին գերազանցել է 8000 ԱՄՆ դոլար՝ տոննայի դիմաց մակարդակը՝ նախորդ ամսվա 7000 ԱՄՆ դոլարի համեմատ, իսկ ոսկու գները 945 ԱՄՆ դոլար՝ ունցիայի դիմաց՝ նախորդ ամսվա առավելագույն մոտ 930 ԱՄՆ դոլարի համեմատ:

Գնաճային ճնշումները շարունակել են դրսևորվել նաև պարենային ապրանքների շուկաներում, ինչն ամենամեծ ազդեցությունն ունի Հայաստանի սպառողական գների ինդեքսի վրա: Հացահատիկի գները աճող պահանջարկի և պաշարների նվազման, ինչպես նաև Ղազախստանի կողմից մարտի 1-ից արտահանման սահմանափակումների մասին լուրերի հետևանքով փետրվարի վերջին Չիկագոյի ապրանքահումքային բորսայում գերազանցել են բուշելի դիմաց 12 ԱՄՆ դոլարը, մինչդեռ հունվարի միջինը կազմել էր 10.1 ԱՄՆ դոլար: Գների էական աճ է գրանցվել նաև շաքարավազի շուկա-

յում. Նյու Յորքում մինչև 16 ԱՄՆ ցենտ ֆունտի դիմաց՝ նախորդ ամսվա միջին 13.7 ցենտի փոխարեն[1], իսկ բրնձի շուկայում երկու խոշոր արտադրողներ՝ Հնդկաստանը և Թաիլանդը, սահմանափակումներ են դրել բրնձի արտահանման վրա[2]:

Ֆինանսական շուկաներում նույնպես ԱՄՆ դոլարի արժեզրկումը գերազանցել է սպասումները՝ փետրվարի վերջին անցնելով 1.5 ԱՄՆ դոլար եվրոյի դիմաց սահմանագիծը, իսկ բրիտանական ֆունտը կրկին գերազանցել է 2 ԱՄՆ դոլար ֆունտի դիմաց մակարդակը: Դրա պատճառը հիմնականում տոկոսադրույքների ձևավորվող սպասումներն են: ԱՄՆ ֆեդերալ պահուստային համակարգի կողմից մարտին ևս 50 բազիսային կետով տոկոսադրույքների կրճատման սպասումների պարագայում Եվրոպական կենտրոնական բանկի տոկոսադրույքներն ամենայն հավանականությամբ դեռևս կմնան անփոփոխ[3]:

Այս ամենն էապես ավելացնում է արտաքին միջավայրից բխող բարձր գնաճային ճնշումների ռիսկը, և իրադարձությունները նման կերպ զարգանալու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կվերանայի արտաքին միջավայրի կանխատեսումները, որոնք գնաճի կանխատեսումները կփոփոխեն աճի ուղղությամբ:

Իրական հատված

2008 թվականի հունվարին շարունակել է արձանագրվել տնտեսական աճի բարձր ցուցանիշ՝ կազմելով 9.9%: Ընդ որում, ինչպես նախորդ տարի, այս տարի ևս այն արձանագրվել է ծառայությունների և շինարարության ճյուղերում ավելացված արժեքի բարձր աճի շնորհիվ, մինչդեռ արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը չեզոք ազդեցություն են ունեցել տնտեսական աճի վրա:

Արդյունաբերության թողարկման ծավալները նվազել են 0.1%-ով՝ պայմանավորված լեռնահանքային արդյունաբերությունում արձանագրված նվազմամբ, ինչը ժամանակավոր բնույթ ունի՝ կապված որոշ տեխնիկական հանգամանքների հետ: Ի տարբերություն դրան՝ աճ է արձանագրվել սննդի արդյունաբերության և շինանյութերի արտադրության ենթաճյուղերում:

Շինարարության ճյուղում արձանագրվել է աննախադեպ բարձր՝ շուրջ 80% աճ՝ պայմանավորված բնակարանային շինարարության ավելացմամբ, ինչը մի քանի բնակելի շենքերի շահագործման հանձնման արդյունք է: Աճ է արձանագրվել նաև մշակող արդյունաբերության և կապի ճյուղերում ընթացող շինարարության գծով:

Ծառայությունների ոլորտում շարունակվել է նկատվել կայուն իրական աճ՝ շուրջ 9.4%, որը, ինչպես և նախորդ տարում, պայմանավորվել է մանրածախ առևտրի, կապի և ֆինանսական ծառայությունների ծավալների ավելացմամբ:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա մակարդակի շրջանակներում է, ընդ որում՝ բուսաբուծության ենթաճյուղում արձանագրվել է փոքր աճ, մինչդեռ անասնապահության թողարկման ծավալները պահպանվել են նախորդ տարվա հունվարի մակարդակին:

Ամփոփենք՝ տնտեսության ճյուղային զարգացումների հունվարի փաստացի ցուցանիշները բավարար չեն տնտեսական աճի կանխատեսված ցուցանիշները փոփոխելու համար:

Համախառն պահանջարկ

Մասնավոր հատվածի սպառման և ներդրումների փաստացի ցուցանիշները 2007 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ են: Այս պայմաններում 2008 թվականի առաջին եռամսյակի միտումների վերլուծության և կանխատեսումների ճշգրտման համար բավարար հիմքեր չկան: Նախկին գնահատումների համաձայն՝ մասնավոր ներդրումների աճը առաջին եռամսյակում կկազմի 16.0%, իսկ մասնավոր սպառմանը՝ 9.5%:

